

ОБРАЗОВАНИЕ

ЧИТАЮЩИХ

НУЖНО БЫТЬ

ЗБРАЧНЫМ



ՀՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

525
Հ-98

Վ. Ն. ԼՎՈՎ

ԽՍՀՄ-ՀԵՂ Ե 1961 թ.

ԻՆՉՊԵՍ Ե ԾԱՎԵԼ
ՅԵՐԿԻՐԸ

ՅԵՐԿԻՐԸ ԿԵՐԱՏԵԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ, ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Պ. Ա. Բ. Ե Ա Գ Ո Յ Ի



ՎԵՏՏՎԱՆ

8696406

1940

А-⁵
14411

Б. ЛЬВОВ
КАК РОДИЛАСЬ
ЗЕМЛЯ

Артиз ССР, Ереван, 1940

Տ. ԱԱՐՄԻՆԻՐ, ԴԵՂԻՆ ՅԵՎ, ՍՊՈՒՑԱԿ ԱԱՑԴՅՐԻ, ԱՐԿՑՈՒՐ ՅԵՎ,
Գ.ԵԴԱԱ, Ի՞ՆՉ ՄՆ ԱԱՑԴՅՐԸ, ԻՆՑՈՒ ՅԵՎ ՆՐԱՆԿ ՓՈՒՐՐԸ,
ԿԱՑԵՐ ԲԱՌԱՄ, Վ.ԱՐԴԱԱՆ ՄՆ ՀԵՑՈՒ ՆՐԱՆԿ ՅԵՐԿՐԸ:
Վ.ԱՐԴԱԱՆ Ն ՄԵԽ ԱՐԵՎԱԾ ՅԵՐԿՐԸ ՀԱՄԵՄԱՑՈՒԹԵԱՄՄԻ
ԱԱՑԴՅՐԻ ՄԵՋ ԿԱՆ ԱՎԵԼԻ ՄԵԽԵՐԸ, ԴԱՆ ՄԵՐ ԱՐԵՎԱԾ

Հայացք ձգեք պարզ յերկնքի վրա, ուր ցըլած
են պայծառ փայլուն աստղերը: Վոսկեփայլ շողով
ոլսպղում են նրանք ձեր գլխի վերև ամբողջ կույտե-
րով: Բայց դիտեցէք նրանց ավելի ուշադիր և դուք
կնկատեք, վոր նրանք բոլորը նույն փայլը չունեն:
Վորոշ աստղեր ավելի պայծառ են, մյուսները ավելի
խավար:

Միատեսակ չեն նաև նրանց դույնը: Ահա ձեր ա-
ռաջ մի պայծառ աստղ, վոր շողազում և վորոշակի
կարմիր ցոլքով: Ահա մի այլ աստղ. սա ավելի պայ-
ծառ ե, բայց սրա փայլը վոչ թե կարմիր ե, այլ սովորակ:
Վերջապես կան շատ աստղեր, վորոնշ փայլը
վոչ սպիտակ ե, վոչ ել կարմիր, այլ դեղին: Ուրեմն
հիշեք, վոր աստղերը լինում են սպիտակ, դեղին և
կարմիր: Ամենից քիչ կարմիրներն են, և դուք նրան-
ցից շատ չեք գտնի յերկնքի վրա: Յես կողնեմ ձեզ
դանել նրանցից մեկը:

Նայեք 1 նկարին: Դուք տեսնում եք նրա վրա-
յոթ աստղ, վոր գասավորված են կոթ ունեցող կաթ-
սայի ձևով: Այդ աստղերը կոչվում են Մեծ Արջ: Յե-
թե դուք լավ հիշեք նրանց դասավորությունը մեկը
յյուսի նկատմամբ, ապա հեշտությամբ կգտնեք նրանց
յերկնքի վրա ուշ յերեկոյան, կամ գիշերը: Նրանցից
յերեք ձախ ծայրի աստղերը (կաթսայի կոթը կաղմաղ)
միացնող գծի շարունակության վրա դուք կգտնեք վո-

բոչ ապարածության վրա շատ պայծառ մի աստղ: Արան
կոչում են Արկառուր: Ավելի ուշադիր դիտենք նրան, և
դուք կնկատեք, վոր նա շողջողում ե վորոշակի կարմ-
բավուն ցոլքով: Նկատեք միայն, վոր ձմեռը նա
թագնված ե լինում հորիզոնի տակ:

Սպիտակ և դեղին աստղեր անհամեմատ ավելի
շատ կան: Սակայն հասարակ աչքով հեշտ չե տարբե-
րել աստղերի գույնը: Դուք վոչ միշտ և վոչ ամեն մի
աստղի նկատմամբ կարող եք ասել, թե նա ինչ գույ-
նի յե: Նրանց գույնը ավելի հեշտ ե վորոշել հեռա-
դիտակներով, վորոնք պատրաստվում են յերկինքը
դիտելու համար: Բայց հասարակ աչքով ել մենք կա-
րող ենք գտնել վորոշ աստղեր, վորոնց մասին համոզ-
ված կարելի յե ասել, թե ինչ գույնի յեն նրանք: Յես
ցույց կտամ ձեզ, թե ինչպես պետք ե գտնել մի պայ-
ծառ սպիտակ աստղ:

Նկատե՞լ եք դուք արդյոք մի սպիտակ շերտ, վոր
մութ գիշերները լայն գոտու ձեռվ պատում ե ամբողջ
յերկինքը: Այդ սպիտակ շերտը կոչվում ե հարդագողի
նամապարհ: Մի տեղում այդ շերտը բաժանվում ե յեր-
կու ճյուղի: Յեվ ահա այստեղ, ուր նա ճեղքվում ե
յերկու մասի, փոքր ինչ հեռու կա մի շատ պայծառ
աստղ, վոր կոչվում ե Վեգա: Ամառը, ուշ յերեկո-
յան, նա լինում ե ուղիղ մեր գլխի վերելը: Վեգան
յերկինքի ամենապայծառ աստղերից մեկն ե և ունի
փայլուն սպիտակ գույն:

Բայց ինչի՞ց են առաջանում աստղերի տարբեր
գույները: Ի՞նչ և նշանակում աստղի գույնը: Ի՞նչ և
նա ցույց տալիս:

Նախ քան այդ հարցին պատասխանելը, յես պետք
ե հարցնեմ ձեղնից՝ իսկ գիտե՞ք դուք, արդյոք ինչ
բաներ են աստղերը, այդ անթիվ փայլուն կետերը,
վոր ծածկում են գիշերային ու յերկինքը:

Մի ժամանակ մարդիկ կարծում եյին, վոր այդ
յերկնային կրակները բոլորը կտած են մի ընդհանուր

կամարի և նրա հետ միասին պատվում են Յերկրի շուրջը:

Բայց այժմ մենք դիմենք, վոր այդ բոլորը հեքի-աթներ են: Աստղերը կպած չեն յերկնակամարին, այլ ցըլած են յերկնային տարածության մեջ Յերկրից տարբեր հեռավորության վրա. Նրանցից մի քանիսը մեզ ավելի մոտ են, մյուսներն ավելի հեռու:

Մակայն ի՞նչ են ներկայացնում աստղերը և ին-չի՞ց և կախված նրանց փայլը: Մենք այժմ դիտենք, վոր ամեն մի աստղ՝ դա արև ե, նույնպես պայծառ և կուրացնող արև, ինչպիսին լուսավորում ե մեզ ցե-րեկը:

Բայց ինչու աստղերը մեզ թվում են այնքան փոքր, այնքան աննշան կետեր: Այն պատճառով, վոր նրանք դատնվում են մեզնից հսկայական տարածության վրա: Իհարկե, դուք դիտեք, վոր ամեն մի առարկա, յերբ մենք նայում ենք նրա վրա հեռվից, թվում ե մեզ շատ ավելի փոքր, քան իրականումն ե: Յեկ վորքան հեռու յե նա մեզնից, այնքան ավելի փոքր ե թվում մեզ:


Իսկ աստղերը մեզնից այնքան հեռու յեն գտնը-վում, վոր նույնիսկ մտքով դժվար ե պատկերացնել այդ տարածությունները: Նրանք այնքան հեռու յեն, վոր հարկավոր կլիներ միլիոնավոր և հարյուր միլիո-նավոր տարիներ՝ նրանցից մի քանիսին հասնելու հա-մար, թեկուզ ամենաարագընթաց գնացքով: Բայց և այնպես մենք տեսնում ենք նրանց շողչողալը, վորով-հետև նրանք անբնական վիթխարի մեծություն ունեն: Նրանք այնքան մեծ են, վոր նրանցից շատերը նույ-նիսկ իրենց մեծությամբ գերազանցում են մեր: Արե-մեց:

Բայց արդյո՞ք մեր Արեը այնքան մեծ ե: Այո, նա այնքան հսկայական ե, վոր նրա համեմատու-թյամբ ամբողջ մեր Յերկերը, նրա վրա ապրող բո-լոր մարդկանցով, մի փոքրիկ, չնչին ավազահատիկ ե: Հարկավոր ե վերցնել 1300000 մեր Յերկրի նման դըն-

ուեր, վորպեսզի ստացվի մէ Արև։ Կարո՞ղ եք դուք պատկերացնել, թե դա ինչ ե նշանակում։

Յերևակայեցեք, վոր դուք ունեք մի դավաթ, վորտեղ կարելի յե լցնել 10 հազար հաճարի հատիկ։ Դույլը տանում և 10 այդպիսի գավաթ։ Ուրեմն, նրա մեջ կարող են տեղավորվել 100 հազար հատիկ։ Վերցնենք 13 այդպիսի դույլ, մինչև ծայրը լցրած հաճարի հատիկներով։ Դատարկենք հապա այդ բոլոր դույլերի հատիկները և մի մեծ կույտ կազմենք։

Այժմ դրեք նրա կողքին մի առանձին հատիկ։ Այդ հատիկը ամբողջ կույտի համեմատությամբ կլինի նույնը, ինչ վոր Յերկերը Արևի համեմատությամբ։



Նկ. 1. Մեծ Արջը և Արկտուրը

Ահա թե վորքան մեծ և Արևը համեմատած Յերկերի հետ։ Իսկ աստղերի մեջ կան այնպիսիները, վորոնք բազմաթիվ անգամ մեծ են մեզ Արևից։ Բայց Արևը անհամեմատ մոտ ե մեզ, քան մյուս բոլոր աստղերը։ Ճեղքնթաց դնացքով 300 տարում կարելի կլիներ հասնել Արևին, իսկ աստղերին հասնելու համար հարկավոր կլիներ դնալ միլիոնավոր և հարյուր միլիոնավոր տարիներ։ Ահա թե ինչու Արևը յերեսում և մեղ վորպես չկացած հրե շրջան; իսկ աստղերը, թեև նրանք ավելի մեծ են, թվում են մեղ փոքրիկ փայլուն կետեր։

Տ. ԽԵԶԻՑ ԵՆ ԿԱԶՄՎԱՆՆ ՄԵՐ ԱՐԵՎԱԾ ՅԵՎ, ՄՅՈՒՄ ԱՍՏԳԵ-
ՐԵ, ԽԵԶԻՑ Ե ԿԱԶՄՎԱՆՆ ԱՍՏԳԵՐԵՐԻ ԴՈՒՇԵՐ, ԿԱԲՐՄԻՐ, ԴԵ-
ԳԻՆ ՅԵՎ, ՍՊԻՅԱԼ ԾԻԿԱՅՈՒՄ, ԱՍՏԳԵՐԵՐ ՅԻՆՔ ԻՐԵՆԵ
ՀԱՅԱԿԻ, ԽԵԶ ՏԱՅԱՆ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԱՍՏԳԵՐԸ ՅԵՐԻՑԱՍՈՐՄ
ԺԱՄՄԵՐՆ ԵՆ ՅԵՎ, ԽԵԶԳԵՍ ԵՆ ԴԱՅՆՈՒՄ ՀԱՅՈՒՆԱՅՄ
ՅԵՎ, ՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՋԱՆՈՒՄ, ՀԱԿԱ-ԱՍՏԳԵՐՄ ՅԵՎ, ԹՋՈՒ
ԱՍՏԳԵՐ, ԽԵԶԳԻՄ ԱՍՏԳԵՐԻ ԾՈՐԳԻՆ Ե ՊԱՏԱՅԱՅՈՒՄ
ՄԵՐ ԱՐԵՎԱԾ ՅԵՎ, ԽԵԶ ՀԱՅԱՆ ՈՒՆԻ ՆԱ.

Բայց ի՞նչ բան ե մեր Արևը: Ինչի՞ց ե նա կադ-
մըլած: Յեվ ինչո՞ւ յե նրա փայլը այնքան պայծառ,
այնքան կուրացնող, զոր մենք չենք կարողանում ան-
դամ նայել նրա վրա, առանց վտանգի յենթարկելու
մեր տեսողությունը: Վորտեղի՞ց ե ստացվում այն
ջերմությունը, վորը նա հաղորդում ե Յերկրին, և
առանց վորի Յերկրի վրա չեր կարող գոյություն ու-
նենալ վոչ մի կյանք:

Արևը պատկերանում ե մեր առաջ վորպես յիկա-
ցած հրե շրջան: Բայց իրականում նա վոչ թե շրջան
ե, այլ մի հսկայական գումզ: Մենք արդեն տասցինք,
վոր Արևը 1300000 անգամ մեծ ե յերկրագնդից: Յեվ
յեթե Արևից պոկլի մեր Յերկրի մեծության չափ մի
կտոր, նա նկատելի կերպով չի փոքրանա: Դա կլիներ
նույնը, ինչ վոր մի ամբողջ կույտ հատիկներից վերց-
նելինք մի փոքրիկ հատիկ:

Բայց ինչի՞ց ե կազմված Արևը: Հոծ կրակից:
Դա մի անեղք հրե ծով ե, վոր անբնհատ շաշում ու
ալեկոծվում ե ավելի ուժգին, քան հաղարավոր յերկ-
րային մրրիկներ:

Գիտնականները այժմ լավ ուսումնասիրել են Ա-
րեվի բաղադրությունը, նրանք դիտեն, վոր Արևի
վրա կա և յերկաթ, և պղինձ, և մի շարք այլ մետաղ-
ներ, վորոնցից կան Յերկրի վրա, բայց Արևի ուժնդ
ջերմությունից այդ բոլոր մետաղները վոչ միայն
հալված են, այլ և զոլորչի յեն դարձել: Ահա թե
վորքան մեծ ե Արևի տաքությունը¹⁾:

1) Արեգակի մասին ավելի մանրամասն կարելի յե կարգակ նույն հե-
ղինակի հետեւյլ գըտերում. Շնչ բան է Արեգակը և Շնչակն իմացուն
Արեգակի հազմությունը

Սակայն չե՞ն վոր մենք գիտենք, վոր ամեն մի աստղ նույնպես արև է: Ուրեմն, ամեն մի աստղ նույնպիսի շիկացած հրե զունդ է, ամեն մի աստղ ներկայացնում է ալեկոծվող հրե ծովլ, վորի մեջ սարսափելի տաքությունից նույնիսկ ամենածանր մետաղները դոլորչիանում են: Բայց աստղերը անհամեմատ ավելի հեռու յեն մեղնից, քան Արեւ: Այդ պատճառով նրանք մեզ թվում են վոչ թե հրե գնդեր, այլ փոքրիկ փայլուն կետեր: Վորոշ աստղեր ավելի խոշոր են, մյուսները ավելի մանր. մի քանիսը ավելի մոտ են մեզ, մյուսները ավելի հեռու: Այդ պատճառով ել նրանց փայլն ել տարբեր է. մի քանիսն ավելի պայծառ են, մյուսները թույլ:

Բայց ինչի՞ց ե կախված, կրկին կհարցնենք մենք, աստղերի տարբեր գույնը: Քիչ առաջ պատմածից հետո մեզ համար ավելի հեշտ կլինի հասկանալ այդ:

Դուք գուցե յերբենիցե տեսել եք, կամ լսել եք ուրիշներից, ինչպես են շիկացնում մետաղները: Յեթե պողպատի կտորը շատ ուժեղ շիկացնենք, նա սկսում է փայլել մթնում: Սկզբում նրա փայլը թույլ ել լինում: Հետաքայում ավելի ուժեղ շիկացումից առաջանում է կարմիր գույն. սա կոչվում է կարմիր շիկացում: Յեթե շիկացնենք ավելի ուժեղ, պողպատը սկսում է դեղին լույս արձակել. սա դեղին շիկացումն է: Յեթե որանից հետո ել շարունակենք շիկացումը, դեղին գույնը անհետանում է և պողպատը սպիտակ փայլ ետանում. սա ամենառուժեղ՝ սպիտակ շիկացումն է:

Եեվ ընդհակառակը, յերբ այդ սպիտակ շիկացման աստիճանի հասցրած պողպատը սկսում է սասել, նրա փայլը նորից դառնում է դեղին և ապա կարմիր:

Նույնը չե՞ն, արդյոք, ներկայացնում է աստղերը: Նրանցից ամենից ավելի շիկացածները, վորոնց ջերմությունն առանձնապես մեծ է, փայլում են կուրացնող սպիտակ, կամ կապտավուն-սպիտակ լույսով: Ուրիշ աստղեր, վորոնց ջերմությունն ավելի պակաս է,

իմայլում են զեղին գույնով։ Իսկ կարմիր աստղերը՝
նրանք են, վորոնց ջերմությունն ավելի քիչ եւ։

Առաջներում դիտնականները կարծում եյին, վոր
սպիտակները ամենաբարձր ջերմության տեր աստղերն
են և միաժամանակ ամենայերիտասարդները։ ղեղին-
ները նրանք են, վորոնք արդեն իրենց նախկին ջերմու-
թյան մի մասը կորցրել են և այդ պատճառով սկսել են
ծերանալ, իսկ կարմիրները ավելի ևս սառած և արդեն
ծերացած աստղեր են։

Սակայն նորագույն հետազոտությունները ապա-
ցուցել են, վոր զա այնքան ել ճիշտ յեւ։ Այժմ աստղա-
բաշխները նոր տվյալների հիման վրա ահա թե ինչ
յեղբակացության են յեկել։ Ամեն մի աստղ իր գոյու-
թյան առաջին շրջանում ավելի ու ավելի ուժեղ և բո-
ցավառվում։ Սկզբում նա դառնում է կարմիր աստղ։
Այդ կարմիր աստղը բաղկացած է շատ թեթե, նոսր
նյութից և աչքի յեւ ընկնում հսկայական ծավալով։
Այդպիսի կարմիր աստղը կոչվում է հսկա-աստղ։
Նա դեռ չունի շատ բարձր ջերմաստիճան, վորպիսին
զարգանում և նրա մեջ հետազում, բայց նա թվում
է շատ պայծառ, վորովհետեւ չափազանց մեծ է։

Խնչպես ամեն մի տաք. մարմին, այս կարմիր հըս-
կա աստղը իր ջերմության մեծ մասը շտրունակ ճա-
ռազայթում և յերկնային տարածության մեջ, բայց
սկզբում նա դրանից չի սառչում։ Շնորհիվ նրա
բաղկացուցիչ մասնիկների փոխադարձ ձգողականու-
թյան, նա հետզհետեւ սեղմվում և ավելի ու ավելի
խտանում։ Իսկ սեղմվելով նա ավելի ուժովին և բոցա-
վառվում և նրա տաքությունն ավելանում է։

Յեկ ահա կարմիր աստղը դառնում և զեղին։ Այս
զեղին աստղը դեռևս շատ մեծ է։ Նա դեռ շարունա-
կում և մնալ հսկա-աստղ։ Նա չի դադարում սեղմվե-
լուց և խտանալուց, դրանից նրա ջերմությունն ան-
ընդհատ ավելանում ու ավելանում է։

Անցնում են միլիոնավոր տարիներ, ղեղին աստղը
հասնում է իր ամենաբարձր ջերմությանը և դառնում

և սպիտակ աստղ։ Այժմ նրա ծավալն ավելի փոքր ե, քան առաջ, յերբ նա կարմիր կամ դեղին եր։ Այժմ ել զեռ նա շարունակում ե սեղմվել և խտանալ, բայց զալիս ե մի ժամանակ, յերբ նա արդեն զաղարում և ուժեղ բոցավառվելուց, վրա յե հասնում այն ժամանակը, յերբ նրա ներսում զարգացող ջերմությունն այլևս չի լրացնում ջերմության այն կորուստը, վոր նա ունենում ե ճառագայթացման հետևանքով։ Յեկ աստղը սկսում ե կամաց-կամաց սառել և սեղմվել։

Դա կատարվում ե շատ դանդաղ։ Անցնում են մի-իննավոր տարիներ և սպիտակ աստղը, կորցնելով իր չերմության մի մասը, կրկին զառնում ե զեղին։ Բայց այդ սեղմված և խտացած զեղին աստղը նկատելի կերպով ավելի փոքր ե, քան այն դեղին աստղը, վոր նա ներկայացնում եր առաջ, իր դոյության առաջին ըլանում։

Դեղին աստղը շարունակում ե դանդաղ կերպով սառչել և ելի միլիոն տարիներից հետո դառնում է կարմիր։ Այս կարմիր աստղը շատ անզամ ավելի փոքր ե սկզբնական կարմիր աստղից։ Այժմ արդեն նըրան կոչում են վոչ թե հսկա, այլ թղուկ։

Յեկ այսպիսով մենք տեսնում ենք, վոր աստղերն ունեն իրենց հասակը։ Վորոշ աստղեր բոլորովին յերիտասարդ են, մյուսները միջին հասակի տեր, յերրորդները մոտենում են ծերության հասակին, չորրորդներն արդեն բոլորովին ծերացել, զառամյալ են դարձել։ Ամենայերիտասարդ հասակում, կամ, այսպես ասած՝ յերիտասարդության ժամանակ, աստղը լինում ե կարմիր, հսկա։ Պատանեկության ըրջանում նա դառնում ե զեղին աստղ— զեղին հսկա։ Իր ծաղկման բարձր առտիճանին և ամենասուժեղ փայլին նա հաօնում ե, յերբ դառնում ե սպիտակ։ Դրանից հետո նա սկսում ե ծերանալ։ Նրա փայլը հետզհետեւ պակասում ե և նա դառնում ե զեղին, բայց արդեն ակրն-հայտ փոքր ծավալով։ Իսկ ծերության ժամանակ նա դառնում ե կարմիր-թղուկ։

Այսպիսով, կարմիր և դեղին աստղերը կարելի յերաժանել յերկու խմբի՝ հսկաների և թզուկների: Կարմիր հսկաները ամենայերիտասարդ աստղերն են, կարմիր թզուկները՝ ամենածեր: Դեղին հսկաները յերետասարդ աստղեր են, դեղին թզուկները՝ դեպի ծերություն գնացողները:

Բայց մեր Արևը նույնպես աստղ ե:

Ապա ի՞նչ գույնով ե նա փայլում և վո՞ր հասակն և ապրում:

Եեթե մենք կարողանայինք Արևից շատ և շատ հեռանալ և այդ անսահման հեռալից նայելինք նրա վրա, նա մեզ կթվար փոքրիկ փայլուն աստղ, և այդ աստղը կցոլար դեղին փայլով: Արևը, ինչպես ասում են դիտնականները, դեղին աստղ ե: Բայց նա արդեն վոչ թե յերիտասարդ հսկա-աստղ ե, այլ սեղմված, արդեն համեմատաբար սառած և դեպի ծերություն գնացող թզուկ աստղ:

Բայց մի՞շտ ե արդյոք Արևը յեղել դեղին աստղ: Վոչ. ինչպես և ամեն մի աստղ, նա կրել ե շատ փոփոխություններ: Իր գոյության անսահման յերկար ժամանակվա ընթացքում նա անցել է զարգացմանայն բոլոր աստիճանները, վորոնցով անցնում են և մյուս աստղերը: Նա սկզբում կարմիր, ապա դեղին հսկա յեցել և, վերջապես, հասել է իր ամենաուժեղ փայլին, յերբ գարձել ե սովիտակ աստղ: Բայց անցնում ե նորից անսահման յերկար ժամանակ և, հետզհետե կորցնելով իր փայլը, նա դառնում ե այն դեղին աստղը, ինչպիսին մենք տեսնում ենք նրան այժմ:

Բայց սրանով գործը չի վերջանա:

Միլիոնավոր տարիների ընթացքում, վոր նա դեռ ապրելու յե, նա դանդաղ կերպով, բայց անդապար ավելի ու ավելի կկորցնի իր ուժը և, վերջապես, կդառնա կարմիր թզուկ:

Յեկայդպես, ամեն մի աստղ, այդ թվում և մեր Արևը, ունի իր հեռու անցյալը:

Իսկ ի՞նչ ե սպասում նրանց հեռու ապադայում,

բազմաթիվ միլիոնավոր տարիներ հետո: Ի՞նչ կլինի
Տեր Արքի և ամեն մի այլ աստղի հետ, յերբ նրանք
կորցնեն իրենց ամբողջ լույսը:

Չպե՞տք ե նրանք արդյոք բոլորովին մարեն: Իսկ
ի՞նչ կդառնան նրանք այն ժամանակ:

Չիսոնք այդ մասին յենթադրաբար: Դիմենք ա-
վելի լավ ե յերկնքին: Սկսենք ուշադիր հետազոտել
յերկինքը և այն ժամանակ մենք կիմանանք այդ
գաղանիքը: Մենք կիմանանք, թե ինչ ե դառնում ա-
մեն մի աստղ, ամեն մի արև, յերբ նրանք կորցնում են
իրենց ամբողջ փայլը, իրենց ամբողջ լույսը:

Յ. ԱՆԵՍԻՐ. Ա.ՍՊՂ.ՆՐ. ԸՆԿՆՈՂ. Ա.ՍՊ- Ղ.ՆՐ ԿԱՄ ՄՈԼՈՐԱՆԵՐ

Ուշադրություն դարձրե՞լ եք դուք յերբեմիցե այն
բանի վրա, թե շարժվո՞ւմ են արդյոք աստղերը, թե
միշտ նույն տեղումն են մնում: Նայեցեք յերկնքին
մութ գիշերով: Ճիշտ չե՞ արդյոք, վոր նա ներկայաց-
նում ե մի անշարժ սառած տեսարան, սև դաշտ՝ և
նրա վրա անշարժ չողացող կետեր: Բայց իրո՞ք նրանք
բոլորովին անշարժ են: Նայեցեք ավելի յերկար, մի՞՛
ինայի ժամանակը, և դուք կտեսնեք, վոր այդպես
չե՞:

Դուք կնկատեք այն ժամանակ, վոր աստղերն ել
ճիշտ այնպես, ինչպես Արևն ու Լուսինը, շարժվում են
յերկնակամարի վրա արևելքից արևմուտք: Բայց
նրանք շարժվում են այնպես, վոր նրանց մեջ յեղած
բոլոր տարածությունները մնում են անփոփոխ: Ճիշե-
ցեք մի քանի աստղ: Նկատեցեք նաև, թե ինչպես են
նրանք դասավորված մեկը մյուսի նկատմամբ և ինչ տա-
րածության վրա յեն գտնվում իրարից: Այդ դեպքում
դուք կհամոզվեք, վոր նրանց փոխադարձ դասավորու-
թյունը յերբեք չի փոխվում: Կարծես թե նրանք բո-
լորը իսկապես կպած լինեն մի յերկնակամարի և նրա
հետ միասին շարժվելիս լինեն արևելքից արևմուտք:

Ահա թե ինչու գիտնականները դեռ շատ վաղուց ան-
մանել են աստղերին անշարժ լուսատուներ:

Միք շփոթի միայն իսկական աստղերի հետ, այս-
պէս կոչված, ընկնող աստղերը: Դուք, իհարկե, շատ
անզամ եք տեսել նրանց, յերբ նայել եք յերկնքին:
Դուք տեսել եք, թե ինչպես հանկարծ անշարժ աստ-
ղերի մեջ գլորվում ե մի փայլուն կետ, հետքից կրա-
կի դիմ թողնելով: Գլորվում, շողում և և նորից ան-
հետանում: Թեև մենք ասում ենք, թե աստղ ընկալ,
բայց դա, իհարկե, իսկական աստղ չեւ:

Ընկնող աստղերն ուղղակի վոչ շատ մեծ մասնիկ-
ներ են, վորոնք մեծ քանակությամբ և հոկայական
արագությամբ ուշանում են յերկնային տարածության
մեջ: Յերբ այդպիսի մի մասնիկ ընկնում ե մեր Յեր-
կիրը շրջապատող ողի մեջ, նա այնպես և զարնվում
այդ ողին, վոր վայրկենապես շիկանում և բոցավառ-
վում ե: Բայց նա իսկույն այրվում և մոխիր և դառ-
նում, մեծ մասամբ չհասնելով Յերկրին: Այդ մաս-
նիկները գիտնականներն անվանում են մետերիներ:
Մետերիների մեծ մասը շատ փոքր ծավալ ունի—սի-
սեռի չափ, և նույնիսկ ավելի փոքր: Այդպիսի մաս-
նիկներն ամբողջապես այրվում են ողում: Բայց յեր-
րեմն մետերին այնքան մեծ և լինում, վոր ամբողջո-
վին չի այրվում և նրա մի մասն ընկնում ե Յերկրի
վրա, վորպես մետերային քար կամ մետերիտ: Մե-
տերիտները հավաքվում և պահվում են թանգարան-
ներում: Նրանցից մի քանիսը լինում են խոշոր մե-
ծության և բացառիկ դեպքերում նրանց քաշը լինում
ե վոչ միայն մի քանի կիլոդրամ, այլ և մի քանի
տոնն:

Եւվ այսպես, մենք աստղերն անվանում ենք
անշարժ, վորովհետև նրանք միշտ պահպանում են
միևնույն տարածությունը միմյանց մեջ: Բայց ար-
դյո՞ք բոլոր աստղերն են իսկապես անշարժ: Զկա՞
այստեղ վորեւ բացառություն: Վորպեսզի պատաս-
խանինք այս հարցին, նայենք յերկնքին: Նրա մեջ

փնտռենք այս հարցի պատասխանը։ Յեթե կան այդ-
պիսի շարժվող աստղեր, չե՞նք կարող մենք ինչներս
գտնել նրանց։

Իսկապես, ով ուշադիր դիտել է յերկինքը, նա
կդանի այնտեղ մի քանի այնպիսի աստղեր, վորոնք
չեն մնում նույն տեղում, այլ փօխում են իրենց դիր-
քը մյուս աստղերի մեջ։ Տեսե՞՛, եք դուք, արդյոք,
մի կարմիր պայծառ աստղ, վոր կոյզվում և Մարս։
Նա այնքան փայլում ե և գույնն այնքան պայծառ
կարմիր, վոր դուք նրան հեշտությամբ կհիշեք և
կտեսնեք յերկնքում, յեթե ձեզ գոնե մեկ անգամ
նրան ցույց տան։

Ճիշտ ե, նա յերեսում ե վոչ միշտ։ Յեվ հենց դրա-
նով ել նա տարբերվում ե մյուս աստղերից։ Դիտեցեք
նրան, յերբ նա յերեսում ե յերկնքում։ Դուք կնկատեք,
վոր նա ոկզրից յերեսում ե մի խումբ աստղերի մեջ,
իսկ մի առ ժամանակ անց, փոխադրվում ե ուրիշների
ժուա։

Տարորինա՛կ աստղ ե։ Նա կարծես թե դեղերում
ե յերկնքի վրա։ Բայց միայն Մարսը չե, վոր այդպիսի
աստղ ե։ Կա նաև մի այլ փայլուն դեղերող աստղ, վոր
կոչվում ե Յուպիտեր։ Նա միշտ չի յերեսում։ Բայց
յերբ նա յերեսում ե յերկնքում, նրան կարելի յե տես-
նել տարբեր տեղերում։ Նրա դիրքը մյուս աստղերի
մեջ անընդհատ փոխվում ե։

Ցույց տամ ձեզ ևս մի դեղերող աստղ։ Նկատե՞լ
եք դուք, արդյոք, շատ պայծառ մի աստղ, վոր փայ-
լում ե յերկնքում յերեկոյան, Արեւ մայր մտնելուց
անմիջապես հետո և առավոտյան Արեւ ծագելուց մի
քիչ առաջ։ Այդ փայլուն աստղն անվանում են յերե-
կոյան, կամ առավոտյան աստղ, նայած թե յերբ և
նա յերեսում։ Իսկ գիտնականները նրան Վեներա յեն
կոչում։ Այս աստղը նույնպես յերկնքում միենույն
տեղում չի լինում, այլ փոխում ե իր դիրքը մյուս
աստղերի մեջ։

Կան և որից այդպիսի դեղերող աստղեր։ Բայց

Նրանց դժմվար ե դտնել յերկնքում հասարակ աչքով։ Իսկ դիտնականները լավ դիտում են նրանց հեռազիտակով։ Այսպես են կոչվում այն խոշոր և բարդ պակիներով դիտակները, վլորոնք պատրաստվում են յերկնքը դիտելու համար։ Բայց այդ դեպքերող աստղերից մի քանիսը յերկում են նաև հասարակ աչքով։ Դիտող մարդկեկ և, մանավանդ, դիտնականները ճանաչում ենին նրանց գեռ հին դարերում, յերբ զոյսություն չուներ վոչ մի հեռազիտակ։ Հին հույներն անվանեցին այդ աստղերը պլանետներ (մոլորակներ), վոր նրանց լեզվով նշանակում ե օղեզրող աստղեր։

Հնում գիտնականները, բացի Մարսից, Յուլիոսե-
րից և Վեներայից, գիտեյին միայն յերկու մոլորակ,
վորոնք կոչվեցին Սատուրն և Մերկուրի: Իսկ հետա-
գայում, յերբ հարվեց հեռադիտակը, աստղաբաշխ-
ները գտան ևս յերկու մեծ մոլորակներ (Ուրան և
Նեպտոն) և մի շարք մանր: Իսկ բոլորովին վերջերս,
1930 թվին, գտնվեց ելի մի նոր, առաջներում ան-
հայտ, մեծ մոլորակ՝ Պլոտոն: Բայց բոլոր այդ մո-
լորակները հասարակ աչքով տեսանելի չեն. Նրանց
կարելի յէ տեսնել միայն հեռադիտակով:

Տ. ԽԵԶԿ, ՄԵ ՏԱՐԱԲՈՒԺԻՄ ՄԱԼԱՐՎԱՆԵՐԸ ԱՅՑԵՐԻՆ;
Լ.ՉՈՒՆԻ ՓԱԿՆԵՐԸ ԵՎԿ, ՎԵՆԵՐԱԾԻ ՓԱԿՆԵՐԸ, ԽԵ ԼԱԽԵՎԱԾ,
ՄԵ ՓԱԾՈՂՆ ԼՈՒԽՆԸ ԵՎԿ, ՄՅՈՒՆ ՄԱԼԱՐՎԱՆԵՐԸ

Սակայն ել ինչո՞վ են տարբերվում դեպերող աստ-
դերը, կամ մոլորակները անշարժ աստղերից։ Յեթև
գուք համեմատեք Մարսը, կամ Յուպիտերը՝ վորեե
անշարժ տասղի հետ, կնկատեք, վոր աստղերը առ-
կայծում և շողշողում են, իսկ մոլորակները փայլում
են խաղաղ լույսով։ Նրանք չեն առկայծում։


Հասարակ աչքով այլևս վոչ մի տռանձին բան դուք չեք նկատի: Բայց յեթե դուք կարողանայիք նա-
յել մոլորակի վրա հեռաղիտակով, դուք կտեսնեայիք
նոր և այն ել շատ զարգանալի բանեք: Դժբախտաբար
ձեզ թերեւս միշտ չի հաջողվի հեռաղիտակով նայել:

յերկնքին։ Այդ պատճառով յես կպատմեմ ձեզ, թե
ինչպես են յերևում մոլորակները գիտնական-աստղա-
բաշխներին, յերբ նրանք ուսումնասիրում են այդ մո-
լորակները հեռաղիտակով։

Յեթե հեռաղիտակն ուղղենք դեպի անշարժ աստ-
ղերը, նրանք ելի՛ մնում են նույն փոքրիկ փայլվող
կետերը, ինչպես յերևում են հասարակ աչքով։ Վոր-
քան ել ուժեղ լինի հեռաղիտակը, աստղը միայն ավե-
լի պայծառ ե թվում. բայց նրա մեծությունը բոլո-
րովին չի փոխվում։

Իսկ յեթե հեռաղիտակով նոյենք մոլորակին, նա
յերևում ե միանգամայն վորոշակի, վորակես փոքրիկ
փայլուն շրջանակ։ Մոլորակի այդ փոքրիկ փայլուն
շրջանակը (որինտկ, Մարսի, կամ Յուպիտերի) զար-
մանալի կերպով հիշեցնում ե Լուսնի փայլուն և լուսա-
վոր շրջանը, կամ, ինչպես ասում են, սկավառակը։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր մոլորակների
և Լուսնի մեջ գոյություն ունի մեծ նմանություն։ Յեզ
Մնչպես շինի այդ նմանությունը, քանի վոր Լուսինն
ինքը նույնպես մոլորակ է։ Զե՞րվոր նա նույնպես փո-
խում ե իր տեղը աստղերի մեջ, նույնպես դեպերում ե
յերինքում։



Նկ. 2. Հեռաղիտա-
կով դիտվող մոլորա-
կը թվում ե մեծացած,
այնինչ շրջապատող
աստղերը մեծացած
չեն։

Իսկ այժմ լիս ձեզ ցույց կտամ,
վոր Լուսնի և մյուս մոլորակնե-
րի միջև լեղած նմանությունն ա-
վելի մեծ ե, քան թվում ե տառ-
ջին հայացքից։

Դուք լավ գիտեք, վոր Լուսի-
նը միշտ միևնույն տեսքը չունի։
Մենք նրան տեսնում ենք մերթ
լրիվ փալուն շրջանի ձևով, մերթ
կիսաշրջանի ձևով, մերթ բարակ
լեղջլուրի ձևով։

Նրա ձեմ այդ վուկովնությունները կոչվում են նրա փուլերը:

Բայց դարմանալի բան: Յերբ աստղաբաշխները հեռադիտակով զննում են Վեներա մոլորակը, նրանք տեսնում են նրան նույնպես տարբեր ձևերով: Նա յերեվում ե մերթ՝ լրիվ փայլուն կլորակի ձևով, մերթ կիսաշրջանի և մերթ բարակ յեղջյուրի ձևով: Կնշանակի վեներան, ինչպես Լուսինը, ունի իր փուլերը:

Ինչի՞ցն ե առաջանում այդ: Ինչո՞ւ Լուսնի և Վեներայի միջև գոյություն ունի այդպիսի մեծ նմանություն: Առաջին հերթին տեսնենք ի՞նչ բան ե մեր Լուսինը, ի՞նչ և ներկայացնում նա և ինչո՞ւ յերեվում մեզ տարբեր ձևերով:

Պատկերացրեք մի պայծառ, լուսնկա գիշեր: Լուսնի փայլուն սկավառակը այնպիսի պայծառ: Լույս ե սփոռում, վոր նրա առջև դալկանում ու խավարում են աստղերը: Յեվ թվում ե, վոր այդ փայլուն շրջանից այնքան լույս ե թափվում Յերկրի վրա, վոր յերբեք չես կասկածի, թե այդ լույսը Լուսնի սեփականը չե, այլ փոխառած ե: Մինչդեռ այդ լուսավոր փայլուն լուսինը չունի իր լույսը:

Նա նույնպիսի սառը և մութ գունդ ե, ինչպեսինն ե և մեր Յերկրիրը: Նրա վրա չկա և վոչ մի կըրակ, լույսի վոչ մի սեփական աղբյուր:

Բայց ինչո՞ւ յե այդ գեղագում նա փայլում: Վորտեղի՞ց ե վերցնում նա այն լույսը, վորը տալիս ե մեր Յերկրին: Նա փայլում ե, վորովհետեւ նրան հեռվից լուսավորում ե Արեւը: Յեվ այդ իսկ արեգակնային լույսը նա արտացոլում ե, անդրադարձնում ե իրենից:

Նկատե՞լ եք դուք, թե ինչպես մայր մանող Արեւը լուսավորում ե ձեր դիմացի տան պատուհանների աղակինները: Այն ժամանակ թվում ե, վոր նրանք փայլում են իրենց սեփական լույսով: Բայց դա միայն թվում ե: Իրականում նրանք միայն արտացոլում են իրենցից

այն լույսը, վոր գցում են նրանց վրա Արևի ճառագայթները:

Նույնը կատարվում է և Լուսնի հետ: Նա ինքը ինչպար է, ինչպես մեր Յերկիրը: Բայց Արևը գցում է նրա վրա իր լույսը՝ և այդ լույսը նա արտացոլում է իրենից: Այդ պատճառով ել նա թվում է մեզ փայլուն սկավառակ, կամ շրջան:



Նկ. 3. Վեներայի փռվերը

Բայց ինչի՞ց են առաջանում նրա փռվերը: Ինչու նա մեզ մերթ լրիվ է յերևում, մերթ վորպես կիսալուսին, մերթ յեղջյուրի ձևով: Ահա թե ինչու յետեղ ունենում այդ:

Լուսինը, ինչպես և Յերկիրը, դունդ է: Այդ գունդը գարձած է դեպի մեզ, դեպի մեր Յերկիրը միշտ միևնույն կողմով: Այդ պատճառով մենք տեսնում ենք Լուսնի միայն մեկ կողմը, և վոչվոք չդիտե, թե ինչ ե գանվում նրա մյուս կողմում: Բայց Լուսինը վոչ միայն պատվում է Յերկը չորս բոլորը, այլև Յերկի հետ միասին թռչում է Արևի շուրջը: Այդ ժամանակ Լուսինը դեպի Արևն և գանձում իր տարրեր կողմերով: Արևը նրա մերթ մի կիսազունդն է լուսավորում, մերթ մյուս: Յեվ վորքան մեծ ելինում դեպի:

մեղ նայող լուսավորված կիսադունդը, այնքան Լուսնի մեծ մասն ենք մենք տեսնում:

Եեթե Արեւը լուսավորում ե հենց Լուսնի այն մասը, վոր մեղ և նայում, մենք տեսնում ենք լրիվ կողք Լուսինը: Եեթե Արեւը լուսավորում ե մեղ դարձած կողմի կեսը և հակառակ կողմի կեսը, այն ժամանակ մենք տեսնում ենք նրան կիսաշրջանի ձևով: Իսկ յեթե Արեւը լուսավորում ե գլխավորապես հակառակ կողմի կիսադունդը. և մեր կողմի կիսազնդի միայն մի նեղ շերտը, մենք տեսնում ենք միայն մի նեղ, փայլուն յեղջյուր: Վերջապես, յեթե մեր կողմի կիսադունդը բոլորովին չի լուսավորվում Արեւից, Լուսինը մեղ համար մնում ե անտեսանելի:

5. ՅԵՐԿԱՐԸ, ԽԵԶԿԵՍ ԵՎԱ ՄՅԱՒԹ ՄՅԱՎՐՈՎԱՆԵՄԸ, ՓԱՅԼՈՒՄ Ե ՅԵՐԿԱՐԸՆ ՏԱՐԱՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դուք արդեն գիտեք, վոր Վեներա մոլորակը, ինչպես և Լուսինը, ունի իր փուլերը: Դիտնականները հեռադիտակով նրան նայելիս, տեսնում են նրան մերթ փայլուն շրջանակի ձևով, մերթ կիսաշրջանի ձևով, մերթ բարակ յեղջյուրի ձևով: Այժմ մեղ հասկանալի յե, թե ինչ ե դրա պատճառը: Վեներան ունի սեփական լույս: Վորքան ել դա տարորինակ չթվա, այդ պայծառ աստղը, վոր յերկնքի ամենապայծառ աստղերից մեկն ե, չունի իր սեփական լույսը: Դա վոչ թե շիկացած լուսատու աստղ—արև ե, այլ մութմիգունդ, Յերկրագնդի և Լուսնի նման:

Վեներան փայլում ե վոչ թե սեփական լույսով, այլ ինչպես և Լուսինը, արտացոլում ե իրենից այն լույսը, վոր դցում ե նրա վրա Արեւը: Նա շատ պայծառ ե թվում, վորովհետեւ մոտ ե գտնվում Արեւին և Արեւը նրան շատ ուժեղ ե լուսավորում:

Արեւը, ինչպես Լուսնի, այնպես ել Վեներայի միայն այն մասն ե լուսավորում, վորը դարձած ե իր կողմը: Իսկ վորովհետեւ նրա լուսավորված մասը միշտ դեպի մեղ չի դարձած, ապա մենք տեսնում ենք նրան



Նկ. 4. Ցերկվադնողի տեսքը Լուսնից

տարբեր ձեւքով։ մերթ վորպես յեղջուր, մերթ իիւ-
սադնդի և մերթ լրիվ դնդի ձեռվ։

Իսկ ի՞նչ են ներկայացնում մյուս մոլորակները,
որինակ, Մարսը. նրանք միայն թվում են մեզ պայծառ
փայլում աստղեր, բայց նրանք չունեն սեփական
լույս։ Նրանք նույնպիսի մութ գնդեր են, ինչպես մեր
յերկրագունդը և Լուսինը։ Նրանք փայլում են և թը-
վում են պայծառ և լուսավոր, վորովհետեւ արտացո-
լում են իրենցից արեգակնային լույսը։

Մենք ասում ենք, վոր բոլոր այդ մոլորակները
մեր յերկրագնդի նման խավար գնդեր են։ Բայց ինչ-
պե՞ս։ Մենք լավ տեսնում ենք, վոր մեր Յերկիրը վու-
թե լուսավոր ե, այլ մութ։ Սակայն մենք տեսնում
ենք նաև, վոր Լուսինը, Վեներան, Մարսը փայլում են
յերկնքում։ Ասենք թե նրանք չունեն իրենց լույսը։
Ասենք. թե նրանք փայլում են Արենից արտացոլված
լույսով։ Համենայն դեպք նրանք փայլում են և նրանց
փայլը նույնիսկ ավելի պայծառ ե, քան շատ ուրիշ
աստղերինը։ Հապա ինչո՞ւ յե մեր Յերկիրը բացա-
ռություն կազմում։ Ինչո՞ւ նա ել չի փայլում։

Դուք յերեսի շատ կզարմանաք, յեթե յես ասեմ,
վոր մեր Յերկիրը նույնպես փայլում ե յերկնային
տարածության մեջ։ Եթե մենք կարողանայինք նայել
Յերկիրի վրա անսահման հեռվից, որինակ, Լուսնի
վրայից, մենք կտեսնեյինք յերկնքում մեր մեծ փայ-
լուն շրջան՝ Յերկիրի սկավառակը։

Բայց Յերկիրն անհամեմատ մեծ ե Լուսնից։ Այդ
պատճառով Յերկիրի այդ փայլուն սկավառակը Լուս-
նից պիտի յերեւա շատ ավելի մեծ, քան Լուսինն ե մեղ
յերեսում։

Պատկերացրեք ձեզ միայն, թե ինչ լավ զիշերներ կլի՛
նեյին Լուսնի վրա, յերբ նրան լուսավորեր Յերկիրի
լրիվ սկավառակը, անհամեմատ ավելի պայծառ, քան
Լուսինն ե, բայց Յերկիրը Լուսնի վրայից միշտ լրիվ
լուսավոր սկավառակի ձեռվ չի յերեսում։ Յերեմն
նա այնտեղից յերեսում ե կիսագնդի ձեռվ, յերբեմն

յեղջյուրի: Կնշանակե, Յերկիրը, ինչպես և Լուսինը, ունի իր փուլերը: Սակայն այնտեղից նրանց դիտող չկա: Լուսնի վրա կենդանի եյակներ չկան:

Մենք տեսնում ենք, վոր և՛ Լուսնի, և՛ Յերկիրի, և՛ Վեներայի և՛ մյուս մոլորակների միջև շատ նմանություն կա: Նրանք բոլորը սառն, մութ գնդեր են: Նրանք չունեն իրենց լույսը, ինչպես Արեր և աստղերը: Նրանք բոլորը փայլում են արտացոլված արեգակնային լույսով:


Բայց կարելի յե հարցնել՝ ինչո՞ւ Լուսինը թվում ե այնքան մեծ, իսկ մյուս մոլորակները այնքան փոքր, վոր նրանց հեշտ ե շփոթել անշարժ աստղերի հետ: Դա բացատրվում է շատ հասարակ: Լուսինը գտնվում է մեզ շատ ավելի մոտ, քան մյուս մոլորակները: Իրականում նա շատ ավելի փոքր և և՛ Վեներայից, և՛ Մարսից, և՛ Յերկիրից: Իսկ Յուպիտերի համեմատությամբ նա բոլորունին փոքրիկ ե, վորովհետև Յուպիտերը հայտնի յե առանձնապես հըսկայական ծավալով: Դա մոլորակներից ամենամեծն ե:

« ԱՍՏԵՐԸ ՅԵՎ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ, ՅԵՐԿԻՐԸ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՓՈՐԻՒՆ ԱՍՑԴ ՆՐ, ԻՈՒՈՐ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ ԵՎ ԵԵՂՅԻ, ԵՎ ԱՍՑԴՆՐ

Մենք այժմ խմացանք, վոր գոյություն ունեն յերկու տեսակ յերկնային լուսատուներ: Մի քանիսը չողշողում են սեփական փայլով: Սրանք շիկացած հրեարեներ են: Անհամար շիկացած աստղերից ամեն մեկը այդպիսի հրեա արև:

Մյուս յերկնային լուսատուները չունեն իրենց սեփական լույսը: Սրանք խավար, սառն գնդեր են, վորոնք փայլում են միայն այն պատճառով, վոր արտացոլում են արեգակնային լույսը: Խյալիսին են բոլոր մոլորակները, կամ դեգերող աստղերը:

Հապա ի՞նչ կապ կա այդ ինքնալուսատու արեների կամ աստղերի մեջ մի կողմից և մութ յերկնային մարմինների, կամ մոլորակների մեջ՝ մյուս կողմից:



Նկ. 5. Արեդակնային համակարգությունը

Մենք արդեն գիտենք, վոր ամեն մի աստղ իր կյանքի բազմամիլիոն տարիների ընթացքում սկզբում ավելի ու ավելի ուժեղ բոցավառվում ե, իսկ հետո սկսում են թուլանալ և հետզհետեւ կորցնել իր լույսն ու ջերմությունը: Կուրացնող սպիտակ աստղից նա դառնում ե ավելի պակաս ջերմություն ունեցող դեղին աստղ, իսկ հետո ավելի սառչելով՝ դառնում ե կարմիր թղուկ-աստղ:

Իսկ ի՞նչ կլինի հետո, յերբ այդ կարմիր աստղն ավելի ևս սառչի: Այն ժամանակ նա կղաղարի ասաղ լինելուց: Նա արտաքուստ կծած կմի արդեն կեղեռվ և կղառնա խավար մոլորակ: Թող նրա ներսում դեռ ալեկոծմի բոցը, արտաքուստ նա կխավարի և կկորցնի իր սեփական լույսը:

Պարզվում ե, վոր աստղերի և մոլորակների միջև գոյություն ունի ազգակցություն: Աստղը հենց վոր սառչում ե, դառնում և մոլորակ: Ամեն մի մոլորակ մի ժամանակ աստղ ե յեղել: Յեզ մեր Յերկերը, այդ փոքրիկ մոլորակը, վոր պտտվում և Արևի շուրջը, միշտ այդպիսի սառն, ամուր մարմին չե յեղել, ինչպիսին հիմա յե: Կար ժամանակ, յերբ նա արտաքուստ դեռ ծածկված չեր սառն, ամուր կեղեռվով: Այն ժամանակ նրա վրա չկար վոչ սար, վոչ քար, այլ նա ամբողջովին միապաղաղ մի ալեկոծող հրե ծով եր ներկայացնում: Նա շողում եր յերկընքում, վորպես փոքրիկ փայլուն աստղ և ուներ նույն կազմությունը, ինչ վոր Արևը, այսինքն բաղկացած եր թեթև, չիկացած գաղերից: Հետո այդ թեթև գաղային նյութը խտացավ և դարձավ հրահեղուկային: Իսկ ժամանակի ընթացքում, յերբ նա ավելի սառեց, այդ հրահեղուկ մասսան սկսեց սառչել դըրսից և հետզհետեւ ամբողջ յերկրագնդի շուրջը գոյացավ պինդ կեղեւ: Նախկին փոքրիկ փայլուն աստղը առաջվա նման ել չեր շողում յերկնքում: Նա կորցրեց իր նախկին փայլը և դարձավ մի փոքրիկ, խավար մոլորակ:

Այդպիսի վիճակ են ապրել մեր արեգակնային համակարգության նաև մյուս մոլորակները։ Նրանք բոլորը պատվում ենին կենտրոնական Արևի շուրջը, վորպես այլ վիճակը արևներ։ Բայց ժամանակի ընթացքում նրանք հետզհետե կորցնում են իրենց ջերմությունը և իմերջո արտաքուստ ծածկվում են կեղևով և դառնում են խավար մոլորակներ, վորոնք այժմ վիայլում են Արևի արտացորված լույսով։ Սակայն դիտնականների կարծիքով մի քանի շատ մեծ մոլորակներ, ինչպես Յուլիաները և Սատուրնը, դեռ վերջնականապես չեն սառել։ Նրանք դեռ չեն ծածկվել արտաքուստ պինդ կեղևով և նրանց դրսի կողմը, ամենայն հավանականությամբ, ներկայացնում են հեղուկ և պինդ վիճակների միջին դրություն, այսինքն գոտնվում են, այսպես կոչված, խմորանման դրության մեջ։ Բայց նրանք արդեն կորցրել են իրենց նախկին փայլը և լուսավորվում են, համարյա բացառապես, արտացորված արեգակնային լույսով։ Վորոշառագրաշխներ յենթադրում են, վոր Յուլիաները դեռ մասամբ իր սեփական լույսն ե արձակում։

Բայց թողնենք առայժմ մյուս մոլորակները և դառնանք մեր փոքրիկ յերկրագնդին։

7. ՅԵՐԿԻ ՊՅԱԳԵԼԸ ԱՌԱՎԵՐԴԻ ՅԵՎ ԱՐԵՎԻ ՏՈՒՐՃԸ, ՄԵԼՈՎԱՅԻՆ ՈՐԲԻՑՆԵՐ (ԵՐԶԱՆՅԻՂԻՆԵՐ), ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԱՐԵՎԻ ՏՈՒՐՃԸ ԴԱՌՆԱՎՈՒ ԽՎԱՇՐԱԹՅՈՒՆԵՐ, ԱՐԵՎԱՆԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք դիտենք, վոր Յերկիրը պատվում ե յերկնային տարածության մեջ։ Ամենից առաջ նա հոլի պես պատվում է ինքն իր շուրջը, կտմ, ինչպես տոսում են, իր առանցքի շուրջը։ Այդ պատույտի ժամանակ նրա մերթ մի կողմն ե դառնում դեպի Արևը, մերթ մյուս։ Այն կողմում, վորը լուսավորվում ե Արևից, լինում ե ցերեկ, իսկ հակառակ կողմում լինում ե դիշեր։ Իր առանցքի շուրջը մի պատույտ յերկրագունդը կատարում է 24 ժամում։ Յեվ ամեն մի

տեղ յերկրագնդի վրա, որինակ, այն տեղը, վորտեղ
մենք ապրում ենք, մի պառոյտ, կամ մի շրջան և
կատարում 24 ժամում: Այդ պատճառով յերկրագնդի
բոլոր վայրերում ցերեկը և դիշերը միասին վեր-
ցրած, կամ համորը (ցույք), կազմում են ուղիղ 24 ժամ:

Պատվելով իր առանցքի չուրջը, Յերկիրը միա-
ժամանակ շրջավագում և Արևի չորս բոլորը, ամեն
մի վայրկյան թռչելով 30 կիլոմետր: Այն ժամանա-
կամիջոցը, վորի ընթացքում նա կատարում է մի պը-
տույտ Արևի չուրջը, կազմում և տարին:

Բայց ոլանալով Արևի շուրջը, Յերկիրը չի գծում
նրա չորս բոլորը կանոնավոր, ուղիղ շրջան: Յեթև
մենք կամենայինք պատկերել այն ուղին, վոր կատա-
րում և Յերկիրը Արևի շուրջը, կամ, ինչպես առում
են, ներկայացնել Յերկրի որբարը, հարկավոր կլիներ
նկարել վոչ թե կանոնավոր շրջան, այլ մի ուղղու-
թյամբ քիչ ձգված: Այդպիսի ձգված շրջանը կոչ-
վում և ելլիպս (ձվածիր):

Այդպես ուրեմն, Յերկիրը Արևի շուրջը գծում և
վոչ թե կանոնավոր շրջան, այլ ելլիպս: Բայց այդ-
ելլիպսը քիչ և ձգված և բավական մոտենում և շրջ-
անին: Այդպիսի քիչ ձգված ելլիպսներով ել պտը-
վում են Արևի շուրջը և մյուս մոլորակները, որինակ,
Մարսը, Յուպիտերը: Այսպիսով մենք կարող ենք ա-
սել, վոր բոլոր մոլորակների որբիուները ներկայաց-
նում են քիչ ձգված ելլիպսներ, վորոնք մոտենում են
շրջանին:

Մոլորակներն Արևից տարբեր տարածության վրա
յեն գտնվում: Վորքան հեռու յե դժոնվում մոլորակն-
Արևից, այնքան մեծ և այն ուղին, վոր նա պետք և
անցնի Արևի շուրջը: Այն մոլորակները, վորոնք Արե-
վին ավելի մոտ են, քան Յերկիրը, այսինքն, Մեր-
կուրին և Վեներան, ավելի փոքր որբիաներ ունեն,
քան Յերկիրը: Յեկընդհակառակը, այն մոլորակնե-
րը, վորոնք Արևից ավելի հեռու յեն գտնվում, քան
Յերկիրը (Մարսը, Յուպիտերը, Սատուրնը), մեծ որ-

րիտներ ունեն: Վորքան ավելի մեծ է վորեւ մոլորակի ճանապարհը, կամ որբիտը, այնքան ավելի ժամանակ և պահանջվում անցնելու համար: Մարսը, դոր Արեգ ավելի հեռու յև գտնվում, քան Յերկիրը, ունի ավելի յերկար որբիտ: նա մի պտույտ Արեգի շուրջը կատարում է յերկու արբում: Յուղիտերը և Սատուրնը, վոր ամենի հեռու յեն գտնվում Արեգի, ավելի յերկար որբիտներ ունեն: Յուղիտերին հարկադր և մոտավորապես 12 տարի, վորաբեսզի մեկ անգամ պտույտի Արեգի շուրջը, իսկ Սատուրնը նրա շուրջը մեկ պտույտ կատարում է 30 տարում, ուրեմն Սատուրնի վրայի մեկ տարին հավասար է մեր 30 տարվան:

Բնդհակառակը, Արեգին մոտ գտնվող մոլորակների որբիտներն ավելի փոքր են: Վեներան պտավում և Արեգի շուրջը մեր $7\frac{1}{2}$ ամիսների ընթացքում, իսկ Մերկուրին՝ ընդամենը 88 որում:

Բայց մոտ են գտնվում մոլորակները, թե հեռու Արեգի, նրանք բոլորն ել պտավում են նրա շուրջը: Բոլորը նրանից ստանում են լույս և ջերմություն: Բոլորը կազմում են մեկ արեգակնային ընտանիք, կամ, ինչպես ասում են, արեգակնային համակարգություն:

Ա. ՃԻՆ ՍԽՈՒ. ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ ՅԵՐԱՆԱՑԻՆ ԼՈՒՍԱՅՈՒՆԵՐԻ ԾԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ. ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ. ՅԵԿԵՂԵՑԻՆ ՄԱԶԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ, ԿՈՎՈՐԴԻԿՈՍԸ ԵՎՎ. ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆԻՇ ԵՄՐԻՒ ԾԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ. ԳԱՎԱԼԱՅԸ, ՎԱՐԳԱԸ ԿՈՎՈՐԴԻԿՈՍ ՈՒՍՄՈՒՆԻՇ ԳՐԱՊԱՎԱՆԴԱԿՈՍ. ԴԱՎԱԼԱՅԸ ԿԱՏԵ ԵՎՎ. ՆՐԱ ՀՐԱԺԱՐԱԿՈՒՄԸ ԶԱՐՄԱՆԱ ԲՐՅԱՆ. ԴԱՎԱԼԱՅԸ ԴՅՈՒՆՔԸ ՅԵՎ. ՆՐՈ ԱՍՑԴԱՐԱԾԱԿԱՆ ԴՅՈՒՆՔ:

Առաջներում դիտնականներն ուղիղ պատկերացում չունեին արեգակնային համակարգության կառուցվածքի մասին: Այն ժամանակ կարծում եյին, վոր Յերկիրը անշարժ կանգնած է տիեզերքի կենտրոնում և վոր Արեգը, Լուսինը և բոլոր մոլորակներն ու աստղերը պատվում են նրա շուրջը 24 ժամում: Թե ինչ բան են աստղերը, այն ժումանակ պարզ չեյին պատկերացնում: կարծում եյին, թե բոլոր աստղերը

կապած են մի բյուրեղյա կամարի և նրա հետ միասին պատվում են Յերկրի շուրջը: Վոչ աստղերի մեծության մասին, վոչ նրանց կազմության և վոչ ել հեռավորության մասին Յերկրից, դեռևս չկտր պարզ հասկացողություն:

Ճիշտ ե, Հնումն ել դանիլում եյին մարդիկ, վորոնք սկսում եյին դիտակցել, վոր Յերկիրը գնդի նրաման կլոր ե, և վոր նա շարժվում ե տարածության մեջ: Բայց յեթե նրանք յերբեմն և արտահայտում եյին այդ, ապա արտահայտում եյին վորպես մի խելացի յենթադրություն, վորը դեռ չեյին կարողանում բացատրել: Յեզ մարդկանց մեծամասնությունը յերկար ժամանակ դեռ հավատում եր, վոր Յերկիրն անշարժ ե, իսկ Արեւ և մոլոր մյուս յերկնային լուսատուները պատվում են նրա շուրջը 24 ժամում, ինչպես պարզ յերեսում ե այդ աչքի համար:

Այնինչ ժամանակն անցնում եր: Ավելի ու ավելի կուտակվում եյին զանազան դիտողություններ և դիտելիքներ և հետզհետեւ կազմվում եր իօկական դիտությունը՝ աստղաբաշխությունը: Յերբորդ դարում մեր դարաշրջանից առաջ, Յեղիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում ապրում եր մի ականավոր աստղաբաշխ Արիստարիս անունով: Նա առաջինը ուղիղ և պարզ արտահայտեց այն կարծիքը, վոր Յերկիրը տիեզերքի կենտրոնում չի դանիլում և Արեւ չի պատվում Յերկրի շուրջը: Ընդհակառակը, Արեւ անշարժ ե, ինչպես անշարժ են և աստղերը: Ինքը Յերկիրն և պատվում Արեւի շուրջը և մի պատույտը կատարում ե ուղիղ մեկ տարում: Ճիշտ այդպես ել և մյուս մոլորակները պատվում են վոչ թե Յերկրի, այլ Արեվի շուրջը: Բացի դրանից, նա առում եր, վոր Յերկիրը վոչ միայն պատվում ե Արեւի շուրջը, այլ նաև պատվում ե իր իսկ շուրջը, վորի հետևանքով և առաջ ե դալիս յերեկվա և դիշերվա հերթափոխը:

Յեթե մյուս գիտնականները հասկանային Արիստարիսին և ընդունեյին նրա ուսմունքը, դիտությունը հենց այն ժամանակ նկատելի առաջ կդնար: Դժբախ-

տարար Արիստարիսին չհասկացան։ Մյուս բոլոր գիտնականներն առաջվա պես յենթադրում եյին, վոր Յերկիրն անշարժ է, և բոլոր յերկնային լուսատունները պատվում են նրա շուրջը։



Նկ. 6. Պաղսմեռ

Ալապես անցավ ևս մի քանի դար։ Մեր դարաշրջանի յերկրորդ հարյուրամյակում նույն Ակեքսանդրիա քաղաքում ապօռում երմի ալլ հայտնի զիանական՝ Պաղսմեռուսը։ Նա շատ դիտություններ և արել յերկնային լուսատունների վրա և շատ ե կարդացել

Հին դրաբեր, վորոնց մեջ խոսվում եր յերկնքի ժամին։ Նա լավ գիտեր նաև Արիստարիսի ուսմունքը Յերկրի շարժման մասին։ Բայց չնայած իր գիտնական լինելուն, նա ևս չհասկացավ Արիստարիսին և չհամաձայնվեց նրա հետ։ Պաղսմեռուսը գրեց մեծ աշխատություն, վորի մեջ շաբադքեց ամենը, ինչ վոր հայտնի յեր այն ժամանակ յերկնային մարմինների շարժման մասին։


Պաղսմեռուի ուսմունքի մեջ կար շատ բան, ինչ վոր ընդունել եյին գիտնականները դեռ մինչև Արիստարիսը։ Պաղսմեռուսը սովորեցնում եր, վոր Յերկիրն անշարժ է և գտնվում է տիեզերքի կենտրոնում։ Յերկրի շուրջը 24 ժամվա ընթացքում պատվում են 7 մոլորակներ հետեւյալ կարգով։ Լուսինը, Մերկուրին, Վեներան, Արեւ, Մարսը, Յուպիտերը և Սատուրնը։

Ինչպես յերևում ե, այն ժամանակ Արևը նույնպես
մոլորակ եր համարվում: Ազա հետեւում են անշարժ-
առաջերը, վորոնք կզած են թափանցիկ վոլորտին
կամ յերկնջին և բոլորը նրա հետ միասին պտավում
են Յերկրի շուրջը:

Պաղպմնուի ուսմունքի մեջ շատ բան խճճված և
անորոշ եր: Սակայն, չնայած վոր նա շատ բանում
սխալ եր, նա ընդունվեց՝ մյուս գիտնականների կող-
մից և առանց փոփոխության դիմացավ 1400 տարի: Բոլորը հավատում եյին նրան, վորպես ամենաճիշտ
և արժանահավատ ուսմունքի, վորի հետ չհամաձայն-
վելը համարվում եր «Հանդգնություն և անմտու-
թյուն»: Դրա պատճառը մասամբ ել այն եր,
վոր շուտով դիտության համար սկսվեց անբարե-
նպաստ ժամանակ, յերբ նա համարյա բոլորովին
կանգ առավ իր զարդացման մեջ և մեռած դրության
հասավ:

Վրա հասավ Յեվրոպայի պատմության այն
խայար և ծանր եպոխան, վոր սովորաբար անվանում
են Միջին դարեր: Արևելքից Յեվրոպա խուժեցին նոր
գերմանական ցեղեր: Նրանք նվաճեցին Հին Հռոմեա-
կան կայսրությունը և նրա տեղը հիմնեցին նոր պե-
տություններ: Իսկ Իտալիայում այդ ժամանակ փար-
թամորեն ծաղկում եր քրիստոնեական կաթոլիկ յե-
կեղեցին, վորին գլուխ եյին՝ կանգնած հռոմեական
պատրիարքները կամ պապերը: Ոգավելով յերիտա-
սարդ գերմանական ազգերի անկուլտուրականու-
թյունից և միամիտ աշխարհայացքից, պապերը բարձ-
րաձայն անվանում եյին իրենց Հիսուսի փոխանորդներ
և հայտարարում եյին, մոր իրենց և պատկանում ինչ-
պես յերկրի, այնպես և յերկնքի ամբողջ իշխանու-
թյունը: Յեվրոպայի ամեն մի վայր ուղարկում եյին
նրանք իրենց քարողիչներին—վարդապետներին, վո-
րոնք անցնում եյին յերկրից յերկիր և մի տեղ խաբե-
րայությամբ, մի ուրիշ տեղ բռնի կերպով մկրտում
եյին ժողովրդին: Նրանք կառուցում եյին յեկեղե-

ցիներ և վանքեր, միաժամանակ ստեղծելով իրեն
համար արդյունավետ յեկեղեցական պաշտոն-
ներ։ Յեկեղեցիներին ու վանքերին միացվում եյին
առաջին հոգամասեր, վորոնց վրա ապրում և աշխա-



Նկ. 7. Աշխարհի համակարգությունն ըստ Պտղոմեոսի

տում եյին ճորտ գյուղացիները։ Հոգեռականությունը և ազնվականությունը միասին տիրում եյին բոլոր հողերին։ Իսկ այդ հողերի վրա ապրող գյու-
ղացիները պետք են նրանց համար աշխատեյին և
հարկ վճարեյին նրանց։ Իսկ հռոմեական յեկեղեցին որի-
նականացնում եր այդ կարգը և քարոզում եր, վոր
ստրուկները, այսինքն գյուղացիները, ովետք և յեն-

թարկվեն իրենց տերերին, այսինքն աղնվական կալվածատերերին և հոգևորականությանը:

Դիտության համար դա շատ դժվար ժամանակ էր: Յեկեղեցին բոլոր գիտությունների դլուխն եր կանգնեցրել աստվածաշունչը: Աստվածաշունչը ճանաչված եր վորպես աստվածային, սուրբ գիրք, վորի մեջ չկա և չի կարող լինել վորևե սխալ, կամ ահճառություն: Այն ամենը, ինչ վոր չեր համապատասխանում աստվածաշնչի խոսքերին, հակասում եր նըրանց, համարվում եր հերետիկոսություն և գաֆան կերպով հետապնդվում եր: Պաղոմեոսի ուսմունքը Յերկրի անշարժության մասին միանդամայն հարմարվում եր աստվածաշնչին և այդ պատճառով ընդունված եր հռոմեական յեկեղեցու կողմից: Նա ճանաչված եր նույնքան ճշմարիտ, վորքան և ինքը, աստվածաշունչը և կատկածել Պաղոմեոսի գրվածքներին և մեկնաբանություններին՝ համարվում եր անթույլատրելի: Գիտությունը առաջ մղող ազատ միտքը հալածված և ճնշված եր: Միջնադարյան գիտնականների մեծամասնությունը չեր զարգացնում գիտությունը, այդ գիտնականները սեփական գիտություններ և գյուտեր շատ քիչ եյին անում, այլ մեծ մասամբ սովորում եյին և ուրիշներին սովորեցնում չին գրքերով: Յերկինքը նրանք ուսումնասիրում եյին վոչ թե հենց յերկնքի միջոցով, այլ Պաղոմեոսի դըրքածքներով, հոգալով վոչ այնքան ճշմարտության մասին, վորքան այն մասին, վոր չմեղանչեն աստվածաշնչի դեմ:

Բայց վորքան ել աշխատում եր կաթոլիկ յեկեղեցին ճնշել և յերկյուղի մեջ պահել միտքը, այնուամենայնիվ մարդկային միտքը ճգտում եր դեպի ազատություն: Շատ պարմաններ նպաստում եյին գրան: Կյանքն ավելի ու ավելի բարդանում եր: Տարբեր յերկրներում ապրող մարդկանց հարաբերություններն ուժեղանում եյին: Աճում եր առևտուրը. զարգանում եր տեխնիկան: Մարդիկ սովորել եյին կառուցել

ավելի կատարելագործված, ավելի խոշոր նավեր, վորոնց վրա հնարավոր և լինում կատարել ավելի հեռավոր ճանապարհորդություններ։ Մարդիկ սկսել է ին ավելի լայնորեն ճանաչել այն յերկերը, վորտեղ նրանք ապրում ենին։ Յեզ նորից սկսում ե վերակենդանանալ այն յնթաղբությունը, վոր մեր Յերկիրը վոչ թե տափակ, այլ կլոր ե, վորակես գունդ և վոր նրա շուրջը կարելի յե ճանապարհորդություն կատարել։

ԽՎ-ըդ դարի վերջում կարեւոր աշխարհագրական դյուտեր յեղան։ Իտալացի Կոլումբը իտալանիայից դնաց արևմուտք, Հույս ունենալով այդ ճանապարհով հասնել Հնդկաստան։ Ճանապարհը դուրս յեկավ ավելի յերկար, քան նա կարծում եր, վորովհետեւ, հարկավոր եր անցնել յերկրագնդի կեսը։ Նա չհասավ մինչեւ Հնդկաստան, բայց դժուարեն հայտաբերեց մի նոր, մինչ այդ անհայտ մայր ցամաք, վոր հետազոտմ կոչվեց Ամերիկա։ Մոտավորակես նույն ժամանակներում պորտուգալացի ծովագնաց Վասկո-դե Գաման պտույտ գործեց Աֆրիկայի շուրջը և բացեց Հնդկաստան տանող մի նոր ծովային ճանապարհ արևելյան կողմից։ Իսկ 20 տարի անց մի այլ պորտուգալացի ծովագնաց՝ Մագելլանը և նրա ուղեկիցները յերեք տարվա ընթացքում շրջեցին ամբողջ Յերկիրի չորս բոլորը, ճանապարհելով դեպի արևմուտք և վերադառնալով արևելքից։

Այդպիսով ամենայն ակներեւությամբ ապացուցվեց, վոր մեր Յերկիրը ներկայացնում ե դունդ։ Մը նում եր միայն բացատրել և ապացուցել, վոր այդ դունդն անշարժ չե, այլ պտավում ե տարածության մեջ։ Այդ միտքն արդեն հղացել եր վորոշ դիտնակաների դիմում։ Բայց հարկավոր եր ձեռնհասություն՝ ապացուցելու այդ, դարձնելու բոլորի համար պարզ և հասկանալի։ Իսկ դժուար համար պահանջվում է յին ահազին աշխատանք, յերկար դիտողություններ և աստղաբաշխական մեծ դիտություն։ Այդ բոլորը միա-

շավ հանձինս լեհաստանի Տորն քաղաքի բնակիչ
Հայտնի գիտնական Նիկողայոս Կոպերնիկոսի: Նա
ականավոր գիտնական աստղաբաշխ եր: Իր ամբողջ
կյանքում նա զբաղվել եր յերկնքի ուսումնասիրու-
թյամբ: Նա չեր ուղղում կուրորեն հավատալ այն բո-
լորին, ինչ վոր սովորեցնում եյին ուրիշները և աշ-
խատում եր ամեն ինչ ստուգել իր սեփական խելքով:
Ուսումնասիրելով յերկնային մարմինների շարժումը,
նա յեկավ այն յեզրակացության, վոր Պտղոմեոսի
ուսմունքը սիսալ ե: Նա գիտեր, վոր գեռ հին ժամա-
նակների իմաստում մարդկանցից վոմանք և Արիս-
տարիսը խոսել են Յերկրի շարժման մասին և ահա
նրա մեծ միտք և ծագում՝ ինչո՞ւ չի կարելի ընդու-
նել, վոր Յերկիրը չի կանգնած մի տեղում, այլ
շարժվում և յերկնային տարածության մեջ:

Կոպերնիկոսը այսպես եր դատում: Յերկիրը,
համեմատած ամբողջ տիեզերքի հետ, մի չնչին հյուլն
յե: Հապա ի՞նչպես կարելի յե յենթադրել, վոր և
Արևը, և բոլոր աստղերն ու մոլորակները շարժվում
են նրա շուրջը: Չե՞ վոր թե՛ Արևը, թե՛ բոլոր աստղե-
րը նրանցից հսկայական հեռավորության վրա յեն դանը-
վում: Հետեւապես, յեթե նրանք իրոք 24 ժամում
պտույտ են կատարում Յերկրի շուրջը, ուրեմն հսկա-
յական տարածություններ են անցնում նրանք մի ո-
րում և ինչպիսի՛ անհավատալի արագությամբ:

Վերջապես, յեթե շարժվում և Արևը, շարժվում
են մոլորակներն ու աստղերը, հապա ինչո՞ւ միայն
Յերկիրը, միայն մեր չնչին, փոքրիկ յերկրագունդը
հանդիսութեանցնած: Ավելի ճիշտ չի՞ լինի յենթադրել,
վորպատճվում ե ինքը, մեր Յերկիրը. իր յերկնա-
յին լուսատուների շարժողությունը, վոր մենք տեսնում
ենք, միայն թվացող ե: Չե՞ վոր, յերբ մենք նավակով
գնում ենք, մեզ յերբեմն թվում ե, վոր վոչ թե նավա-
կըն և առաջ գնում, այլ ափերն են լողում դեպի մեզ:
Նույնը չի՞ կատարվում, արդյոք, և մեր Յերկրի հետ:
Չե՞նք պտությում, արդյոք, մենք նրա հետ արևմուտքից

արևելք, չնկատելով այդ շարժումը: Այնինչ մեղ թը-
վում ե, վոր Արևը և մյուս բոլոր յերկնային լուսա-
տուններն են պտտվում մեր Յերկրի շուրջը արևելքից
արևեմուտք:

Դրանից հետո Կոպերնիկոսը հանգեց այն բանին,
վոր Յերկիրը վոչ միայն պտտվում և իր շուրջը, այլ
և պտտվում ե Արևի շուրջը: Դեռ, Կոպերնիկոսից ա-
ռաջ մի գիտնական գրել եր, վոր Մերկուրի և Վենե-
րա մոլորակները պտտվում են վոչ թե Յերկրի շուր-
ջը, այլ Արևի: Կոպերնիկոսն ասում եր. «Իսկ ինչո՞ւ
կանգնել կես ճանապարհին: Ինչո՞ւ չենթաղընել, վոր
ժյուս մոլորակներն ել պտտվում են Արևի շուրջը:
Յեթե այդ ընդունենք, այն դեպքում ավելի հեշտ կը-
լինի բացարել շատ յերեսույթներ, քան Պտղոմեոսի
հին սիստեմն ե բացարձում»:

Այդպիսով Կոպերնիկոսը Պտղոմեոսի սիստեմին
հակադրեց իր սեփականը: Էստ նրա ուսմունքի, Արե-
վը զանվում ե կենտրոնում, իսկ նրա չորս կողմը
չընաներով շարժվում են Յերկիրը և մյուս մոլորակ-
ները: Էստինը միայն Յերկրի արբանյակն ե, վոր պը-
տտվում, և Յերկրի շուրջը և նրա հետ միասին պը-
տույտ ե կատարում Արևի շուրջը:

Կոպերնիկոսը չեր շտապում, հրապարակել իր
ուսմունքը: Ամբողջ 33 տարի նու մենակ և անդորրու-
թյան մեջ՝ աշխատել եր, դիտելով յերկնային լուսա-
տունների շարժումը և հանգիստ գրել եր իր աշխատու-
թյունը:

Միայն մի քանի մոտ ընկերներ գիտեյին նրա
աշխատանքի մասին: Նրանք վերջապես համոզեցին
Կոպերնիկոսին արդեն ծերության հասակում տպա-
գրության տալ իր ձեռագիրը:

Կոպերնիկոսի գիրքը տպագրվեց 1543 թվակա-
նին:

Այդ ժամանակ Կոպերնիկոսն արդեն 70 տարեկան
եր: Յերբ բերեցին նրա մոտ տպագրված գիրքը, նա
պառկած եր անկողնում մահամերձ հիվանդ:

այն կարողացավ նայել իր աշխատության վրա, պահել ձեռքում և շուտով մեռավ։ Այն ժամանակ նա չերել մտածում, թե ինչ հեղաշրջում կառաջացնի դետության մեջ իր գերքը, ինչպիսի աղմուկ կրաքարացնի այն և վորքան ատելություն ու հալածանք կառաջացնի յեկեղեցու կողմից իր ուսմունքի համախոհների և հետեւողների նկատմամբ։

Կոպերնիկոսի ուսմունքը լիակատար հակառության մեջ եր գտնվում յեկեղեցական ուսմունքի հետ։ Յեկեղեցին սովորեցնում եր, վոր Յերկիրն անշարժ կանգնած և տիեզերքի կենտրոնում և նրա շուրջն են պատվում մյուս բոլոր յերկնային մարմինները։ Արեվը և Լուսինը հենց նրա համար են ստեղծված, վոր ծառայեն Յերկիրն՝ լուսավորեն նրան ցերեկը և դեշերը։ Նրանցից բարձր գտնվում են աստղերը, վոր կազմ ևն բյուրեղյա կամարին, իսկ ավելի բարձր, այս տեսանելի յերկնքի յետնին գտնվում և մի ուրիշ յերկիրնք, վորտեղ բնակվում և աստված սրբերի և հրեշտակների հետ և ուր փոխադրվում են արդարների հոգիները։

Կոպերնիկոսի ուսմունքը հիմնովին խախտում եր աշխարհի կառուցման մասին յեղած կրոնական համկացողությունները։ Յեթե Յերկիրը պատվում և յերկնային տարածության մեջ, յեթե այդ տարածության մեջ ամենուրեք ցըլած են աստղերը, ապա ո՞ւր և այն յերկիրնքը, վորտեղ բնակվում են սրբերը։ Այն մեկի համար պարզվում ե, չթե վորքան յերեխայամիտ եր աշխարհաստեղծության մասին յեղած կրոնական պատկերացումը, վորքան անհեթեթություն կար նրա մեջ։

Բայց դա քիչ եր։ Կոպերնիկոսի նոր ուսմունքը վոչ միայն ջախջախեց յեկեղեցու ուսմունքը Յերկիրի անշարժության մասին։ Նա խախտեց նաև ամբողջ միջնադարյան սոցիալական իրավակարգը, վորը յեկեղեցին համարում եր անսասան։ Զե՞ վոր, յեթե աշ-

խարհում ամեն ինչ շարժվում է, յեթե շարժվում և
ինքը, Յերկիրը, ապա ի՞նչպես կարող է անսասանմը-
նալ այս անարդար իրավակարգը, վոր հիմնված է մի
քանիսի կամայականության և մյուսների ճնշման վր-
բա: Յեկեղեցին քարոզում եր, վոր ստրուկները պետք
է կուրորեն հնագանդվեն իրենց տերերին, յեթե կա-
մենում են վարձատրվել հանդերձյալ կյանքում: Իսկ
յեթե առավածաշնչում է յեկեղեցական ուսմունքի
մեջ յեղել են սխալներ, յեթե նրանք սովորեցրել են
վոչ այն, ինչ վոր դոյցություն ունի իրականում, կա-
րելի՞ յեր ընդհանրապես հավատալ նրանց:

Կոպերնիկոսի ուսմունքը մի ամբողջ հեղափո-
խություն՝ առաջացրեց մարդկանց մտքերում: Նա ըս-
տիպեց նրանց կասկածել յեկեղեցու ուսմունքի ճշ-
մարտության և նրա պաշտպանած իրավակարգերի
արդարության վրա: Այդ պատճառով կաթոլիկ յե-
կեղեցին չեր կարող անտարբեր մնալ դեպի Կոպեր-
նիկոսի աշխատությունը: Իր սեփական փրկության
համար նա պետք է ամբողջ կատաղությամբ հարձակ-
վեր այդ նոր ուսմունքի պաշտպանների և հետեղ-
ների վրա:

Սակայն, առաջին շրջանում յեկեղեցին քիչ ու-
շաղբություն եր դարձնում կոպերնիկոսի գրքի վրա:
Դիրքը գրված եր լատիներեն լեզվով և այն կարդում
ելին միայն սակավաթիվ գիտնականներ: Բայց հենց
կարդացողներից ել շատերը նայում ելին նրա վրա
վորապես մի սրամիտ հորինվածքի վրա և վոչ թե վոր-
ունու մի լուրջ հեղինակության: Բայց գործը փոխվեց,
յերբ գտնվեցին ուրիշ գիտնականներ, վորոնք կարո-
ղացան այդ դժվարին գիտական գիրքը շարադրել
հասարակ և պարզ լեզվով, այնպես, վոր բոլորովին
հասկանալի դարձավ, թե վորքան այս նոր ուսմունքը
ավելի ճիշտ է, քան հինը, Պտղոմեոսինը: Այդ գիտ-
նականներն ելին յերկու հռչակավոր իտարացիներ՝
Գալիլեյը և Զորդանո Բրունոն, և նրանք յերկուսն ել

դաժան կերպով տուժեցին վորպես աստղաբաշխական նոր ուսմունքի կողմնակիցներ:

Գալիլեյը ականավոր գիտնական եր՝ ֆիզիկոս, մաթեմատիկոս և աստղաբաշխ։ Մանոթանալով կոպերնիկոսի աշխատության հետ, նա սկսում է բարձր խոսել և դասախոսություններ կարդալ Յերկըի պտըռվելու մասին Արևի շուրջը։ Նրան լսելու յեր հավաքվում ահագին բազմություն։ Հոգևորականությունն իրարանցման մեջ ընկապ։ Բայց Գալիլեյն այնպիսի համբավ ուներ, վոր չեյին համբածակվում նրա հետ։ Միանգամից խիստ վարվել։ Առաջին շրջանում հռոմեական յեկեղեցին բավարարվեց նրանով, վոր դատապարտեց Կոպերնիկոսի գիրքը, վորպես «Հերետիկոսական և անաստված» գրվածք։ Արգելված եր վորներ յեկեն խոսել կամ գրել այդ հերետիկոսական ուսմունքի մասին։



Նկ. 8 Կոպերնիկոս
Քայլ կատարելու նա գրեց մի քիրք, վորն անվա-


Գալիլեյին համակրող մարդիկ նախազգուշացնում ելին նրան։ Գալիլեյը ինքն ել լավ եր հասկանում, թե վորքն վտանգավոր և յեկեղեցու վորոշումների դեմ գնալ։ Բայց նա չեր կարող հրաժարվել իր անկեղծ համոզմունքներից և այն գիտությունից, վորին նա ծառալել եր իո ամբողջ կյանքում։ Վստահելով իր գիտական ծառայություններին և ազդեցիկ ծանոթների հովանավորությանը, նա վորոշեց մի խիզախ

նեց «Զբույցները աշխարհի յերկու տեսակ՝ Համակարգության մասին՝ Պաղպամեռուի և Կոպերնիկոսի»։ Գըքքի մեջ բերված ե յերեք մարդու միջև տեղի ունեցած զրույցը։ Նրանցից յերկուաը շատ սրամիտ կերպով ապացուցում են Կոպերնիկոսի նոր Հայացքները։ յերրորդը շատ անշնորհ կերպով հերքում ե նրանց։ Այդ գըքի համար Գալիլեյը դիտավորյալ կերպով մի առաջարան գրեց, վորտեղ ասվում եր, թե նա գըքված ե Կոպերնիկոսի ուսմունքի ամրողջ կեղծությունը ապացուցելու նպատակով։ Բայց գըքի խեկական միտքը հասկանալի յեր ամեն մեկի համար, զրույցներից պարզվում եր, վոր ճշմարտությունը Կոպերնիկոսի կողմն ե և վոչ թե Պաղպամեռուի։

Սակայն այդ

յուրատեսակ խորամանկությունը չոգնեց Գալիլեյին։ Նա իր անդգուշության պատճառով խիստ կերպով տուժեց, Զնայած, վոր հռչակավոր գիտնականը արդեն ալդ ժամանակ 70 տարեկան եր, նրան հրամացեցին անմիջապես ներկայանալ Հռոմինկվիզիցիալիա¹⁾ դատին։

Այստեղ Գալիլեյին յերկար ժամանակ պահում են



Նկ. 9. Գալիլեյ

1) Խելվիզիալիա— այսպես եր կոչվում «Հերետիկոսներին»


բանտում և, ինչպես յերեսում և դատարանի նիստերի պահպանված որձանագըռությունների վորոշ արտահայտություններից, նույնիսկ տանջանքների յեն յենթարկում։ Վերջապես յերկար հարցաքննություններից հետո նրան ստիպում են հանդիսավոր կերպով, հոգեորականների ներկայությամբ, մեծ բաղմության առջև, խաչի և ավետարանի մոտ չոքած, մի շաղիկով (այսպես կոչված, ապաշխարող մեղավորի հագուստով), հրաժարվել կոպերնիկոսի կեղծ, հերետիկոսական, յեկեղեցու կողմից դատապարտված ուսմունքից այն մասին, վոր Արքը կանգնած և տիեզերքի կենարոնում, իսկ Յերկիրը պտավում և նրա շուրջը։

Նա ստիպված եր յերդվել, վոր չի հավատում, թե Յերկիրը շարժվում է և այլնո այդ մասին չի խոսի և չի գրի։ Կարելի յե յերեակայել, թե վորքան դժվար եր մեծ ոգիստնականի համար հրաժարվել ճըշմարտությունից և ընդունել կեղծիքը։ Բայց նա անհրաժեշտությունից եր ստիպված այդ անել։ Միայն այդ հրաժարումը փրկեց նրա կյանքը։

Ավելի դաժան կերպով դատեց Հռոմեական յեկեղեցին Զորդանո Բըռունոյին։ Այս ականավոր գիտնականը կոպերնիկոսից ել առաջ անցավ։ Խոսերով տիեզերքի մասին, կոպերնիկոսը ի նկատի ուներ միայն արեգակնային համակարգությունը։ Թե ի՞նչ բաներ են ասաղերը, նա դեռ չգիտեր։ Զորդանո Բըռունոն հակացավ, վոր ամեն մի ասող մեր Արքի պես արև և Հնարքավոր ե, ասում եր նա, վոր մի քանի արդպիսի

և յեկեղեցու թշնամիներին «հետազնուելու նպատակով զեռ ԱՅ դարում Հռոմեական պապերի կողմից Հիմնված Հոգեկարական դատարանը։ Ինկվիզիցիան հայտնի յեր իր դաժանությամբ և զանազան տանջանքներու ու պատիժներ հնարքով։ Դատապարտված «Հերետիկոսները» մեծ մտածք այրվում եյին խարույկի վրա։

24. 10. 9m/100ft 5000ft



աստղաբեների շուրջը պատվում են նույնալիսի մոլոքակներ, վորովիսին և մեր Յերկերը, հնարավոր և նաև, վոր այդ մոլորակների վրա կան կենդանի եակներ: Տիեզերքի մեջ ցրված արևեների թիվն անսահ-

ման ե, անսահման
եև ինքը տիեզերքը
Զորդանո Բրունոյի
ալս մոռքերն ու խոս-
քերը այնքան շղեմ
եր աստծուն և աստ-
վածաշնչին հակա-
սողա, վոր հոռմեա-
կան կաթոլիկ յեկե-
ղեցին մեղադր եց
նրան հերետիկոսու-
թյան մեջ և կենդանի
այր եց խարուկի
վրա (1600 թ.):

Մինչդեռ աստ-
դաբաշխական դի-
տությունը արագ

Նկ. 11. Զորդանո Բրունո

դաբանում եր: Արան հատկապես նպաստում ե հեռա-
դիտակի դյուտը, վորը միանդամից լայնացրեց աստ-
դաբաշխների դիտելիքները: Այս նշանակալի դյուտը
նույնպես կազմած և մեծ դիտնական Գալիլեյի ան-
վան հետ: 1609 թվին Գալիլեյին լուրեր հասան, վոր
մի հոլանդական տեսագետ՝ Զաքար Յանսեն անու-
նով, ապակիներով մի խողովակ և պատրաստել, վորի
միջոցով կարելի յետեսնել հեռավոր առարկաներն
այնպես, վոր նրանք թվում են ավելի մոտ և ավելի
մեծ: Հետաքրքրվելով այդ բանով, Գալիլեյն իսկույն
վլորոշեց ոյդպիսի խողովակ պատրաստել: Տարեր
ապակիների հետ կատարած բազմաթիվ փորձերից
հետո նա հասավ իր նպատակին: Նա վերջրեց կա-

պարեւ խողովակ. նրա մի ծայրին դբսից ամբացըց կորինթարդ, իսկ մյուս ծայրին դբսի կողմից՝ զոգավոր ապակիներ։ Դիտելով զոգավոր ապակու միջով, նա հանկարծ տեսավ, վոր հեռավոր առարկաները, կարծես, մոռեցան իրեն և միաժամանակ ծավալով մեծացան։



Նկ. 12. Լուսնի վրայի սարերը

Գալիլեյի խողովակն իր կառուցվածքով նմանվում եր այժմյան թատրոնական բինոկուլի կիսին. Ակզրում դա առարկաները մեծացնում եր միայն վեց անգամ։ Բայց հետազայում նա այնքան կատարելագործեց իր խողովակը, վոր առարկաներն սկսեցին մեծանալ 30 անգամ։ Հոլանդական խողովակները Գալիլեյի հեռադիտակի համեմատությամբ խաղալիքներ եյին և հենց գործածվում եյին զվարճության համար։ Այսինչ Գալիլեյն խկույն հասկացավ, թե ինչ

հզոր գենք և Հանդիսանում այս Հայտաբերումը աստ-
ղաբաշխի համար։ Նա ուղղեց իր խողովակը դեպի
յերկինք և աշա նրա առաջ բացվեց մի ամբողջ օքան-
չելի նոր աշխարհ, վոր չեր տեսել նրանից առաջ ապ-
րող և վոչ մի մարդ։ Ուղղելով իր դիտակը գեպի
Լուսին, նա մարդկանցից առաջինն եր, վոր Լուսնի
վրա տեսավ սարեր։ Դիտելով Վեներա մոլորակը,
նկատեց, վոր վերջինը, Լուսնի նման, ունի իր վուլն-
ըր։ Իսկ հետազոտելով Յուպիտերը, դտավ, վոր դա
ունի այնպիսի արբանյակներ, ինչպիսին մեր Լուսինն
ե։ Գալիլեյը դտավ չորս արբանյակ և տեսավ, թէ
ինչպես նրանք բոլորը, փոփելով իրենց տեղերը.
պտտվում են Յուպիտերի շուրջը։



Նկ. 23. Յուպիտերը և նրա չորս արբանյակները, վոր
հայնաբերել և Կալիկեյը

Հետազայում, յերբ դիտակները կատարելա-
գործվեցին և մարդիկ սովորեցին պատրաստել մեծ
հետազիտակներ, նրանց ոգնությամբ Հայտնաբերվե-
ցին Յուպիտերի 5 արբանյակներ ևս։ Այժմ մենք դի-
տենք, վոր Յուպիտերը 9 արբանյակ ունի, 9 լուսին։

Այն ժամանակվանից, յերբ դիտնականներն սկը-
սեցին հետազիտակով դիտել յերկինքը, նրանք մի
շաբաթ նշանագոր Հայտնագործություններ են արել,
վորոնց մասին նախկին աստղաբաշխները Հասկացո-
ղություն անգամ չունեյին։ Հասարակ աչքով կարելի
յե տեսնել մի քանի Հազար աստղ, իսկ հետազիտակը
դտավ միլիոնավոր աստղեր։ Զորդանո Բրունոն ճիշտ
եր ասում, վոր աստղերն անթիվ են և վոր ամենզերքն

անսահման եւ Նախկին յերկինքն իր բյուրեղյա կամարով, վորի վրա իրը թե ամուր կպած ելին աստղերը, դարձալ մի հեքիաթ։ Յերկնային տարածությունն ավելի անծայրածիր ե, քան կարծում ելին առաջ։ Արդեն վոչ միայն Յերկիրը, այլ և Արեւը չեր կարելի դնել տիեզերքի կննարոնում։ Վոչ, ամբողջ մեր արևագակնային համակարգությունը՝ դա միայն մի փոքրիկ անկյուն ե, վոր ընկած և անսահման յերկնային տարածությունների մեջ, բազմաթիվ այլ արևեների շաբաթում, վորոնք դատնվում են իրարից հըսկայական հետավորությունների վրա։ Յել այնուամենայնիվ, տիեզերքի այդ փոքրիկ անկյունը, այդ արեդակնային աշխարհն ամենից շատ և դրադեցնում մեղ, վորովհետեւ նա մերն ե, վորովհետեւ մենք նրա մեջ ենք առըսում։

9. ԿՈՊԵՐԵԼԱԿՈՍԻ ՇԱԽՄԱԴԱԿՈՒՄ Ն ԾՎԿ.
ՀԱՆԱՉՎԱԾԱՄ, ՄՈՒՋՐԱԿԻ ԱՐԾՎԻ ՇԱԽՄԱԴԱԿՈՒՄ
ԴԱՐՁԻ ՄԵՋ ՀԱՎԱԳԱՌԸ ՀԱՆԱՉՎԱԾԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՏԱ-
ԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՔԻ ՓԱՌՁԵՐԸ ԲԱԽՄԱՑԻԱՌ ՄԵՐ ԱՐԺԱԿԱ-
ՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՆԱԿՈՒՄԸ

Գիտության և դիտնականների դիմ տարվող հայածանքները չելին կարող կանգնեցնել դիտական մտքի զարգացումը։ Զուր չե, վոր կազմվել և այն լեզենդը, թե Գալիլեյն ստիպված լինելով ցավոք սրտի հրաժարվել այն մեծ ճշմարտությունից, վորին նա այնքան չերմորեն ծառայել եր, չոքած տեղից վորքի յելնելով, բացականչել ե. «այնուամենայնիվ նա (այսինքն Յերկիրը) պատվում ե»։ Իհարկե, նա չի արտասանել այդ բառերը։ Յեթե նա ասեր արդ, հավանական ե, վոր նրան ել վիճակվեր Զորդանո Բրունոյի բախար, այսինքն, նրան ել վորպես հերետիկոսի կայրելին խարույկի վրա։ Սակայն այս լեզենդը ցույց է տալիս, վոր արդեն այն ժամանակ մարդիկ դիտակցում ելին, վոր մեկ անգամ զարթնած մտքի առաջիսացումը անկարելի յե կանգնեցնել, վորքան ուղում ես, հետ կասեցրու կամ թաղցրու արդ միտքը,

Նա կզանի ճանապարհ մարդկային գիտակցության մեջ: Կոպերնիկոսի ուսմունքը Յերկրի շարժման մասին, չնայած յեկեղեցու արդելանքին, այլելի ու ավելի տարածվում եր վոչ միայն գիտնականների մեջ, այլև ընդհանրապես զարդացած մարդկանց մեջ: Նա վերջապես թափանցեց և դպրոցները, և այն կարծիքը, թե Յերկիրը պատվում ե իր առանցքի և Արևի շուրջը, դարձավ բոլորի կողմից ընդունված, տարրական մի ճշմարտություն, մինչդեռ կոպերնիկոսի նշանավոր աշխատությունը շարունակում եր մնալ հոռմեական յեկեղեցու կողմից արդելված գրքերի շարքում:

Այժմ արդեն վոչ վոք չեր կասկածում, մոր Յերկիրը մյուս յերկնային մարմինների նման շարժվում ետարածության մեջ: Բայց գիտնականների միտքը այստեղ ել չեր կարող կանգ առնել: Նրանք կամենում եյին ավելին իմանալ: Նրանք կամենում եյին հասկանալ, թե ինչպես ե առաջացել մեր Յերկիրը: Պարզ ե, վոր նա չեր կարող իսկապես ստեղծված լինել վեց որում, ինչպես վոր ասված ե այդ մասին աստվածաշնչի մեջ: Զեր կարող նաև աշխարհ դալ այն տեսքով, ինչպես մենք տեսնում ենք նրան այժմ: Բայց ի՞նչ ձևով ե նա առաջացել և ինչպե՞ս են ծագել մեր արեգակնային համակարգության նաև մյուս մոլորակները: Ահա թե ինչպիսի հարցեր եյին ժոմանակի ընթացքում ավելի ու ավելի զբաղեցնում: Հետազագիտնականներին:

XVIII դարում արեգակնային համակարգությունը բավական լավ ուսումնասիրված եր: Հայտնի դարձայ ամեն մի մոլորակի մեծությունն ու քաշը, նրանց հեռավորությունն Արևից, նրանց պտույտն Արևի շուրջը: Գիտնականներին զարմացնում եր այն արտասովոր կանոնավորությունը, վորով կատարվում ե մոլորակների դարձը Արևի շուրջը: Բոլոր մոլորակները պտտվում են Արևի շուրջը, շարժվելով նույն ուղղությամբ՝ արևմուտքից արևելք պտտվում ե Արևն իր առանցքից արևելք պտտվում ե Արևն

շուրջը ։ Բոլոր մոլորակներն իրենց առանցքի շուրջը պտավում են նույնաղես արևմուտքից արևելք։ Վերջապես, այդ նույն ուղղությամբ՝ արևմուտքից արեվելք, պտավում եյին այն ժամանակ արդեն հայտարերված բոլոր արբանյակներն իրենց մոլորակների շուրջը։ Բացի դրանից, բոլոր մոլորակները պտավում են Արևի շուրջը համարյա նույն հարթության վրա, վոր անցնում և Արևի հասարակածի միջով։ Տեսնենք, ի՞նչ ե դա նշանակում։

Պատրաստենք նուրբը մետաղալարից տարբեր մեծության մի քանի ճպված շրջաններ, կամ ելլիպսներ։ Թող նրանք ակնառու կերպով ներկայացնեն մոլորակների որբիտները, թեև իրականում որբիտը միայն յերեակայական գիծ է. նա ներկայացնում և այն ճանապարհը, վորն անցնում և մոլորակը՝ պտավլելով Արևի շուրջը։ Այժմ դասավորենք այդ մետաղալարից պատրաստված ելլիպսները սեղանի վրա, մեկը մյուսի ներսում։ Դասավորենք նրանց այնպես, վոր նըրանք չկազմեն իրար, վորովհետեւ մոլորակների խսկական ճանապարհներն ել չեն հանդիպում միմյանց և յերբեք յերկու մոլորակներ չեն կարող բաշխավել իրար հետ։

Սեղանը, վորի վրա մենք դնում ենք նրանց, ներկայացնում և հավասար հարթություն։ Այդ պատճառով մենք կարող ենք ասել, վոր մեր բոլոր արհեստական որբիտները դանվում են մի հարթության վրա։ Նույնը կատացվեր, յեթև մենք մոլորակների որբիտները նկարեյինք թղթի վրա։ Բայց խսկապես, մոլորակային որբիտները դանվում են վոչ նույն հարթության վրա, այլ մի փոքր շեղվում են նրանից, դոյացնելով նրա հետ փոքր անկյուններ։ Ուստի նրանց խսկական՝ դիրքը ցույց տալու համար մենք պետք են մեր արհեստական որբիտները կախեյինք այնպես, վոր նրանք մի փոքր թեքված լինեյին մեկը դեպի մյուսը։

Ցեվ այսպես, Արևի շուրջը մոլորակների կատա-

բած ճանապարհները չատ քիչ չափով թեքված են
մեկը դեպի մյուսը։ Նրանք բոլորը մոտ են այն հար-
թությանը, վորն անցնում է Արևի հասարակածի մի-
ջով։

Բայց ի՞նչ բան է Արևի հասարակածը և, առհասա-
րակ, ի՞նչն են անվանում հասարակած։

Վերցնենք մի վորեկ գունդ, որինակ, կեղելի,
կամ կրոկետի գնդակ։ Խփենք նրա մեջ մի մեխ կամ
ողակ և թելով կախենք առաստաղից։ Վոլորենք թե-
լը ու ապա հանդիսությունները նրան։ Թելը կսկսի
հետ վոլորվել և գունդը կսկսի պտտվել ինքն իր շուր-
ջը, կամ ինչպես ասում են, իր առանցքի շուրջը։

Բայց ինչ բան է նրա առանցքը։ Դա մի յերեա-
կայական գիծ է, վոր անցնում ե գնդի միջով հենց
այն թելի ուղղությամբ, վորից նա կախված է։ Եերբ
գունդը պտտվում է, պտտվում են նրա բոլոր թե ար-
տաքին, թե ներքին մասերը։ Հանդիսություն մի-
այն նրա առանցքը, վորի շուրջը պտտվում և ամրող
մնացած գունդը։

Այդպես, ուրեմն, առանցքը յերեակայական գիծ
է, վորի շուրջը պտտվում ե գունդը։ Այդպես պտըտ-
վում ե իր առանցքի շուրջը մեր յերկրագունդը, այդ-
պես և պտտվում առանցքի շուրջը նաև Արևը։ Ա-
ռանցքի յերկու ծայրի կետերը կոչվում են թեզեններ-
մեկ թեեռը հյուսիսայինն է, մյուսը հարավայինը։
Մեր գնդի վրա դոտի կապենք նրա մեջտեղից այն-
պես, վոր այդ շրջանը ամեն տեղ, իր բոլոր կետերում
յերկու թեեռներից ել նույն տարածության վրա լինի։
Այդ շրջանն է, վոր կոչվում է հասարակած։

Հասարակածը նույնպես յերեակայական գիծ է։
Մենք կարող ենք պատկերացնել այն ամեն մի գնդի
վրա, որինակ, յերկրագնդի, Արևի վրա։ Այն հարթու-
թյունը, վորի վրա գտնվում է հասարակածը, անց-
նում է հենց ուղիղ գնդի մեջտեղով և բաժանում է
նրան յերկու կեսի։

Մենք արդեն ասացինք, վոր բոլոր մոլորակներն

այնպես են պատվում Արեի շուրջը, վոր նրանց որ-
բիաները մի փոքր միայն թեքվում են ընդհանուր
հարթությունից. նրանք բոլորն ընկած են համարյա-
նույն հարթության վրա, վոր անցնում և Արեի հասա-
րակածով: Դա նշանակում է, վոր Արեի շուրջը մո-
լորակների գծած ուղիները վորոշ տարածության վրա
համարյա թե գոտեվորում են Արեի հասարակածը:



Նկ. 14. Լուպլառ

Բայց վորտեղից և առաջանում այդպիսի կանո-
նավորություն նրանց շարժման մեջ: Ինչո՞ւ նրանք
բոլորն ել շարժվում են նույն ուղղությամբ (արե-
մուտքից արևելք) և ինչո՞ւ նրանց որբիաները ընկած:
Են համարյա նույն հարթության վրա: Դա նրանով չի
բացարձում, արդյոք, վոր բոլոր մոլորակներն ել
առաջացել են միննույն ընդհանուր պատճառից: Յեվ
այդ պատճառը չե՞, վոր ստիպել ե նրանց բոլորին

այդպես կանոնավոր, միտուսակ կատարել բրենց
շարժումը Արևի շուրջը:

Դիտնականները հետղհետե յեկան այն յեզրակա-
ցության, վոր բոլոր մոլորակներն առաջացել են Ա-
րևից: Դրանք Արևի բաժանված, կարված մասերն են:
Արևը նրանց ընդհանուր նախահայրն է: Բայց ի՞նչ-
պես կարող եր պատահել, վոր նրանք բաժանվելին
Արևից:

XVIII դարում Ֆրանսիայում ազրում եր Հայտնի
գիտնական Բյուֆոնը: Նա առաջինն եր, վոր փորձեց
գիտականորեն բացատրել մեր արեգակնային համա-
կարգության առաջացումը: Նրա կարծիքով շատ ա-
ռաջ, մեղնից անսահման հեռու ժամանակներում Ա-
րևի վրա գիտավոր ասող ե ընկել: Այդ հարվածից
Արևից պոկվել ե մի փոքրիկ մաս: Նա ել բաժանվել
ե մի քանի առանձին մասերի: Արևի ճգողական ու-
ժի շնորհիվ նրանք չեյին կարող հեռանալ նրանից և
սկսել են պտտվել նրա շուրջը: Ժամանակի ընթաց-
քում նրանք սառել են, ծածկվել են կեղեռով և դար-
ձել խավար մոլորակներ:

Բայց Բյուֆոնի բացատրության մեջ ամեն ինչ
պարզ չեր, շատ բան կիսատ եր մնում: Արեգակնային
համակարգության առաջացման ավելի հիմնովորված
ե գիտական բացատրություն ե տալիս Փրանսիական
մի այլ մեծ գիտնական՝ Լապլասը XVIII դարի վերջե-
րին: Նրա ուսմունքը զարմանալի լավ համաձայնեց-
րած եր իր ժամանակակից գիտության բոլոր ավյանե-
րի հետ: Այդ պատճառով նա ընդունվեց բոլոր գիտ-
նականների կողմից և շատ յերկար ժամանակ համար-
վում եր մեր արեգակնային աշխարհի առաջացման ա-
մենաճիշտ և ամենաավանական բացատրությունը:
Տեսնենք ուրեմն, ինչպես են ըստ Լապլասի առաջացել
մեր Յերկիրը և մյուս բոլոր մոլորակները, ինչպես ե
զոյացել նաև ինքը, Արևը:

ՏՅԱՉՎԱՍ ՆԵ ԸՍՏ ԼԱՎԱՌԱՄ ԱԽԱՋԱՑԵԼ ԵԵՐԿԻՐՔ
ՅԱԿ ԱՐԵՒԱԿԱՆԱՑԻՆ ՀԱՄԳՈՎԱՐԴՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՆ
ՄՅՈՒՐԲԱԿՆԵՐՔ


Դա յեղել և միլիոնավոր տարիներ սրանից առաջ՝
Այն ժամանակ չկային վոչ միայն Յերկիրը և մյուս
մոլորակները, չկար նաև Արեն այն ձեռվ, ինչպես
անսում ենք նրան մենք այժմ։ Բայց այն ամբողջ
տարածության մեջ, վորտեղ այժմ դանվում են Արեր,
Յերկիրը և մյուս, մոլորակները, այդ ամբողջ հսկա-
յական տարածության մեջ ցրված եր արտասովոր
բարակ, թեթև գաղային մի նյութ։ Նա շատ անգամ
տվշի թեթև եր, քան բոլոր այն գաղերը, վոր մենք
այժմ գիտենք Յերկիրի վրա։

Հետո այդ թեթև նյութն սկսեց սեղմվել և ձըդ-
պել զեպի կենարոն։ Նրանից առաջ յիկալ վիթխարի
մեծության մի մշուշային գունդ։

Այդ գունդը սկսում և պտտվել իր առանցքի շուրջ
և միաժամանակ շարունակում և սեղմվել և խտա-
նալ։ Սեղմվելու հետևանքով նա սկսում և տաքանալ
ներսից, իսկ նրա շարժումն ավելի ու ավելի արագա-
նում է։ Նրա թեթև մշուշային նյութը հետզհետե
ձգվում և զեպի կենարոնը և խորանում է։ Յեզ կա-
ժացկամաց, այստեղ, կենարոնում գոյանում և ավելի
խիտ և լուսավոր միջուկը՝ ապագա Արեի սաղմը։
Իսկ թեթև մշուշային նյութը, վոր շրջապատում եր
նրան անսահման տարածության վրա, կարծես թե
կազմում և այդ սկզբնական Արեի մթնոլորտը։

Յեզ այսպես, մեր այդ հսկայական գունդը՝ այդ
սկզբնական Արեն իր անընդդրելելի մթնոլորտի հետ
միասին շարունակում և շարժվել ավելի և ավելի մեծ
արագությամբ։ Այդպես արագ պտտվելուց նա սկսում
և հետզհետե տափականալ։ Նա սեղմվում և բնեոների
յուտ և լայնանում հասարակածի մոտ։ Հասարակածի
մոտի այդ լայնացած արտաքին մասերը ավելի արագ
են պտտվում, քան զնդի մյուս մասերը։ Յեզ ահա-
վերջապես, նրանք հետ են մնում, բաժանվում են

Նկ. 15 Արեգակնայիկ համակառությունը Տիրուած ծառական քաղաքացիությունը



մնացած գնդից։ Ստացվում ե մի ահազին բարակ, տափակ գազային ողակ, վորը շարունակում ե պը-տըտավել նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ վոր պտտվում ե մնացած գունդը, այսինքն՝ արևմուտքից արևելք։

Մինչդեռ զունդը շարունակում ե ավելի ու ավել-ի սեղմվել և խտանալ։ Դրա հետևանքով նրա և պոկված ողակի միջև առաջանում ե դատարկ տարա-ծություն։

Բայց ի՞նչ պատահեց այդ կտրված ողակի հետ։ Նա յերկար չմնաց վորպես մեկ ամբողջական ողակ, չուտպէլ նա բաժանվեց առանձին ողակների, վորոնք շարունակում եյին պատվել նույն ուղղությամբ։ Բայց ահա մեկ ողակը պատռվում ե և սկսում ե կծկվել, փոքրացնել ծավալը։ Ողակից հետզհետե առաջանում ե զունդ։ Յեվ այդ զունդը շարունակում ե պտտվել նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ վոր առաջ պտտվում եր ողակը։ Այսպես ե դոյացել առաջին ա-պագա մոլորակը։

Հետո պատռվում են և յերկրորդ, յերրորդ ողակ-ները։ Նրանցից գոյանում են նոր պտտվող զնդեր։ Նրանք բոլորը ապագա մոլորակներ եյին։

Յերրեմն ողակը պատռվելիս բաժանվում եր մի քանի առանձին մասերի։ Նրանցից առաջանում եյին առանձին փոքրիկ, գնդեր։ Յեվ այդ զնդերը բոլորը շարժվում եյին նույն ճանապարհով, վորով պտտվում եր առաջ այն ողակը, վորից նրանք առաջացել եյին։

Այդպես կարող են առաջացած լինել այն փոքր մոլորակները, վորոնք ամբողջ բազմությամբ պտըտ-վում են Արևի շուրջը Մարսի և Յուպիտերի որրիտ-ների մեջտեղում։ Այս փոքրիկ մոլորակները կոչվում են աստերոիդներ։ Այժմ նրանցից հայտնի յեն ավե-լի քան հազար հատ։ Աստղաբաշխները դիտում են նրանց ուժեղ հեռաղիտակներով։

Սկզբնական լայն ողակի բաժանման շնորհիվ ըս-տացված, մի այդպիսի ողակից առաջացել ե և մեր

Յերկիքը: Նա ևս շարունակում ե պտտվել Արեւի շուրջը նույն այն ուղղությամբ, ինչպես պտտվում եր այն ողակը, վորից ինքը գոյացել ե: Բայց գառնալով Արեւի շորս բոլորը, Յերկիքը սկսում ե պտտվել նաև իր առանցքի շուրջը: Այդ պատճառով նա ևս տափակացել ե բնեոների մոտ և լայնացել հասարակածի ժողով:

Այդ ժամանակ Յերկիքը, ինչպես կարծում եր Լապլասը, բաղկացած եր թեթև դազային նյութից: Յեվ ահա արագ շարժման հետևանքով նրանից ևս բաժանվում ե մի ողակ: Այդ ողակը պատռվում ե և կծկվում, դառնում մի փոքր գումոդ: Այդ գումոդը սկսում ե պտտվել Յերկիքի շուրջը: Այդպես ե առաջացել, Լապլասի կարծիքով, Լուսինը, Յերկը այդ հավիտենական արբանյակը:



Նկ. 16. Սատուրնը և նրա ողակները

Այդպիսի արբանյակներ են առաջանում վոչ միայն Յերկիքի մոտ, այլ և մյուս մոլորակների: Մի քանի մոլորակներ ունեն մեկից ավելի լուսիններ: Մարսըն ունի յերկուաը, Յուպիտերը՝ իննը:

Ավելի զարմանալի բաններ կարելի յե տեսնել Սատուրն մոլորակի վրա, վորը մեզնից ավելի հեռու յե, քան Յուպիտերը: Նա ունի ամբողջ տասն արբանյակ,

տասը լուսին։ Բայց ամենազարժանալին դեռ դա չի։ Յեթև նայննք Սատուրնին փոքր հեռաղիտակով, նա չի թվում այնպիսի կանոնավոր գնդիկ, ինչպես մյուս մոլորակները։ Նրա յերկու կողմեց՝ աջից և ձախից յերեւմ են ուռուցիկ մասեր։ Իսկ յեթև նայննք նրա վրա ուժեղ հեռաղիտակով, ասվա կտեսնենք, վոր նա շրջապատված և լայն փայլուն ողակով, վարը պարտվում են նրա շուրջը։ Վորտեղից և ստացվել այդ ողակը։ Ըստ Լապլասի կարծիքի՝ նա, ինչպես և մյուս ողակները, մի ժամանակ բաժանվել և Սատուրնից։ Բայց մյուս ողակները բոլորը պատվվել, կծկվել, գնդեր են դոյացրել և դարձել են Սատուրնի արրանյակները։ Իսկ այդ ողակն ամբողջապես պահպանվել և և մինչեւ այժմ ել պատվում են նրա շուրջը։ Նա, Լապլասի ասելով, ակնառու կերպով ապացուցում է մեզ, վոր իսկապես այդ ձեռվ կտրված ողակներից կարող ելին դոյանալ բոլոր մոլորակները և նրանց արբանյակները։

Մի գիտնական (Պլատո) կտարել և մի շատ հետաքրքրական փորձ, վորով նա կամենում եր հասկանալի ձեռվ բացատրել, թե ինչպես մեկ չշուշային գնդից կարող եր առաջանալ մեր արեգակնային համակարգությունը։

Նա վերցրել և քառանկյունի, ապակյա մի արկղ։ Նրա մեջտեղում ուղղացիդ ամբացված եր մետաղյա առանցք։ Այդ առանցքը այնպիս եր սարքված, վոր նրան՝ կարելի յեր արագ պտտեցնել։

Այդ արկղի մեջ նա լցրեց սկզբում ջուր։ Հետո նա սկսեց քիչ-քիչ ավելացնել սպիրտ, մինչեւ վոր ստացվեց մի այնպիսի խառնուրդ, վորը նույն խտությունը ու թեթևությունն ուներ, ինչ վոր ձիթապտղի ձեթը։ Դրանից հետո նա սկսեց առանցքի վրայով, ապակյա խողովակի ողնությամբ, զդուշորեն կաթիւ կաթիւ լցնել այնտեղ ձիթապտղի ձեթ։ Կաթիւները բոլորը միացան և կազմեցին մի գումար։

Այն ժամանակ նա սկսեց արագ շարժել առանց-

քը: Նրա հետ միասին սկսեց պտտվել և ձեթի գումա-
դը: Պատվելով նա տափակացավ: Յեզ վորքան արագ-
եր պտտվում զունդը, այնքան նա ամելի յեր տափա-
կանում և յայնանում եր մեջտեղում:

Իսկ ի՞նչ կատարվեց հետո: Յերբ զունդն ավելի
արագ պտտվեց, նրանից բաժանվեց մի ողակ: Այդ-
ողակը սկզբում պտտվում եր նույն ուղղությամբ,
ինչպես և դունդը: Հետո նա հանկարծ կտրատվեց մի
քանի մասերի: Այդ մասերը կծկվեցին և դարձան
փոքրիկ դնդեր, վորոնք շարժվում եյին նույն ուղղու-
թյամբ: Զե՞նք տեսնում մենք այստեղ արդյոք,—
պնդում եյին Լառլասի կողմնակիցները,— փոքր չա-
փով նույնը, ինչ վոր տեղի յեր ունեցել մի ժամանակ
հսկայական չափերով յերկնային տարածության մեջ:
Ինչպես պտտվող փոքրիկ դնդից են բաժանվում ո-
ղակներ, նույնպես ել նրանք բաժանվել են պտտվող
ահազին մշուշային դնդից: Յեզ ինչպես ձիթե ողակ-
ները պտտվում և դառնում են դնդիկներ, նույնպես
ել հսկայական մշուշային ողակները պատռվում, կը-
լորանում և դնդեր եյին դառնում:

Իսկ ի՞նչ կատարվեց մեր հսկայական պտտվող
դնդի հետ: Նրանից բաժանվում եյին՝ նորանոր մոլո-
րակներ: Իսկ ի՞նքը շարունակում եր ձգվել դեպի
կենտրոն և խորանալ: Իսկ այն լուսավոր միջուկը,
վոր գանվում եր նրա կենտրոնում, ավելի ու ավելի
ուժեղ և բոցավառվում և վերջապես դառնում է կու-
րացնող ու փայլուն մի աստղ, վորը մենք այժմ ան-
վանում ենք մեր Արեւը: Յեզ այն փոքր դնդերը, վո-
րոնք բաժանվել եյին նրանից, նույնպես չիկանում,
են տաքությունից և դառնում փոքրիկ արևներ:

Պատկերացրեք մի հսկայական հրե Արեւ և նրա
շուրջը պտտվող ուրիշ փոքր արևներ: Այդպես եյին
Յերկիրը և մյուս մոլորակները միւլոնավոր տարիներ
առաջ:

Անցան անվերջ դարեր: Արեւն ել ավելի սեղմ-
կեց, բայց ելի առաջիւ պես պայծառ և կուրացնող

փայլով շողում և յերկնքում։ Իսկ նրանից բաժանված փոքրիկ գնդերն անհամեմատ ավելի շատ կորցրին իրենց տաքությունը և մեկը մյուսի հետեւից սկսեցին սառմել։ Դրսի կողմից նրանց վրա դայացավ ամուռ կեղեւ, և նրանք դադարեցին փայլել իրենց սեփական լույսով։ Նրանք դարձան մութ մոլորակներ, վորոնք այժմ փայլում են Արևի արտացոլված լույսով։



Նկ. 17. Պլատոյի փորձը

Մեր արբանյակ Լուսինն անհամեմատ ավելի փոքր և, քան Յերկիրը։ Այդ պատճառով ել նա բոլորովին սառել և Յերկիրից շատ ավելի առաջ։ Այժմ նա մեռած մոլորակ է։ Հեռաղիտակով նրա վրա յերկում են սարեր։ Բայց նրա վրա չկա վոչ ջուր, վոչ ոդ և վոչ ել վորեւել կյանք։

Բայց մեր Յերկիրը դեռ իր ամբողջ տաքությունը չի կորցրել։ Նրա ներսում դեռ բարձր տաքություն և պահպանվում։ Նրա արտաքին ամուռ կեղեւի տակ դեռ ալեկոծվում և հրե ծովը, հալած հրահեղուկ մազման։ Յել նրա այդ ներքին տաքությունը, այդ հրահեղուկ մազման հիշեցնում են այն շատ հեռավոր ժամանակը, յերբ մեր Յերկիրը դեռ նոր եր զոյացել։ Նրանք հիշեցնում են այն ժամանակը, յերբ Յերկիրն ամբողջովին կրակ եր և Արևի պես շիկացած, սլանում եր այն մեծ Արևի շուրջը, վոր կյանք եր տվել իրեն։

11. ԳԵՐԵՏԵԼԸ ԵԵՎ, ԱԱՅՆԱՎԱՐ ՀԵՌԱԴԻՑԱՆԵՐԸ, ՈՒՐՈՎՆԻ
ԵԵՎ, ՆՐԱ ԱՐԲԱՆԵՑԱՆԵՐԸ ՀԱՅՑԱԴՐՄԱԿԻՄ Ա. ԳԵՐ-
ԵՏԵԼԻ ԿՈՂՄԻՑ, ԼԱՊԱՍԱՌ ՈՒՄՄՈՒՆԴԻՆ ՀԱԿԱՑՈՂ,
ՀԱՅՑԱԴՐՄԱԿՈՒՄՆԵՐ

Մենք արդեն ասացինք, վոր Լապլասի մտքերը
մեր արեղակնային համակարգության ծագման մա-
սին շատ լավ զուգակցվում եյին այն ժամանակիա
գիտության բոլոր տվյալներին։ Այդ պատճառով,
ինչպես գիտնականները, նույնպես և ընդհանրապես,
դարձացած մարդիկ ընդունեցին նրա ուսմունքը
վորպես միանդամայն հավանական։ Թվում եր, վոր
թե մեր Յերկերը, թե մյուս բոլոր մոլորակները, թե
ինքը Արեւ առաջացել են իսկ և իսկ այնպես, ինչպես
ասում եր Լապլասը։ Լապլասը արտահայտում և իր
մտքերը վորպես որամիտ մի յենթաղբություն։ Դա,
ինչպես գիտնականներն են ասում, գիտական մի հի-
պոքեց եր, այսինքն միայն յենթաղբություն, վոր
կարող եր արդարանալ, կարող եր և չարդարանալ։
Բայց այդ հիպոթեզն այնքան պարզ և ներդաշնակ եր
և այնքան լավ եր կազմում այն ամենի հետ, վոր
այն ժամանակ հայտնի յեր աստղաբաշխության մեջ,
վոր շատերին նա իրականություն եր թվում։ Մինչ-
դեռ չուտով աստղաբաշխներն արեցին նոր հայտնա-
գործություններ, վորոնք վոչ միայն չեյին զուգակց-
վում Լապլասի ուսմունքին, այլ ուղղակի հակասում
եյին նրան։

Այն ժամանակ, յերբ Ֆրանսիայում հայտնի Լապ-
լասը դրում եր իր գիրքը աշխարհի կառուցման մա-
սին, Անգլիայում ապրում եր մի այլ նշանավոր գիտ-
նական՝ Վիլյամ Գերշելը։ Նա ծագումով Հաննովե-
րից եր (այժմյան Պրուսիայի դավառ), բայց հետո
տեղափոխվել եր Անգլիա։ Նրա հայրը չքավոր յերա-
ժիշտ եր, ինքը Վիլյամ Գերշելը նույնպես սկզբում
զբաղվում եր յերաժշտությամբ։ Հետագայում նա
հափշտակվում և մաթեմատիկայով և Փիզիկայով,
մանավանդ նրա այն բաժնով, վոր կոչվում եր ոպտի-

հա, այսինքն գիտություն լույսի մասին։ Նա սովորեց հայելիներ հղել և սկսեց պատրաստել շատ լավ հայելապահյա հեռադիտակներ։

Հեռադիտակները, այդ հսկայական խողովակները, վորոնց միջոցով աստղաբաշխները դիտում են յերկնային լուսատուները, լինում են յերկու տեսակի։ Բոլոր հեռադիտակների գլխավոր մասը կազմում է մի մեծ և շատ յերկար խողովակ՝ ապակիների մի ամբողջ սիստեմով։ Վորոշ հեռադիտակների դեպի յերկինք ուղղվող խողովակի վերին մասում գտնվում է յերկու կողմէից ուռուցիկ ապակի, այսպես կոչված որյեկտիվ։ Իսկ խողովակի ցածի մասում գտնվում են մի քանի ապակիներ, վորոնք մեծացնում են դիտվող առարկան։ Դա այսպես կոչված ոկուլյարն է (ակնապակի)։

Եերբ աստղաբաշխը ուղղում է հեռադիտակը դեպի վորոնք յերկնային լուսատու, այդ լուսատուից յելող ճառագայթներն անցնում են ոբյեկտիվի միջով և խողովակի ցածի մասում տալիս են նրա փոքր որատիերը։ Բայց քանի վոր աստղաբաշխը նայում է այդ պատկերի վրա ոկուլյարի միջով, ապա նա թըգում և նրան մեծացած¹⁾)։

Մի այլ ձևի հեռադիտակների խողովակի վերին մասում յերկուուցիկ ապակու փոխարեն դրվում է զողավոր հայելի։ Այդ հայելին ճանկում ե այն առարկան, վոր կամենում ե դիտել աստղաբաշխը և արտացոլում ե այն մի այլ հայելու վրա։ Աստղաբաշխը նայում ե այդ արտացոլված պատկերին նույնպես ոկուլյարի միջով և տեսնում ե նրան մեծացած դիրքով։ Այդպիսի զողավոր հայելի ունեցող հեռադիտակները կոչվում են հայելավոր²⁾)։

1) Սակայն պետք ե նկատել, վոր քանի վոր աստղերը մեղնից չափազանց հեռու յեն, նույնիսկ ամենաուժեղ հեռադիտակների մեջ նրանք յերեսում են միայն կետերի նման։

2) Հայելավոր հեռադիտակը այլ կերպ կոչվում է ուժիւկ-

Այդպիսի հայելավոր հեռաղիտակներ սկսեց պատ-
րաստել Գերշելը:

Հետզհետե նա ինքն սկսեց գրավվել աստղաբաշ-
խությամբ և դարձավ իր ժամանակվա ամենանշանա-
վոր աստղաբաշխը: Նա իր համար պատրաստեց մի
հսկայական հեռաղիտակ, վորի խողովակի յերկա-
րությունը Յ մետր եր և չուտով նրան հաջողվեց այն-
պիսի հայտնագործություններ կատարել, վորոնք
միանդամից նրան հռչակավոր դարձրին:



Նկ. 18. Վ. Գերշել

1781 թվի մար-
տի 13-ին Վ. Գեր-
շելն իր հեռաղիտա-
կով յերկինքը դիտե-
լիս, Յերկվորյակ-
ների համաստեղու-
թյան մեջ նկատեց
մի նոր աստղ: Նա
մի փոքրիկ գնդի-
կի տեսք ուներ և
փաթաթված եր
նուրբ մշուշով: Մի
առժամանակ հե-
տո այդ աստղը փո-
խեց իր դիրքը:
Պարզ եր, վոր նա
շարժվում ե մյուս

աստղերի մեջ: Վ. Գերշելն սկզբում կարծեց, վոր դա
ոչխառապ է: Այդ նոր լուսատուն սկսեցին դիտել և
այլ աստղաբաշխներ և չուտով յեկան այն յեղբակա-

տոր, իսկ այն հեռաղիտակը, վորի խողովակի վերին մասում
դրված և յերկղողավոր տպակի, կոչվում են ուժբակար:

ցության, վոր դա նոր, մինչ այդ դեռ անհայտ մոլորակ ե:

Նրան անվանեցին Ուրան:

Յեղ շատ հին ժամանակներում, և ավելի ուշ դարերում, մինչ Գերշելը, ինչպես ասացինք, աստղաբաշխները, Յերկրից բացի, գիտեյին հինգ մոլորակ: Այդ մոլորակներն եյին՝ Մերկուրին, Վեներան, Մարսը, Յուպիտերը և Սատուրնը: Այժմ գըտնըլված եր վեցերորդը: Կարճ ժամանակում աստղաբաշխներն ուսումնասիրեցին նրա չարժումը յերկրներում, հաշվեցին նրա որբիաը և նրա հեռավորությունը Արեւից: Նրանք զտան, վոր Ուրանը զտնվում ե անհամեմատ ավելի հեռու, քան Սատուրնը և 19 անդամ ավելի հեռու. յե զտնվում Արեւից, քան Յերկիրը: Համապատասխան չափով նրա որբիտն ել մյուս բոլոր մոլորակների որբիտներից մեծ ե: Նա մի պտույտ է կատարում Արեւի շուրջը 84 տարում, այլ կերպ առած, նրա մի տարին հավասար է 84 յերկրային տարվա:

Այդ ժամանակվանից Վիլյամ Գերշելի անունը հռչակվեց ամբողջ գիտական աշխարհում: Իսկ նա շարունակում եր դիտել յերկինքը և նոր հայտնադրություններ անել: 1787 թվի փետրվարի 17-ին Վ. Գերշելն իր հեռադիտակով Ուրանը դիտելիս նկատեց նրա մոտ յերկու գումատ աստղ: Դիտելով նրանց և հետազոտ գիշերները, նա նկատեց, վոր այդ աստղերը շարժվում են Ուրանի հետ, և այսպես ասած, ուղեկցում են նրան իր կատարած շարժման ընթացքում: Նա ճիշտ հասկացավ, վոր դրանք Ուրանի արանյակներն են, այսինքն նրա լուսինները:

Հետազյում մի ուրիշ գիտնական հայտնաբերեց Ուրանի ևս յերկու արբանյակներ: Այդպիսով դուրս յեկավ, վոր նոր մոլորակը չորս լուսին ունի: Յերբ աստղաբաշխները լավ ուսումնասիրեցին նրանց դարձը Ուրանի շուրջը, նրանք տեսան, վոր նրանց շարժման մեջ աչքի չի ընկնում այն կանոնավորությունը, ինչ

վլոր նկատելի յե ուրիշ մոլորակների և նրանց արբան-
յակների մեջ:

Լապլասը կարծում եր, վոր բոլոր մոլորակները
և նրանց արբանյակները պտտվում են նույն ուղղու-
թյամբ, ինչ ուղղությամբ վոր Արեւը պտտվում ե իր
առանցքի շուրջը: Այդ բոլոր շարժումները կա-
տարվում են ժամացույցի սլաքի հակառակ ուղղու-
թյամբ: Իսկ յերբ Ուրանի արբանյակների շարժումը
հայտնի դարձավ, պարզվեց, վոր նրանք շարժվում են
այլ ուղղությամբ, քան այն, վոր յենթադրվում եր
ըստ Լապլասի ուսմունքի: Հետազայում պարզվեց
նաև, վոր Սատուրնի նոր հայտնաբերված արբանյակ-
ներից մեկը և Յուպիտերի յերկու արբանյակները
նույնպես այլ ուղղությամբ են շարժվում: Այն ե՝
սրանց շարժման ուղղությունը հակառակն է մյուս
բոլոր մոլորակների և նրանց արբանյակների շարժման
ուղղությամբ:

Վերջապես, 1846 թվին հայտնաբերվեց մի նոր մո-
լորակ, վոր կոչվեց Նեպտուն: Պարզվեց, վոր Նեպ-
տունն ունի միայն մի արբանյակ, վորը նույնպես
հակառակ ուղղությամբ և պտտվում:

Այս բոլոր նոր և հետազա հայտնաբերումները
հարփած հասցրին Լապլասի հիպոթեզին¹⁾: Նրանք
վոչ միայն չեյին գուգակցվում այդ հիպոթեզին, այլ
ուղղակի հակառակ եյին նրան: Հետազայում գիտ-
նականները գտան և ուրիշ շատ բաներ, վոր հնարա-
վոր չեր բացատրել Լապլասի ուսմունքով: Լապլա-
սի գեղեցիկ և ներդաշնակ սիստեմը խախտվեց և
դիտնականներն ստիպված եյին մեր Արեւի և նրա մո-

1) Բացի դրանից, այն փաստը, վոր ինքը՝ Նեպտունը իր
առանցքի շուրջը նույնպես հակառակ ուղղությամբ և պտտվում,
ինչպես և իր արբանյակը, և վոր Ուրանը պտտվում և իր
առանցքի շուրջը, վորը համարյա ճիշտ ընկած և նրա որրիսի
Հարթության վրա, նույնպես անհրաժեշտ դարձրին Լապլասի
ուսմունքից հրաժարվել:



Նկ. 19. Գերշեղը Հայտարկելում և Ուրան մոլորակը

լորակների առաջացման նոր բացատրություններ վորոննել:


12. ՄԵՐԱԿԱՎԱՆԴԱՆՆԵՐ ԵՎԱ ԱՍՏՂԱՅԻՆ ԿՈՒՑԵՆՐ
Վ. ԴԵՐԸԵԼ ՄԵՐԱԿԱՎԱՆԴԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒ-
ԹՅԱՆՆԵՐ ՄԵՐԱԿԱՎԱՆԴԱՆՆԵՐԻ ՑԵՐՔՆԵՐԸ
ԽՆԱԳԻՆ ՆՐԱՆԴ ԵԵՐԵՎԱՆԻՄ ԵՑՄՆ ԴԵՐԸԵԼ ՃԵՌԱԴԱՎԱ-
ԿԱՎ, ՄԵՐԱԿԱՎԱՆԴԱՆՆԵՐԻ ԿԱՎԸ ԱՍՏՂԱՅԻՐԻ ՀԵԶ

Մինչ այդ Վ. Գերշելը պատրաստեց իր համար
մի նոր հեռաղիտակ, առաջինից ավելի մեծ: Նրա
խողովակի յերկարությունը 12 մետր էր, իսկ արտա-
ցոլադ հայելու լայնության կտրվածքը համարյա մեկ
ու կես մետր: Այդպիսի մեծ և ուժեղ հեռաղիտակ
այն ժամանակ ամբողջ աշխարհում չուներ և վոչ մի
աստղաբաշխ: Այդ պատճառով ել Վ. Գերշելը կարող
եր նրանով հեռաղոտել այնպիսի մանրամասնություն-
ներ, վորոնք չեյին կարող նկատել մյուս աստղա-
բաշխները:

Ուղղելով իր հօկայական հեռաղիտակները դեպի
յերկնքի զանազան մասերը, Վ. Գերշելը ուշադրու-
թյուն դարձրեց այն բանի վրա, վոր անշարժ աստ-
ղերի մեջ ցրված են բազմաթիվ նույնազես անշարժ,
գումատ, աղոտ լուսավորված մարմիններ: Նրանք
նման եյին թեթև, նուրբ ամպերի, կամ մշուշի կը-
տորտանքի:

Այդպիսի յերկնային մարմիններ առաջ ել հայտնի
եյին աստղաբաշխներին և կոչվում եյին մշուշազանգ-
վածներ: Նրանցից մի քանիսը, ճիշտ ե, շատ քչերը,
ամենապայծառները, տեսանելի յեն նույնիսկ հասա-
րակ աչքով: Արաբական աստղաբաշխները դիտեյին
մի քանի մշուշազանգվածներ դեռ X դարում, այ-
սինքն հեռաղիտակի դյուտից շատ առաջ: Միայն,
յերբ իտալացի հայտնի դիտնական Գալիլեյը XVII
դարի սկզբին (1609) պատրաստեց առաջին հեռաղի-
տակը, աստղաբաշխներն սկսեցին հայտաբերել նոր
մշուշազանգվածներ:

Արդեն յնրեք տարի հետո, 1616 թ. գերմանացի աստղաբաշխ Մարիյը Անդրոմեդա համաստեղության մեջ նկատեց մի ինչ վոր տարօրինակ, ինչպես ինքն եր ասում՝ «ահռելի» աստղ։ Դա այժմ լավ հայտնի Անդրոմեդայի մշուշազանդվածն եր։ Այդ մեծ մշուշազանդվածը լավ տեսողություն ունեցող մարդիկ կարող են տեսնել նույնիսկ հասարակ աչքով։ Առաջներում նրան հաճախ դիսաստղի տեղ երին ընդու-



Նկ. 20. Գերշելի վիթխարի հեռադիտակը

Նում։ 1618 թ. Շվեցարիայում աստղաբաշխ Ցիզատը հայտաբերեց մշուշազանդված Որիոն համաստեղության մեջ։ Ավելի ճիշտ, նա տեսավ այդ մշուշազանդվածի միայն մի մասը, վորը նույնպես կարելի յեր տեսնել հասարակ աչքով։

Բայց առաջվար հեռադիտակները շատ թույլ եյին
և նրանցով յերեսում եյին շատ քիչ մշուշաղանդված-
ներ: Զարմանալիք չե ուրեմն, վոր XVIII դարի վերջե-



Ֆիլտրումեղա համաստեղության մշուշաղանդվածը

բում, այսինքն այն ժամանակ, յերբ Վ. Գերշելն
սկսեց ուսումնասիրել յերկինքը իր մեծ հեռադիտակ-
ներով, հայտնի յեր ընդամենը մոտ հարյուր մշուշա-
ղանդված: Յեվ սկսուք ե ասել, վոր մինչ այդ աստ-
զաբաշխները քիչ նշանակություն եյին տալիս նրանց
և քիչ եյին հետաքրքրվում նրանցով:

Վ. Գերշելը վոր կողմ վոր ուղղում եր իր հեռա-
դիտակը, ամեն տեղ հայտաբերում եր նոր մշուշա-
ղանդվածներ: Նա ինքը միայն գտել ե 2500 մշուշա-
ղանդվածներ: Նրանից առաջ վոչ վոք չեր տեսել և

Հիմա ել ուրիշ աստղաբաշխների համար դժվար եր
տեսնել նրանց իրենց թռւյլ հեռաղիտակներով։ Իսկ
գերշելին արդեն հաջողվել եր մի նոր կարևոր հայտ-
նադրժություն անել։



Նկ. 22. Աստղային կույտ Հերկուլես համաստեղության մեջ

Ուժեղացնելով իր հեռաղիտակները, նա նկա-
տեց, վոր շատ մշուշաղանովածներ, այդ թեթև թա-
փանցիկ ամպերը, կարծես թե ցրված մանր աստղեր
են։ Գերշելը համեմատում ե նրանց վայլուն ավագի

Հետ: Աստղերի այդպիսի մեծ կուտակումները աստղաբաշխները անվանում են աստղային կույտեր:

Վորքան ավելի ուժեղ և լինում հեռադիտակը, այնքան ավելի շատ մշուշաղանգվածներ են յերեսում՝ վերածված առանձին մանր աստղերի: Յեվ Գերշելն սկսեց մտածել, վոր յերեսի բոլոր մշուշաղանգվածները կարելի յե վերածել առանձին աստղերի, յեթե միայն հաջողվի ավելի ևս ուժեղ հեռադիտակ պատրաստել:

Սակայն հետազայում, նոր հայտնաբերությունները ստիպեցին նրան փոխել այդ կարծիքը: Յեվ այդ ժամանակ նա յեկավ այն յեղբակացության, վոր գոյությունը ունեն յերկու տեսակ մշուշային գոյացումներ. մի տեսակը, դա աստղային կույտերն են, վորոնք թույլ հեռադիտակներով դիտելիս մշուշաղանգվածներ են թվում միայն այն պատճառով, վոր շատ են հեռու մեզնից, մյուս տեսակները իսկական մշուշաղանգվածներ են: Այս յեղբակացությանը նա հանգեց մշուշաղանգվածների յերկար ուսումնասիրությունից հետո: Յեվ հետազա դիտական հայտնագործությունները հաստատեցին, վոր նա միանգամայն իրավացի յեր:

Պատրաստելով իր նոր 12 մետրանոց հեռադիտակը, Վ. Գերշելն առաջին հերթին ուղղեց նրան Որիոն համատեղության մեջ գտնված, արդեն հայտնի մեծ մշուշաղանգվածի վրա: «Ժամանակ առ ժամանակ—ասում ե նա— յես վերադառնում եյի նրան և նորից դիտում իմ ահազին հեռադիտակներով: Այդ մշուշաղանգվածն ինձ յերեսում եր այնքան փայլուն և այնքան հոկայական, վոր բոլոր մշուշաղանգվածների մեջ նրան յես համարեցի ամենից մոտիկը»:

Դիտելով մշուշաղանգվածները և համեմատելով նրանց միմյանց հետ, Գերշելը զարմացել եր նրանց տարրեր, տեսքերի վրա: Յերբեմն մշուշաղանգվածները պատահում են միայնակ, յերբեմն յերկուսը միասին, յերբեմն յերեքը, պատահում են և խմբով:

Ախնում են վրոքը մշուշաղանդվածներ, լինում են և շատ մեծերը: Մի քանիսը հարյուր և նույնիսկ հազար անգամ ավելի մեծ են, քան մեր ամբողջ արեգակնային համակարգությունը: Բայց առանձնապես բազմազան են նրանց ձևերը: Պատահում են մշուշաղանդվածներ անկանոն ձևի, ամպի նման, անհամասար կարտլած ծայրերով: Ուրիշներն ունենում են կանոնավոր ձև, որինակ կլոր, կամ ձվաձև: Մի քանիսը նեղանում են ծայրերի մոտ, ինչպես ձկան պոչը: Իսկ յերեմն պատահում են ավելի տարրորինակ ձևեր:

Ահա թե ինչ ե պատմում Գերշելը այն մասին. թե ինչ տեսակ եյին թվում նրան մշուշաղանդվածները նրա հեռադիտակով. «Մշուշաղանդվածների մի կուտակման մեջ յես տեսա բազմազան ձևեր: Այնտեղ շողջողում եյին տարրեր ձևերով ցրված կրկնակի և յեռակի մշուշաղանդվածներ: Այնտեղ կային մեծերը և փոքրերը, ըստ վորում վերջիններն առաջինների արրանյակներն եյին թվում: Մի քանիսը յերեսում եյին վորպես նեղ շերտեր, մյուսները լուսավոր բժեր: Կային այնպիսիները, վոր հիշեցնում եյին հովհարներ, կամ փայլում կետեր, վոր իրենցից արձակում եյին ելեկտրական ճառագայթների խուրձեր: Կային և այնպիսիները, վոր ունեյին գիսաստղի տեսք, կամ մշուշային թաղանթով պատած աստղերի եյին նմանում»:

Առանձնապես հետաքրքրական եյին թվում նրան, այսպես կոչված՝ ողակային մշուշաղանդվածները: Այդ մշուշաղանդվածներն ունեն պայծառ լուսավորված արտաքին դղակ, իսկ նրանց ներսի մասը թույլ է լուսավորված: Պատահում եյին նաև մշուշաղանդվածներ, վորոնք ունեյին թույլ լուսավորված սկառառակի կամ շրջանի ձև:

Այդպիսի մշուշաղանդվածները նման են մոլորակների, վոր լուսավորվում են կողմնակի լույսով. Գերշելը նրանց անվանեց մոլորականման մշուշաղանդվածներ՝ (ռազետարներ տարածությունում):

Մի քանի մեծ մշուշաղանդվածների մեջ ոլորոշ
մասեր մյուսներից ավելի պայծառ են, կարծես թե



Նկ. 23. Որիոնի մշուշաղանդվածը

այստեղ մշուշային նյութը խիստ խտացած է: Առանձ-
նապես զարմանալի յեն թվացել Գերշելին այն մշու-
շաղանդվածները, վորոնց ներսում գտնվում են աստ-

զեր, կամ ավելի շուա՞՝ դրանք աստղեր են, փաթաթ-
ված թեթև մշուշային թաղանթով:

1790 թվի նոյեմբերի 13-ին, Գերշելի ասելով, նա
տեսավ վերին աստիճաննի տարրորինակ մի յերեսույթ—
զունատ մի աստղ, շրջապատված լուսավոր մթնոլոր-
տի բոլորովին կըսր բարակ շերտով: Այդ աստղը, ա-
սում և Գերշելը, բռնում և կենտրոնը. մթնոլորտը նրա
շուրջը բարակ և և նուրբ: Գերշելին խորը մտած-
մունք պատճառեց՝ այդ յերեսույթը: Ինչո՞ւ աստղը և
մշուշաղանգվածները գտնվում են այդպիսի սերտ
կապակցության մեջ: Ակնհայտ ե, վոր նրանց մեջ
գոյություն ունի ինչ վոր կազ: Յեթ ահա Գերշելի
դիմում հղանում և մի միտք՝ արդյոք մշուշաղանգ-
վածները ժամանակի ընթացքում չե՞ն դառնում աստ-
ղեր: Գոյություն ունի, մտածում եր նա, թեթև
մշուշային տիեզերական մի նյութ, վոր ցըված և ամ-
բողջ յերկնային տարածության մեջ: Այդ նյութը
հավաքվում և առաջացնում և մշուշաղանգվածները:
Իսկ մշուշաղանգվածները հետզհետե խտանում և
դառնում են աստղեր: Դրա համար պահանջվում են
ամբողջ միլիոնավոր տարիներ:

Սակայն ինչո՞ւ մշուշաղանգվածները այդքան-
տարրեր են իրենց ձևերով: Արդյոք այդ տարրեր ձե-
վերը չե՞ն հանդիսանում մշուշաղանգվածների զար-
դացման տարրեր աստիճանները, մինչև վոր նրանք
վերջնականապես դառնում են աստղ, կամ աստղեր:
Բայց ի՞նչպես մենք կարող ենք խոսել մշուշաղանգ-
վածների աստիճանական զարդացման մասին, և
ի՞նչպես մենք կարող ենք տեսնել նրանց մի ձևից մյու-
սին անցնելը, յեթե այդ բոլոր փոփոխությունները
կատարվում են միլիոնավոր տարիների ընթացքում:

Գերշելն ասում ե, վոր դքա համար կարիք չկա
այդքան յերկար ապրել: Դրա համար հարկափոր և մի-
այն ուշադիր դիտել յերկինքը և համեմատել միմյանց
հետ տարրեր յերկնային լուսատուները:

Նրա գլխում ծագեց մի յերջանիկ միտք: Նա ա-

սում եւ, վոր յերկինքը կարելի յեւ համեմատել այդու
կամ անտառի հետ, վորտեղ աճում են տարբեր հա-
սակի զանազան ծառեր: Յենթագրենք, մենք ցանկա-
նում ենք ուսումնասիրել, թե ինչպես եւ աճում և
զարգանում կաղնին, սկսած նրա ծլելուց և վերջաց-
րած խոր ծերությամբ: Մի՞թե՝ դրա համար հարկա-
վոր եւ տնկել կաղինը և ամբողջ կյանքում սպասել,
վոր նրանից հետզհետե աճի մեծ ծառ: Շատ ավելի
հեշտ եւ զնալ անտառ: Այնտեղ մենք կդունենք այդ
ծառերը իրենց զարգացման ամենատարբեր աստի-
ճաններում: Ահա մեր առաջ ծլող կաղինը, ահա և մի
տարբեկան յերիտասարդ բույսը: Այստեղ կարող ենք
դունել և մի քանի տարբեկան յերիտասարդ ծառ: Կտ
նաև մեծ, սպիրոտ կաղնի, իսկ այնտեղ ահա, բո-
լորովին ծեր, խոռոչավոր մի ծառ, վոր իր կյանքի
վերջին որերն եւ ապրում:

Այսպիսով մենք այստեղ տեսնում ենք միաժամա-
նակ կաղնու տարբեր հասակները, նրա զարդացման
տարբեր աստիճանները:

Հենց այս ձևով ել, Գերշելի կարծիքով, մենք
պետք եւ ուսումնասիրենք յերկինքը: Այստեղ մեր ա-
ռաջ միաժամանակ ներկայանում են և տարբեր հա-
սակի աստղեր, և տարբեր հասակի մշուշազանգված-
ներ: Հարկավոր եւ միայն կարողանալ ճանաչել, թէ
վոր ձևերն են ավելի վաղ ժամանակվա և ավելի յե-
րիտասարդ, և ընդհակառակը, վորոնք են ավելի հին
և ավելի ծեր:

Ինքը, Գերշելը փորձել եւ լուծել այդ խնդիրը: Նա
կարծում եր, վոր ամենայերիտասարդ մշուշազանգ-
վածները անկանոն ձև ունեցողներն են: Հետապա-
յում նրանք ընդունում են ավելի կանոնավոր ձև՝ կր-
յոր, ձվաձև կամ մի այլ ձև: Ապա նրանց մեջ զոյա-
նում են խտացումներ, առանձին միջուկներ, վորոնք
ժամանակի ընթացքում դառնում են աստղեր:

Գիտնականների հետազա հայտաբերումները հաս-
տատեցին, վոր Գերշելը շատ բանում իրավացի



Նկ. 24. Մշուշաղանգված կարստի համաստեղության մեջ
յեր: Սակայն, վորքան ել կատարյալ եյին այն ժամա-
նակվա համար Գերշնլի հեռադիտակները, նրանք մո-
շուշաղանգվածների կազմության մեջ չեյին կարող

պարզել այն մանրամասնությունները, ինչ վոր պարզ-վեցին աստղաբաշխների համար հետագայում:

Գերշելից հետո արդեն անգլիացի աստղաբաշխ Ռոսսը պատրաստեց Գերշելի հեռաղիտակից յերկու անգամ ավելի ուժեղ արտացոլող հեռաղիտակ: Այս հեռաղիտակի ողնությամբ նա հայտաբերեց մի շաբանոր մշուշաղանգվածներ, վորոնց չգիտել Գերշելը: Իսկ Գերշելի գտած մշուշաղանգվածների մեջ պարզ-վեցին այնպիսի մանրամասնություններ, վորոնց չերկարելի տեսնել նրա հեռաղիտակով:

Պարզվեց, վոր մշուշաղանգվածների մի ահազին մասն ունի պարուրային ձև: Բոլոր այդպիսի մշուշաղանգվածների ներսում գտնվում ե խտացած մասնիկ, իսկ նրանից դեպի յերկու կողմերը գնում են անկանոն վոլորված ճյուղեր, կամ պարուրներ: Այդպիսէ մշուշաղանգվածներն այժմ կոչվում են պարուրային:



Նկ. 25. Լիբայի ողականման մշուշաղանգվածը

Գերշելն իր հեռաղիտակով չեր կարող նշմարել պարուրները և այդ մշուշաղանգվածները նրան թը-կում եյին այլ, ավելի պարզ ձևի: Ներկայումս աստ-ղաբաշխներն առանձնապես մեծ նշանակություն են

ստալիս պարուրային մշուշագանգվածներին։ Ըևն-
թագրում են, վոր ամեն մի մշուշագանգված անցնում
է պարուրային ստադիալով (բնթացաշրջան)։

Այսպիսով, յերկնքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր գոյություն ունեն յերեք տեսակի յերկնային մարմիններ՝ մշուշաղանդվածներ, աստղեր և մոլորակներ։ Մշուշաղանդվածների մեջ ծնունդ են առնում աստղերը։ Իսկ աստղերը ժամանակի ընթացքում սառելով դառնում են խավար, պաղած մարմիններ, ինչպես մեր Յերկիրը և մյուս մոլորակները։


Այժմ աեսնենք, թե ի՞նչ նորություններ են իմացել մշուշազանգվածների մասին ժամանակակից դիտականները :

ՀՅ ԽՎ ԿԱՐՄԻՐ ՑԱՆՑ ԺԱԾՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԱԿԱՆ ԵՐԵ
ՄՅՈՒԾԱՎԱՆԴՎԱՐ ՄՅՈՒԾԻ ՄՅՈՒԾ, ՄՅՈՒԾԱՎԱՆԴՎԱՐ
ՔԱՅԻ, ԼԱԽԱՋՐԱՎԱՐՈՒՅ, ԳԵՂՋԵՐԻ, ՄՅՈՒԾԱՎԱՆԴՎԱՐ
ՀՅ, ԽՎ ՀՅ, ԵՍ ՍԿԱՆՈՒՄ ԵՐԱՇ ԱՐԱԿԱՑՅՈՒՅ, ՊԵՏՈՒ
ՀԱՅԱՎԱՆԴՎԱՐՈՒՅ, ՅԵՐԿԱՎԱՅԻ ՎԵՐԱ ՄՅՈՒԾՎԵՐԻ ՄՅԱՅԵՆ.
ՊԵՏՈՒՅԻ ԱՀԴՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒԾԵՐԻ Վ.Ի. ԽՎ ԽՎ ԽՎ
ԵՆ ԱՅԱՋՎԱՆԴՎԱՐ ՎԱՐՈՒՐԱՅԻ, ՄՅՈՒԾԱՎԱՆԴՎԱՐ ՎԱՐՈՒՐԱՅԻ,
ՎԱՐՈՒՐԱՅԻ ՄՅՈՒԾԱՎԱՆԴՎԱՆԴՎԱՐ ՎԱՐՈՒՐԱՅԻ ԱՅՏՎԵՐ
ՀԱՅԱՎԱՆԴՎԱՐ, ՀԱՐՄԱՆԱԴՎԱՐ ՀԱՆԱՎԱՐՈՒՅ, ՄՅՈՒԾ Ա.Ա.Ս.
ՄՅՈՒԾԻ ԿԱՐ ԳԵԼԱԿԱՑԿ, ՀԱՄԱԿԱՐՈՒՅ-ԱԿԱՐՈՒՅ ՎԵՐԿԵՍ

Ներկայումս աստղաբաշխները յենթադրում են, վոր մշուշագանգվածները բազկացած են մասումք շատ թեթև ցիրուցան գաղերից, մասամբ ել մանր պինդ մասնիկներից, փոքրիկ մետեորիտներից, կամ մետեորային փոշուց։ Նրանց լուսարձակումը շատ թույլ է։ Հառ յերեսութին նրանք արտացոլում են այն լույսը, վոր դցում են նրանց վրա հարևան աստղերը։ Գուցե և այդ լուսարձակումը ելեկտրական է։ Համենայն դեպք նրանք այնքան թույլ են փայլում, վոր շատ քիչ բացառությամբ, տեսանելի չեն հասարակ աչքի համար։ Նույնիսկ ամենառուժեղ հեռադիտակներով շատ մշուշագանգվածներ անտեսանելի յեն։ Կամ թե չեն շմարվում են միայն նրանց ամենավորոշակի և ցայտուն մասերը, իսկ թույլերը՝ վոչ։

Գոյություն ունեն նույնիսկ բոլորովին խավար՝
աներկույթ մշուշագանգվածներ։ Սակայն աստղաբաշխ-
ները նբանց մասին գիտեն լուսանկարչության չոր-
հիվէ։

Լուսանկարչական թիթեղիկը շատ ավելի դպայուն-



Նկ. 26. Մոլորականման մշուշագանգվածներ

Ե լույսի հանդեպ, քան մարդու աչքը և այնքան ավելի՝
դպայուն, վորքան ավելի յե լուսակայումը (ЭКСПОЗИЦИЯ)։
Նա յերկնքի վրա այնպիսի մանրամասնություններ և
բռնում, վորոնք տեսանելի չեն նաև ամենաուժեղ հե-
ռադիոսկոպներով։ Աստղաբաշխը ստիպված է լինում



նույն լուսանկարչական թիթեղիկն ուղղել դնպի յերկընքի նույն մասը մի քանի որ շարունակ։ Դրա վոխարեն նա լուսանկարի վրա դտնում և շատ այնպիսի բան, վոր չի կարող նշմարել մարդկային պէքը, ինչպիսի հեռաղիտակով ել նա զինված լինի։

Ըստ արտաքին տեսքի, մշուշաղանգվածները, ինչպես և առաջ, բաժանում են կանոնավորների և անկանոնների։ Կանոնավորների շարքին են պատկանում կլորները, կամ զնողաձեւերը և պարուրաշինները։ Բոլորովին այլ տեղ են հատկացնում աստղաբաշխները մուրբականման մշուշաղանգվածներին։ Մոլորականմանն էր չոչում այժմ յերկու տեսակ մշուշաղանգվածներ՝ առաջինը նրանք, վորոնք կլորակի կամ սկավառակի տեսք ունեն և յերկրորդը այնպիսինները, վորոնք ողակի տեսք ունեն և նրանց ներսում առտղ կա։

Կլոր կոչվող մշուշաղանգվածներն իսկապես այդպիսի կանոնավոր տեսք չունեն։ Յեթե նրանք միշտ անշարժ մնային, նրանք կարող եյին պահպանել զնդիձեւ։ Բայց նրանք պատվում են առանցքի շուրջը։ Այդպատճառով նրանք տափականում են բնեոների մոտ և յայնանում հասարակածի մոտ։ Ստացվում ե մի ձեւ, վոր հիշեցնում ե նարինջը։

Ժամանակի ընթացքում այդ մշուշաղանգվածը խտանում, ամրանում և և սկսում ե ավելի արագ պատվել։ Սրանից նա ավելի ևս տափականում ե, և սաանում վոսպնյակի կամ յերկուռուցիկ աղակու ձեւ։ Նրա ձեւը կարելի յե համեմատել նաև դրապանի ժամացույցի ձեւի հետ։ Յեթե այդպիսի մշուշաղանգվածին դիտողը նայում է կողքից, նա թվում ե իլիկաձեւ, այսինքն մեջտեղում լայնցած և դեպի ծայրերը նեղ։ Ահա թե ինչու այդպիսի մշուշաղանգվածներին աստղաբաշխները տալիս են վոսպնյակաձեւ կամ իլիկաձեւ անունը։ Սրանով սակայն մշուշաղանգվածների փոփոխությունները չեն սահմանափակվում։ Այս մշուշաղանգվածի մոտ գտնվում են այլ մշուշաղանգվածներ և

աստղեր։ Նրանք քաշում են սրան և, ինչպես աստղաբաշխներն են ասում, ունենում են նրա վրա մակըն-



Նկ. 27. Աշուշաղանդվածների ձևի հաջորդական
փոփոխությունները։

բացային ազդեցություն: Տեսնենք, ի՞նչ և նշանակում
այդ:

Դուք յերեկ լսած կլինեք, վոր մեծ և բաց ծովե-
րում ու ովկիանոսներում տեղի յեն ունենում յերե-
մույթներ, վորոնք կոչվում են մակրմբացություն և
տեղատվություն: Վեց ժամվա ընթացքում ջուրը ծո-
վում բարձրանում է, Հորդանում և ափի մոտ և յեթե
մերջինը ցած է, վողողում և ափը մեծ տարածության
վրա: Դա կոչվում է մակրմբացություն: Հետո վրա յե-
հասնում հակառակ յերեւություն: Մովի ջուրը իշխում
է, վեց ժամվա ընթացքում հեռանում և ափից, յեր-
բեմն մերկացնելով նրան մի քանի կիլոմետր տարա-
ծության վրա: Սա կոչվում է տեղատվություն: Տե-
զատվության ժամանակ կարելի յե ազատ առաջ գնայ
ծովի ուղղությամբ, նրա մերկացած հատակի վրա-
յով, վորտեղ քիչ առաջ ազմկում եյին ալիքները:
Մակրնթացության ժամանակ այդ ափը նորից ծած-
կըլում և ջրի տակ:

Մակրնթացությունների և տեղատվությունների
այդ յերեւութը բացատրվում է Լուսնի աղղեցությամբ
և Յերկրի վրա: Լուսինը, Յերկրի արդ հավիտենա-
կան ուղեկիցը, քաշում և նրան դեպի իրեն, ինչպես և
Յերկրը ձգում է Լուսին: Յեկ վորովհետև ջուրը
շատ ավելի շարժուն է, քան ցամաքը, այդ պատճա-
ռով ել Լուսնի ձղողական ուժին նա ավելի յե յեն-
թարկվում, քան ցամաքը: Ուստի, ովկիանոսի այն
մասում, վորի վրա աղղում է Լուսինը, ջուրը բարձ-
րանում և և կազմում և մեծ պատ, կամ դուրս ցըց-
ված մաս:

Բայց Լուսինը ձգում և Յերկրի վոչ միայն այն
յասը, վոր նրա կողմն և դարձած, նա ձգում և դեպի
իրեն ամրող Յերկրը: Բայց քանի վոր. Յերկրի
հակառակ կողմում ծովի հատակը ավելի մոտ և դըտ-
նըլում Լուսնից, քան ովկիանոսի ջուրը, ապա Լու-
սին այստեղ ծովի հատակը ավելի մեծ ուժով և ձր-
դում դեպի իրեն, քան ջուրը: Այստեղ ջուրն իր շարժ-



ման մեջ՝ զետիւս կուտինը հետ ե-
մուռ ծովի հատակից իսկ գրա-
շնորհիվ ջուրն այստեղ ել առա-
ջացնում ե ուսուցիկ մաս, կամ
սապատ:

Ցերը կուտինը՝ կատարում ե իր
ճանապարհը յերկնքում ովկիանո-
սի վրայով, նրա դիմացի ջրային
սապատը, նույնպես և Ցերկըի
հակառակ կողմի ջրի ուսուցիկ
մասը անընդհատ շարժվում են
կումնի շարժման ուղղությամբ։
Սրանից ել առաջանում ե մեր
դիտած յերեվույթը, այսինքն,
վոր ջուրը ովկիանոսի ափերում
մերթ բարձրանում է, մերթ իջ-
նում, առաջացնելով մակրնթա-
ցություններ և տեղատվություն-
ներ։

Նման մակրնթացային ազգեցու-
թյուն ունենում ե մեր Ցերկըի
վրա նաև Արեր. սակայն նա,
թեև բազմաթիվ անգամ մեծ ե
կումնից, բայց գտնվում ե Ցերկ-
ըից այնպիսի հակայական տա-
րածության վրա, վոր չի առա-
ջացնում նրա վրա այդպիսի աչ-
քի ընկնող մակրնթացություն-
ներ և տեղատվություններ, ինչ-
պես կումինը Սակայն, շատ թե-
քիչ չափով, բոլոր յերկնային
մարմիններն այդպիսի մակրն-
թացային ազգեցություն են ունենում միմյանց վրա։

Նշ. 22. Մակրնթացություն-
ների և ակդամագություն-
ների զառագործը

թացային ազգեցություն են ունենում միմյանց վրա։

Մեր մշուշաղանդվածը, վորի մասին արդեն խոսեցինք, չարժվում և տարածության մեջ: Նրա հարեւանությամբ շարժվում են ուրիշ մշուշաղանդվածներ և աստղեր: Այդ լուսատուները մակընթացություն են առաջացնում մեր մշուշաղանդվածի մեջ: Յեզ ահա նրա հասարակածի վրա, այն մասում, վոր դարձած է դեպի մոտեցող լուսատուն, առաջանում ե ուռուցիկ մաս: Նույն այդպիսի ուռուցիկ մաս ել առաջանում է մշուշաղանդվածի հակառակ կողմում: Յեթե այդ ուրիշ լուսատուն շատ մոտենա մեր մշուշաղանդվածին, նրա ուռուցիկ մասերն ավելի ու ավելի կմհծանան: Նրանք վեր են ածվում նյութի յերկու ահազին հոսանքների, կամ նյուղերի, վոր դուրս են թափվում մշուշաղանդվածի ներսի միջուկից: Յեզ քանի վոր մշուշաղանդվածն ամրող ժամանակ պտտվում ե իր առանցքի շուրջը, ապա յերկու այդ նյուղերը կամ հոսանքները վոլորվում են նրա շուրջը պարուրի ձեռք: Այդ պատճառով ել այդպիսի մշուշաղանդվածը կոչում են պարուրային:

Աստղաբաշխները կարողացել են նկատել վորոշ պարուրային մշուշաղանդվածների և նրանց նյուղերի մեջ նրանց միջուկից դուրս յեկած նյութի շարժում: Այսպիսով այն նյութը, վորից բաղկացած և մշուշաղանդվածը, հոսում ե նրա միջուկից դեպի նյուղերը կամ պարուրները: Աստղաբաշխները նկատել են և այն, վոր մշուշաղանդվածի պարուրային նյուղերն ամրող ջություն չեն պահպանում: Նրանք բաժանվում են առանձին թանձրացած մասերի, կամ միջուկների: Այդ միջուկներից ամեն մեկն իր մեծությամբ համապատասխանում է աստղի: Յեզ ամեն մի միջուկ ժամանակի ընթացքում իսկապես փոխվում, վեր և ածվում աստղի:

Ինչպես արդեն առացինք, կանոնավոր մշուշաղանդվածները կարող են ունենալ տարրեր ձեեր, վորոնք համապատասխանում են նրանց դարձացման տարրեր ստաղիաների:

Իսկապես, դիտելով կանոնավոր մշուշաղանգվածների լուսանկարները, մենք տեսնում ենք, վոր նրանց մի քանիսը զնդի պես կլոր են, մյուսները քիչ տափակացած, նարնջի ձև ունեն, յերբորդներն ավելի ուժեղ են տափակացած, այնպես վոր իրենց ձևով հիշեցնում են կլոր բլիթ, կամ դրազանի ժամացույց։ Այս հետեւողականությունը նրանց դասավորման մեջ, ինչպես արտահայտվել ե անդլիացի աստղաբաշխ Զինոր, համապատասխանում ե նրանց հասակի հետ, այլ կերպ ասած, «Նրանք տարբերվում են միմյանցից իրենց զարգացման աստիճաններով»։

Այս հետեւողականության մի ծայրը— ասում ե Զինոր— բանում են բոլորովին չտափակացած, այսինքն զնդակի նման կլոր մշուշաղանգվածները։ Այդպիսին մշուշաղանգվածներում դժվար ե հայտաբերել աստղեր, նրանք թվում են վորպես միապաղադ դազային կազմություն ունեցող ուռած զնդեր, կամ փոշու աղվամազ ամպեր։ Քանի զնում ենք այդ հետեւողականության ուղղությամբ, մշուշաղանգվածները ավելի տափականում են, բայց դեռ յերկար ժամանակ հնարավոր չի նրանց մեջ հայտաբերել առանձին աստղեր։ Միայն այն ժամանակ, յեր նրանք խիստ տափականում են, նրանց մեջ առաջին անգամ յերեւում են աստղեր։ Սկզբում նրանք յերեւում են արտաքին մասերում, մշուշաղանգվածի ողազոտու մոտ։ Ապա, զնալով հետեւողականության ուղիով դեպի ավելի տափակ մշուշաղանգվածները, աստղային ստաղիաներն սկսում են բռնել մշուշաղանգվածների ավելի ու ավելի մեծ մասերը, մինչեւ վոր, վերջապես, դիջում ե նաև կենտրոնը և նույնպես սկսում ե վեր ածվել աստղերի։ Գազային մշուշաղանգվածներից աստղերի զոյցումը Զինոր համեմատում ե այն բանի հետ, թե ինչպես գոլորշու խտացման ժամանակ դոյանում են ջրի կաթիլներ։ «Գաղի մշուշային զանգվածը խտանում, զառնում ե կաթիլ, իհարկե, աստղաբաշխական հակայական մասշտաբով, ինչպես զոլորշու ամ-

պերը խտանալով, դոյացնում են ջրի կաթիլներ։ Այսպես են ծնվել աստղերը։ Սրանով և բացատրվում, թէ ինչու աստղերը պատահում են մեծ խմբերով։ Ամեն մի այդպիսի խումբ ներկայացնում և մշուշային գաղղի մի գնդի արդյունք։



Նկ. 29. «Յեռանկյուն» համաստեղության մշուշաղանդվածը

Հետևապես կանոնավոր ձևի մշուշաղանդվածները վոչ միայն աստղերի բնակավայրերն են, այլ և նրանց ծննդավայրերը։

Սակայն չատ քիչ մշուշաղանդվածներ են բաղ-

կացած միայն աստղերից։ Մեկ մշուշազանդվյած միայն՝ քՅեռանկյունք համաստեղության մեջ գլխավորապես կազմված և աստղերից, իսկ փոքր Մազելլանի ամպը՝ ամբողջովին աստղերից և բաղկացած։ Մշուշազանդվածների մեծամասնությունն ունի կենտրոնական մաս, վոր ավելի նման է զազային ամպի, քան աստղերից բաղկացած ամպի։ Համենայն դեպս գոյություն ունեցող հեռադիտակներից և վոչ մեկը դեռ չի հաստատել, վոր այդ ամպը աստղերից և բաղկացած։ Սակայն, յեթե այդ զազային ամպերը դեռ աստղերից չեն կազմված, համենայն գեպս հավանական ե, վոր նրանց վիճակված և ժամանակի ընթացքում առաջացնել այդ աստղերը։

Աստղաբաշխները յեկել են այն յեղբակացության, վոր պարուրային մշուշազանդվածները մի յուրահատուկ Փարրիկաներ» են, վորտեղ առաջանում են աստղեր։ Պետք ե նշել, վոր պարուրային մշուշազանդվածները գտնվում են մեզնից անսահման հեռավորության վրա։ Բայց և այնպես նրանցից մի քանիսը լուսնի սկավառակից չորս անգամ ավելի մեծ են յերեսում։

Կանցնեն միլիոնավոր տարիներ և այդ մշուշազանդվածները կվերածվեն հազարավոր նոր աստղերի։

Այդ տեսակի աստղերը կամ շարժվում են միասին յերկնային տարածության մեջ, դժոնվելով միմյանցից համեմատաբար մոտ տարածության վրա, կամ թե չե, յեթե նրանց ձգում են այլ լուսատումներ, այլ մշուշազանդվածներ, նրանք ցըվում են տարրեր կողմեր, իրարից շատ հեռու։

Հավանական ե, ինչպես կարծում են դիտնականները, վոր այդպես ել, անպատմելի հեռու ժամանակներում, մի վորեւ պարուրային մշուշազանդվածի ճյուղերի մեջ առաջացել ե մեր Արեւ։ Սկզբում նա մոտ հարեւանության մեջ գտնվելիս ե յեղել իր քույրերի, ուրիշ աստղերի հետ։ Իսկ հետո թողել ե նրանց և հեռացել ե գեպի անծայրածիր յերկնային տարա-

ծությունը, ուր շրջում ե և այժմ և ուր չառ քիչ հավանականություն կա, վոր հանդիպի իրեն նման մի այլ աստղի:

Բայց Արևն իր շուրջը պատվազ բոլոր մոլորակ-



Նկ. 30. Վերևում «Փոքր Ստղելլանի ամպը».
ցածում «Մեծ Ստղելլանի ամպը»:

Ների հետ միասին, միայն մի փոքրիկ առանձին աշխարհ է կազմում այն անթիվ, անհամար աստղերի մեջ, վոր ցրված են տարածության մեջ: Իսկ այդ աստղերի թիվը հսկայական է: Լավ տեսազություն

ունեցող մարդը հասարակ աչքով կարող ե տեսնել մոտավորապես հինգ հազար աստղ, վոչ ավելի։ Իսկ աստղաբաշխը հեռադիտակով կարող ե ջոկել միլիոնավոր աստղեր։ Մութ, անլուսին գիշերը մենք տեսնում ենք յերկնքի ամբողջ յերկարությամբ հորի-



Նկ. 31. «Վարսկան շների» համաստեղության պարուրային
մշուշազանգվածը

գոնի մի ծայրից դեպի մյուսը ճգված մի գունատշերտ, վոր շողօւմ ե նուրբ մարզաբտե փայլով։ Դա, այսպիս կոչված, հարդագողի ճանապարհն է։

Յեթե մենք գնայինք յերկրագնդի մյուս կողմը, կտեսնեյինք, վոր այդ շերտի յերկու ծայրերը այն-

տեղ ել են շարունակվում և վերջիվերջո միանում
են: Այսպիսով հարդադողի ճանապարհը կարծես մի
լայն գոտի յև կազմում, վոր շրջապատում և ամբողջ
յերկինքը:

Սակայն ի՞նչ և ներկայացնում հարդադողի ճա-
նապարհը: Մինչև XVL դարի սկիզբը դա հանելուկ եր
մոչ միայն սովորական դիտողի համար, այլ և աստ-
րաբաշխների համար: Միայն 1609 թվին, յերբ Գալի-
յելը դեպի յերկինք ուղղեց իր հասրած առաջին դեռ
բավական թույլ հեռադիտակը, այդ հանելուկը վեր-
ջապես լուծվեց: Պարզվեց, վոր հարդադողի ճանա-
պարհը բաղկացած և անթիվ-անհամար աստղերից,
վորոնք զնման են արծաթյա փոշու, վոր թափված
և յերկնքի սև թափիշի վրա»:

Այդ աստղերը շատ թույլ են, վորովհետեւ անչափ
հեռու յեն մեզնից: Բայց նրանք այնպիսի խիտ կու-
տակում են կազմում, վոր հեռավեց մեր աչքի համար
ձուլվում և կազմում են մի գունատ շերտ և առան-
ձին-առանձին տեսանելի չեն հասարակ աչքի համար:

Առհասարակ աստղերը հավասարաշափ չեն տա-
րածված յերկնքի տարբեր տեղերում: Ամենից շատ
նրանք գտնվում են հարդադողի ճանապարհի մոտ:
Դա հեշտ և ստուգել ամեն մի ուշադիր դիտողի հա-
մար: Յեթև դուք ինքներդ մի խավար գիշեր նայեք
յերկնքին, յերբ առանձնապես շատ աստղեր են յե-
րեսում, դուք կնկատեք, վոր ամենից շատ աստղեր,—
թե փայլուն և թե ավելի խավար,— գտնվում են
հարդադողի ճանապարհի շերտի մոտերքը և նույնիսկ
հենց այդ շերտի վրա: Վորքան հեռանում ենք հար-
դադողի ճանապարհից, այնքան ավելի ու ավելի քիչ
ենք տեսնում աստղեր:

Աստղերի այդ ամբողջ անսահման կուտակումը,
վորի մեջ են մտնում թե հասարակ աչքով տեսանելի
աստղերը, թե նրանք, վոր հեռադիտակով են յերեսում
և թե այնպիսիները, վորոնք ապվում են միայն լու-
սանկարչական թիթեղիկների վրա, կազմում են մեր

աստղային, կամ ինչպես առում են, Գալակտիկ համակարգությունը։ Ուսումնասիրելով աստղերի դասավորությունը յերկնքի վրա, աստղաբաշխները յեկել են այն յեղբակացության, վոր այդ մեր Գալակտիկ համակարգությունն ամբողջությամբ հանդիսանում է շատ խիստ տափակացած մի դունդ, կամ ավելի պարզ արտահայտվելով, իր ձևով հիշեցնում ե վոսպնյակ, կամ զբանի ժամացույց։ Վ. Գերշելը մեր տեսակետից Գալակտիկ համակարգությունը համեմատում ե սայլի մեծ՝ անխիլի հետ, ըստ վորում Արեն իրր թե անդավորված ե այդ անխիլի ակնողակի մոտ։ Այս վերջինը սխալ դուրս յեկամ։ Մեր աստղային համակարգության մեջ Արեն կենտրոնական տեղ չի բռնում։ Յեթե շարունակելու լինենք Գերշելի համեմատումը, ապա Արենը գտնվում ե վոչ թե ակնողակի մոտ, այլ նրանից բավական հեռու, նրա և ողագոսու միջի տարածության մոտավորապես մի յերրորդի վրա։ Անխիլի ողագոսու վրա գտնված աստղերը




Նկ. 32. Յերկնքի մի մասը համարակակի համար

թյունը, ապա Արենը գտնվում ե վոչ թե ակնողակի մոտ, այլ նրանից բավական հեռու, նրա և ողագոսու միջի տարածության մոտավորապես մի յերրորդի վրա։ Անխիլի ողագոսու վրա գտնված աստղերը

իրազմում են հարդաբողի ճանապարհ։ Այդ ուղղությամբ նայելիս, մենք առանձնապես շատ աստղեր ենք տեսնում, վորովհետեւ այդ դեպքում մենք նայում ենք աստղերի ամբողջ հոծության միջով, վոր դասավորված են զանխիլի անվաճաղերի յերկարությամբ։ Գալակտիկ համակարգության ամբողջ աստղերի թիվը աստղաբաշխները հաշվում են մոտավորապես մինչեւ յերեսուն միլիարդ։ Մակայն նույնիսկ ամենազորեղ ժամանակակից հեռադիտակները ցույց են տալիս նըրանցից միայն մեկից մինչև մեկուկես միլիարդ աստղ։

Բայց բազմաթիվ աստղերից, մեր Գալակտիկ համակարգությանն են պատկանում նաև գնդաձև աստղային կուտակումները և մոլորականման մշուշաղների ածները, վորոնց մասին վերևում խոսվել ե:



Նկ. 33. Յերկար և լայն մասն հեռագագակության վերաբերյալ

Նրան են պատկանում նաև, այսպես կոչված գագանման մշուշաղամզվածները, այն անկանոն մշուշաղանդվածները, վորոնք կազմված են չափաղանց նոսրացած լուսավոր գաղերից և չատ մանր գագանման փոշուց։ Այդպիսի «Գալակտիկ», այսինքն մեր Գա-

Համակարգությանը պատկանող մշուշազանդվածներին կորպես որինակ կարող և ծառայել մեր կողմից արդեն հիշված Որիոնի համաստեղության մշուշազանդվածը։ Գազային մշուշազանդվածներ համեմատաբար շատ չեն (ընդամենը մոտ հարյուր) և նրանք բոլորը գտնվում են մեղնից շատ ավելի մոտ, քան պարուրային մշուշազանդվածները։ Իսկ ինչ վերաբերում ե գնդաձեւ և պարուրային մշուշազանդվածներին, նրանք բոլորն ել գտնվում են մեր Գալակտիկ համակարգության սահմաններից դուրս։ Ինչպես մենք արդեն տեսանք, մեր Գալակտիկ համակարգության մեջ աստղերի դասավորությունը հանդիսանում է վոսպնյակի տափակցած ձև, այսինքն նա նույն տեսակ ե, ինչ վոր պարուրային մշուշազանդվածներինը։ Դա հասկանալի յե, վորովհետև մեր Գալակտիկ համակարգությունը նույնպես այդպիսի մի պարուրային մշուշազանդված ե։ Մյուս կողմից, ամեն մի պարուրային մշուշազանդված նույնպիսի աստղային համակարգություն ե, ինչպես և մերը։ Նրանցից ամեն մեկը իր մեջ պարունակում և հազարավոր միլիոն աստղեր և ինքնին հանդիսանում և մի ամբողջ տիեզերք, ինչպիսին ե մերը։ Պարուրային մշուշազանդվածների թվին և պատկանում Անդրոմեդա համատեկության հայտնի վիթխարի մշուշազանդվածը։ Աստղաբաշխները խմբնահզոր հեռադիտակներով ուսումնասիրել են մոտ յերկու միլիոն պարուրային մշուշազանդվածներ՝ այդ, ինչպես իրենք են արտահայտվում, «կղզիական տիեզերքները»։ Այսպես անսահման լայնացալ աշխարհը, շնորհիվ գիտության հետախուզություններին և մենք այժմ մեր անծայրածիր տիեզերքն իր միլիոնավոր աստղ-արևեների հետ միասին պետք ե համարենք միայն մի այլ ավելի անծայրածիր տիեզերքի մի մասը։

«Մեր աստղաբաշխական դիտելիքների ներկա դրությունը, — ասում ե Զինոսը, — կարելի յե ամփոփել հետեւյալ յերեք հիմնական թեզերով։

1. Յերկիրը արեղակնային համակարգության անդամներից մեկն ե:

2. Արեղակնային համակարգությունը հանդիսանում և Գալակտիկ համակարգության բազմաթիվ անդամներից մեկը:

3. Մեր Գալակտիկ համակարգությունը տարածության մեջ գտնված քաստղային քաղաքներից կամ այսպես կոչված «կղղային տիեզերքներից» համակարգության բազմաթիվ անդամներից մեկն և միայն:

Դառնանք այժմ մեր, արեղակնային աշխարհին: Մենք արդեն գիտենք, թե ինչպես և առաջացել մեր Արևը: Նա ծնվել և պարուրային մշուշաղանդվածից, բայց նա դեռ չուներ մոլորակների այն ամբողջ ընտանիքը, վորոն այժմ շրջապատում և նրան: Համապատասխան միայն մոլորակները, վորոնք պատվում են Արևի շուրջը:

Լապլասի գեղեցիկ և ներդաշնակ հիպոթեզը չկարողացավ բացատրել այս բոլորը: Գիտնականներն ըստիպված եյին վորոնել այլ բացատրություններ: Լապլասից հետո արեղակնային համակարգության ծագման մասին առաջ յեկան մի շարք այլ հիպոթեզներ, վոր մշակել եյին ուրիշ գիտնականներ: Այդ գիտնականներից վորմանք միայն ուղղում եյին. Լապլասին, մյուսները վորոնում եյին իրենց սեփական բացատրությունները: Մենք չենք նկարագրի այդ բոլոր հիպոթեզները: Կազատմենք միայն այն մասին, թե ինչ յեղրակացության են յեկել այդ առթիվ ժամանակակից գիտնականները վերջին ժամանակներս, յերրաստղաբաշխության դիտությունը չափազանց առաջ և գնացել:

11. ԻՆՉ ՍԻՆԱԼԵՆՔ ԴՏԱՆ ԼԱԳԻԱՍԻ ՃԻՊՈԹԵԶԻ ՄԵԶ ՃԵՑ-

ԴԱ. ԴԻՇՆԱԱԿԱՆՆԵՐԸ. ՄՈՒՆՑՈՒՆ ՅԵՎ ԶԵՄՐԵՐԻԱԿԻ

ՄԵՊՈԹԵԶԸ ԱՐԵԴԱԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՎԱ-

ՄԵՅՆ ՄԱՍԻՆ:

Նախ և առաջ տեսնենք, թե ինչ թերություններ և սխալներ են դանվել ժամանակի ընթացքում արե-

գակնային համակարգության առաջացման մասին
Լապլասի ուսմունքի մեջ: Այդպիսի թերություններից
մեկի հետ մենք արդեն ծանոթ ենք: Լապլասը ասում
եր, վոր բոլոր մոլորակները և նրանց բոլոր արբա-
նյակները պատվում են միմնույն ուղղությամբ, այ-
սինքն այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ վոր
պատվում ե իր առանցքի շուրջը Արեւ, այն ե՝ ժա-
մացույցի սլաքի հակառակ ուղղությամբ: Խսկապես
Լապլասի ժամանակ բոլոր արդեն հայտաբերված մո-
լորակները և նրանց բոլոր ուսումնասիրված արբան-
յակները պատվում եյին այդ ուղղությամբ: Բայց հե-
տազայում պարզվեց, վոր Ուրանի արբանյակները,
Նեպտոնի միակ արբանյակը, Սատուրնի արբանյակնե-
րից մեկը և Յուպիտերի յերկու արբանյակները պարտ-
վում են հակառակ ուղղությամբ¹⁾:

Թե ինչից ե դա առաջանում, վոչ մի կերպ չեր
կարելի բացատրել Լապլասի հիպոթեզով:

Այսուհետեւ Լապլասն ասում եր, վոր մոլորակ-
ներն առաջացել են այն մշուշային ողակից, վոր
կարվել ե նախնական մշուշազանդվածից նրա հասա-
րակածի յերկարությամբ: Դրան նոր զիտնականներն
առարկում եյին. Հապա ինչո՞ւ այդ դեպքում բոլոր
մոլորակները չեն պատվում Արեւի հասարակածի
հարթությամբ: Ճիշտ ե, նրանց բոլորն ել պատվում
են մոտավորապես նույն հարթության վրա, բայց
այդ հարթությունը չի համընկնում Արեւի հասարա-
կածի հարթության հետ, այլ մի փոքր թեքված և
դեպի նա: Լապլասի հիպոթեզով այդ ևս հնարավոր
չեր բացատրել:

Լապլասը կարծում եր, վոր ողակը կտրվել և
մշուշազանդվածից այն պատճառով, վոր վերջինս իր

¹⁾ Իսկ Նեպտոն և Ուրան մոլորակները իրենք, ինչպես
մենք արդեն վերելում ասել ենք, պատվում են բոլորովին այլ
ուղղությամբ, քան մյուս մոլորակների պատճառ ուղղությունն
է:

առանցքի շուրջը ավելի ու ավելի արագ ե պտտվել-
Սակայն հետագայում դիմնականները Արևի և մոլո-
րակների նորկայիս շարժման արագության հիման
վրա հաշվեցին, վոր սկզբնական մշուշաղանդվածը,
ինչպես պատկերացնում եր իրեն՝ Լապլասը, չեր կա-
րող շատ արագ պտտվել: Ուստի, առանց վորեն
կողմնակի ուժի ազդեցության, այլ միայն մշուշա-
ղանդվածի պտտվելու շնորհիվ ողակը նրանից ան-
ջատվել չեր կարող:

Բայց ընդունենք նույնիսկ, վոր այդ ողակը վո-
րեւ ձևով բաժանվել ե մշուշաղանդվածից. կարո՞ղ
եր նա արդյոք բաժանվել ավելի նեղ ողակների, իսկ
նրանք ել կծկվել և զառնալ մոլորակներ: Այժմ գիտ-
նականները կարծում են, վոր դա անհնար եր:

Բայց Լապլասի ուսմունքի, այդ մշուշաղանդվածը
բաղկացած եր չափազանց թեթև գաղերից: Այն ժա-
մանակ գաղերի հատկությունները գեռ լավ ուսում-
նակիրված չեյին: Իսկ այժմ հայտնի յե, վոր գաղերը
ունեն, կրկնակի հատկություն: Մի կօղմից նրանք
ձգուում են լայնանալ և ցիրուցան լինել տարածու-
թյան մեջ: Մյուս կօղմից գաղի մասնիկները ձգում
են միմյանց և դա ստիպում ե նրանց խտանալ, կաղ-
մել մի մասսա: Յեթև գաղը չափազանց մեծ քանա-
կով և, ապա նրա մեջ ձգողականությունն ավելի ու-
ժեղ և, քան տարածվելու ձգուումը: Այդ գեղքում
նա վոչ թե տարածվում և, այլ խտանում ե և մի
մասսա յե կաղմում: Բնդհակառակը, յերբ գաղի
քանակությունը քիչ ե, նա լայնանում ե և արագ
ցրվում և տարածության մեջ:

Գաղային մշուշաղանդվածը, ինչպես վոր նրան
պատկերացնում եր Լապլասը, հսկայական ծավալ և
ունեցել: Ուստի նրա մեջ գաղերը չեյին կարող ցըր-
վել: Այդպես չեյին այն ողակները, վորոնք Լապլա-
սի կարծիքով, պոկվում եյին նրանից: Նրանք շատ
ավելի փոքր ծավալ ունեյին, քան ամբողջ մշուշա-
ղանդվածը: Այդ պատճառով նրանց բաղադրիչ գա-

դերը պետք ե վոր ցըվեյին և ցնդեյին և վոչ թէ
սեղմվեյին և առաջացնեյին մոլորակներ:

Հապլասը կարծում եր, վոր Սատուրնի ողակը իր
հիպոթեզի ճշտության ամենալավ ապացույցներից
մեկն եւ նա կարծում եր, վոր այդ ողակը անջատ-
վել և Սատուրնից այն ժամանակ, յերբ նա դեռ գա-
ղային վիճակումն եր գտնվում, ճիշտ այն ձևով, ինչ
ձեռվ վոր անջատվել են առհասարակ բոլոր ողակները
Արեից և մոլորակներից: Բայց նա չի պատռվել և
սեղմվել ու դռւնդ դարձել, ինչպես ուս պատահել ե
մյուս ողակների հետ, այլ սառել և վեր և ածվել մի
թանձք մասսայի և այդ տեսքով մինչև այժմս ել
պատռվում ե իր մոլորակի շուրջը:

Սակայն հետազում, յերբ դիտնականներն ա-
վելի լավ ուսումնասիրեցին Սատուրնը, համոզվեցին,
վոր նրա ողակը չի հանդիսանում միապաղադ դանդ-
ված, այլ բաղկացած և փոշեհատիկների նման մանր
բազմաթիվ մասնիկներից: Ներկայումս ապացույցած
է, վոր այդ մասնիկները կազմում են վոչ թե մեկ,
այլ յերեք առանձին ողակներ, վորոնք շատ մեծ և
տարրեր արագությամբ պատռվում են Սատուրնի շուր-
ջը: Ժամանակակից դիտնականների կարծիքով, յեթե
այդ ողակը լիներ միապաղադ պիխոդ, կամ հեղուկ վի-
ճակում, ինչպես յենթադրում եր Լապլասը, ապա նա
կլիներ շատ անկայուն և վաղուց արդեն ընկած կլի-
ներ Սատուրնի գնդի վրա: Այսպիսով և այստեղ
Լապլասը սիսալ դուրս յեկավ:

Այնուամենայնիվ գիտության համար Լապլասի
կատարած ծառայությունը հսկայական է: Նա առա-
ջինն եր, վոր ստեղծեց լուրջ գիտական հիպոթեզ,
թե ինչպես կարող ելին ստեղծվել մեր Յերկիրը և ա-
րեգակնային համակարգության մյուս մոլորակները:
Չնայած նրա հիպոթեզի մեջ հետաղայում հայտա-
բերվեցին վորոշ սխալներ, համենայն դեպս նա ար-
տահայտեց նաև շատ ճիշտ տեսակետներ, վորոնք
այժմս ել ընդունվում են գիտության կողմից: Ի

գուր չե, վոր ականավոր գիտնական, Փրանսիացի մաթեմատիկոս Պուանկարեն Լապլասի հիպոթեզի մասին ասել ե, վոր թեև նա արդեն պատկառելի հասկ ունի, բայց նրա դեմքին դեռ շատ քիչ կնճիռներ են: Պետք ե նշել, վոր Լապլասի գիրքը, վորտեղ շարադրված ե նրա հիպոթեզը, լույս տեսավ ԽVIII-րդ դարի վերջում (1796 թ.), այն ժամանակ, յերբ Ֆրանսիայում արդեն հեղափոխություն եր տեղի ունենում:

Ժամանակակից գիտնականների նորագույն հիպոթեզները աշխատում են խուսափել Լապլասի սխալից և ավելի ճիշտ բացատրություն տալ այն բոլորին, ինչ վոր չկարողացավ բացատրել Լապլասի հիպոթեզը:

1905 թվին յերկու ամերիկական գիտնականներ՝ Մուլտոնը և Չեմբերլինը ստեղծեցին իրենց հիպոթեզը այն մասին, թե ինչպես կարող ելին առաջանալ Արեւ և մոլորակները: Ինչպես Լապլասը, նրանք ևս յենթադրում են, վոր սկզբում դոյցություն ե ունեցել մշուշաղանդված, վորից ապագայում առաջացել են Արեւ և մոլորակներն իրենց արբանյակներով: Բայց այդ մշուշաղանդվածը նրանց կարծիքով բաղկացած և յեղեւ վոչ թե պազերից, ինչպես Լապլասն ե ասում, այլ շատ փոքրիկ, ամուր մասնիկներից, շատ աննշան մետեորիտներից, կամ մետեորական փոշուց: Այդ մասնիկները գտնվում ելին անընդհատ շարժման մեջ: Նրանք պատվում ելին իրենց որբիտներով, վորոնք դասավորված ելին իրարից մոտ: Նրանք ձգում ելին միայնաց, բախվում ելին և միանում, կազմելով ավելի խոշոր մասնիկներ: Այս խոշորացած մասնիկները միանալով, ավելի խոշոր մասնիկներ են տալիս: Այսպիսով ստացվում ելին միջաւկներ, կամ կենտրոններ, վորոնք ձգում ելին դեպի իրենք ուրիշ մասնիկներ և միացնում ելին նրանց իրենց հետ: Այդպիսի կոտակումների ծավալը հետզհետե մեծանում եր և

վեցշապիս նրանք դառնում են առանձին մոլորակներ, վոր պատվում են ընդհանուր կենացոնի շուրջը:

Բայց ի՞նչ ուժ և շարժման մեջ դրել այդ հոկտյական մետեղիստային մշուշազանդվածը և առաջացրել նրանից մոլորակներ։ Լապլասը յենթադրում եր, վոր ից զագային մշուշազանդվածը պատվում եր ինքն իրեն և այդ շարժման հետևանքով ել նրանից բաժանվում էլին մշուշային ողակներ։ Մուլտոնը և Զեմբերլինը այլ կերպ են դատում. նրանք կարծում են, վոր դրա համար անհրաժեշտ եր վորմեն կողմնակի պատճառ։ Ախայն մի վորոշ հատուկ արտաքին ուժ կարող եր շարժման մեջ դնել այդ անընդդրկելի մասան։ Վոր բաղկացած եր չպահազանց մանր մասնիկներից, մետեղիստաներից և ստիպել նրանց ձուլվել, տալ մեծ կուտակումներ, վորոնք վեր են ածվել մոլորակների։ Ալդպիսի արտաքին ուժ են համարում Մուլտոնը և Զեմբերլինը մի այլ յերկնային մարմնի ձգողական ազդեցությունը մեր մետեղիստական մշուշազանդվածի վրա։ Առա թե ինչպես են նրանք բացատրում այդ։

Եատ և շատ առաջ, վազուց անցած ժամանակներում Մուլտոնի և Զեմբերլինի յերեակացած մետեղիստային մշուշազանդվածին մոտեցել եւ մի ուրիշ մըշուշազանդված կամ աստղ։ Այդ յեկվոր յերկնային մարմնը իր ձգողականությամբ նախկին մշուշազանդվածի մեջ առաջացրել եւ մակընթացային ալիք, ճիշտ այնպես, ինչպես կուտինը մակընթացություն և առաջացնում յերկրագնդի վրա։ Բայց Լուսինը փոքր մարմին եւ նրա Յերկրի վրա առաջացրած մակընթացությունները մեծ չեն։ Իսկ մեր մշուշազանդվածին կարող եւ մոտենալ հակայական ծավալ ունեցող մի աստղ, կամ մշուշազանդված և, ի հարկե, նա պետք եւ բարձրացներ մեր մշուշազանդվածի վրա մի վիթխարի մակընթացային ալիք։ Ճիշտ այդպիսի ալիք ել պետք եւ առաջանար. մշուշազանդվածի հակառակ կողմում։

Վորքան ավելի յեր մոտենում մշուշազանդվածին

այդ նոր յերկնային մարմինը, այնքան մեծանում եր նրա վրա մակընթացային ալիքը: Դա մշուշագանգվածին ներսի նյութի մի ամբողջ ժայթքում եր դեպի դուրս: Իսկ յերբ այդ նոր յեկած մարմինը բռնտումին մոտենում ե, ժայթքված ալիքը պոկվում ե իր մշուշագանգվածից և բաժանվում է նրանից: Այժմ նա սկսում ե շարժվել այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ վոր շարժվում եր յեկած աստղը, բայց նախկին մշուշագանգվածը նույնպես շարունակում է ձգել դեպի իրեն այդ ժայթքված ալիքը: Այդ պահանառվ նա միանգամբից չի հեռանում դեպի անհռն տարածությունը յեկած աստղի հետ միասին, նա միայն կորանում և սկսում է պտտվել մշուշագանգվածի կենտրոնական միջուկի շուրջը, վոլորվելով և պարուր տալով:

Նման յերեսույթ տեղի յե ունենում մշուշագանգվածին և հակառակ կողմում: Ժայթքված մակընթացային ալիքը սրոկվում է կենտրոնական միջուկից և ուղարուրի ձևով վոլորվում նրա շուրջը:

Այսպիսով սկզբնական մշուշագանգվածը դառնում է պարուրային: Նրա ճյուղերում շարժվում են մետեորիտների ամբողջ խմբեր: Նրանք բաղխվում և միանում են միմյանց հետ, առաջացնելով մշուշագանգվածի ճյուղերի մեջ տարրեր մեծության հանգույցներ և միջուկներ: Մեծ միջուկներից առաջանում են մոլորակները, իսկ փոքրերից՝ նրանց արրանյակները: Իսկ մշուշագանգվածի կենտրոնական միջուկից առաջանում ե Արևը, վորի շուրջը և շարունակում են պտտվել մոլորակները, կազմվելով հետզհետե առանձին մետեորիտներից:

Մուլտոնի և Չեմբերլինի հիսպոթեզը լավ բացարձում է, թե ինչու մոլորակները հասարակածի հարթության վրա չեն պտտվում: Արևը առաջացել և մշուշագանգվածի կենտրոնական միջուկից: Այդ պահանառվ պտտվում է նույն ուղղությամբ և նույն հարթության վրա, ինչպես սկզբնական մշուշագան-

վածը: Իսկ մոլորակներն առաջացել են մշուշագանդ-վածի կտրված մասերից և նրանց շարժմանը ուղղություն են տվել յեկվոր մարմինը: Այդ պատճառով ել նրանք պատվում են այն հարթության վրա, վորով շարժվում եր յեկվոր մարմինը:

Ենվ այդպես, Մուլտոնի և Զեմբերլինի կարծիքով արեգակնային համակարգությունն առաջացել է պարուրային մշուշագանդվածից: Սակայն աստղաբաշխների մեծամասնությունը համաձայն չե սրա հետ: Պարուրային մշուշագանդվածները, վորոնք յերեսում են հեռադիտակով, կամ տպվում են լուսանկարչական թիթեղիկների վրա, հսկայական ծավալ են ունենում: Նրանց ճյուղերում ծնվում են վոչ թե մոլորակներ, այլ ահազին աստղեր, վորոնք կազմում են հազարավոր և միլիոնավոր աստղերի կուտակում:

Այն մշուշագանդվածը, վորից կարող ելին առաջանալ մեր Արևն ու մոլորակները, պիտի միլիոնավոր անգամ ավելի փոքր լիներ, քան դիտավող մշուշագանդվածները: Բայց ո՞վ դիտե, գուցե տիեզերքի անծայրածիք տարածություններում դոյլություն ունեն և վոչ շատ մեծ պարուրային մշուշագանդվածներ, վորոնց գեր չի հաջողվում դիտել ժամանակակից հեռադիտակներով և դրոշմել լուսանկարչական թիթեղիկների վրա: Գուցե գիտության հետազա առաջին և տեխնիկայի կատարելազործման շնորհիվ ապագայում դա ել հաջողվի: Այն ժամանակ Մուլտոնի և Զեմբերլինի հիպոթեզը շատ տեսակետներից կարդարանա:

Սակայն թեորիան այդ չի առում: Նշանավոր անգլիացի դիտնական Զինոը հաշվել ե, վոր այդպիսի փոքր պարուրային մշուշագանդվածներ չեն կարող առաջանալ: Գետք ե նշել, վոր այն դադերը, վորոնցից առաջանում են մշուշագանդվածները, աներեւակայելի նոսր են: Այժմ դոյլություն ունեցող մեծ մշուշագանդվածները, Զինոի ասելով, մոտավորապես միլիարդ անգամ ավելի թանձր են, քան ոկտոնական

գաղային մատերիան, վորեց նրանք առաջացել են: Ենիլ չնայած դրան, այդ մշուշազանգվածների ներկայիս խտությունն այնքան չնշին ե, վոր հանճը մի արտաշնչումով իր թոքերէց կարող եր լցնել մի ամբողջ յեկեղեցի այդպիսի խտություն ունեցող ողովից: Բայց Զինսի հաշվումները ցույց տվին, վոր այդպիսի անսահման թեթև նյութից մշուշազանգված առաջանալու համար անհրաժեշտ ե այդ նյութի այսպիսի հսկայական քանակություն, վոր նրա ընդհանուր մասսան դոնե 60 միլիոն անգամ Արևի մասսայից մեծ լինի: Ամեն մի ավելի փոքր մաս չեր կարող պահպանել «իր գոյությունը» և պիտի ցըմեր տարածության մեջ:

Այսպիսով բոլորովին կարեք չկա յենթադրելու, վոր Արևը և մոլորակներն առաջացել են միասին համեմատաբար փոքր մի պարուրային մշուշազանգվածից: Զինսի կարծիքով Արևն առաջացել ե ավելի շուտ, քան նրան շրջապատող մոլորակները: Նա ծնվել է վիթխարի պարուրային մշուշազանգվածի մեջ միլիոնավոր այլ աստղերի հետ միասին: Իսկ մոլորակներն ավելի ուշ են յերեան յեկել: Նրանք Արևի յերեխաներն են և վոչ յեղբայրները: Սրանք Արևի մարմնից պոկված կտորներ են, վորոնք բոլորովին չեն հեռացել նրանից, այլ չնորմիվ Արևի ճգողական ուժին, շարունակել են պատվել նրա շուրջը: Այժմ մենք կը տեսնենք, թե ինչպես և տեղի ունեցել այդ մոլորակների անջատումը Արևից ըստ Զինսի ուսմունքի:

15. ԱՆԳԼԻԱՅԻ ԴՐԱՑՆԱԿԱՆ ԶԻՆՍԻ ՃՐԱՊԵՏԱՅՔ, ՄԵՐ ԱՐԵՎՆ ԱՌԱՋԱՅԵԼ Ե ՊԱՐՈՒՐԱՅԻՆ ՄԵՇՈՒՇԱԶԱՌՆԱՎԱՆԻ ՄԵՋԻ ՆՐԱ ՄԵՐ ՄԵՐՉԵՑՑՈՒՄՆ ՈՒՐԻՇ ԱՍՏՂԱՄԻ ՀԱՅ: ՎԵՐԺԵՆԻ ՄԱԼԱՅՆԹԱՑՑԵՄՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՆ ՍՑԻԳՆԻ Ե ԱՐԵՎՆԻ ԻՎԱ ԹԱՂՆԵԼ ՆՅՈՒԹԻ ՀԱՍԱՆԿԱՆԵՐԻ ԻՆՉԳԵՍ ԵՆ ԱՅԴ ՀՈՍԱՆԿԱՆԵՐԻ ՄՈԼՈՐԱԿՆԵՐ ԳՈՅՈՒՅՆՆԵՐ, ԻՆՉԳԵՍ ԵՆ ԱՌԵՎՆԻ ՅԵԿԵ ԱԱՐՋԵՐ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ, ԻՆՉԳԵՍ ԵՆ ԱՌԵՎՆԵՐԻ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԱՐԱԱՑՑԱԿՆԵՐԸ.

Արեգակնային համակարգության առաջացման մասին յեղած նորագույն հիպոթեզներից ամենից աչ-

շի ընկնողը պատկանում և անդլիացի գիտնական Զինս-
սին: Զինսը, փնչպես և Լավլասը, յենթադրում ե,
վոր սկզբնական մշուշազանգվածը, կամ սկզբնական
Արևը, վորից առաջացել և մեր մոլորակային աշխար-
հը, բաղկացած և յեղել շատ թեթև զազային նյու-
թից: Մոլորակներն սկզբնական Արևից կամ մշուշա-
զանգվածից պոկված մասերն են Շակայն, վորպես-
զի Արևից կարողանային բաժանվել այդ մասերը,
վորոնք սկզբնավորություն են տվել մոլորակներին,
անհրաժեշտ եր մի վորեւե կատաստրոֆա (աղետ), մի
կողմնակի արտաքին ուժ: Այդ ուժը, Զինսի կար-
ծիքով, յեղել և մեր Արևին մոտեցած մի ուրիշ աստ-
ղի ճղողականությունը: Այս տեսակետից Զինսը մի-
անդամայն համաձայն և Մուլտոնի և Զեմքերինի
հետ:

Զինսը ընդունում է, վոր մեր Արևը բազմաթիվ
ուրիշ աստղերի թվում, ծնվել և մի վորեւե հսկայա-
կան պարուրային մշուշազանգվածի ճյուղերում: Այդ
մշուշազանգվածը դառնում և աստղերի մի ահազին
կույտ, ուր աստղերը գտնվել են փրարից համեմատա-
բար մոտիկ տարածության վրա: Ապագայում այդ
կուտակումը ցըմում և աստղերը հեռանում են մի-
մյանցից զանազան ուղղություններով:

Այժմ մեր Արևը իր ճանապարհը կատարում և
այնպիսի տարածության մեջ, ուր չկա մի այլ այդ-
պիսի աստղ: Այդ պատճառով շատ քիչ հավանակա-
նություն կա, վոր նա բաղիսվի մի ուրիշ աստղի հետ:

Բայց շատ առաջներում, յերբ նա դեռ գտնվում եր
աստղերի բազմության մեջ, դա հեշտությամբ կարող
եր պատահել: Անհրաժեշտություն չկա, վոր հանդի-
պող աստղերը անսպայման բաղիսվեն իրար: Բավական
է, վոր նրանք՝ մուտենան միմյանց, և այդ յերկու
աստղերն ել կձգմն մեկը մյուսին և ամեն մեկը մյու-
սի մեջ ուժեղ մակընթացային ազգեցություն կառա-
ջացնի: Տեսնենք այդպիսի մերձեցման ժամանակ ի՞նչ
պիսի պատահեր մեր Արևի հետ:


Յերբ հանդիպական աստղը սկսում է մոտենալ Արևին, նրա վրա առաջանում եւ մակընթացային ուռուցիկ մաս, ուղղված դեպի այդ աստղը: Այն ժամանակվա ընթացքում, յերբ յեկվոր աստղը անցնում է Արևի մոտել, ուռուցիկ մասը անընդհատ կողանում է դեպի աստղը: Այդ յերկու ժարմինների անցումը միմյանց մոտել կատարվում է շատ արագ և միենալին ժամանակ նրանք շատ մոտենում են միմյանց, իսկ այդպիսի կարճատև և արագ հանդիպումի ժամանակ հակառակ կողմի մակընթացային ուռուցիկ մասը, Զինուի կարծիքով, պիտի լիներ շատ աննշան: Ընդհակառակը, առաջի կողմի ուռուցիկ մասը, վոր դարձած եր դեպի անցնող աստղը, պիտի լիներ հըսկայական չափի:

Արևից ժայթքած նյութի ահռելի հոսանքները դուրս եյին թափվում, պոկվում Արևից և ուղանում դեպի անցնող յեկվոր աստղը: Սկզբում, յերբ յերկու ժարմինները նոր եյին սկսել մոտենալ իրար, ժայթքող հոսանքները քիչ եյին: Իսկ յերբ նրանք շատ են մոտենում միմյանց, ժայթքող նյութի քանակն առանձնապես ավելանում է: Իսկ վերջում, յերբ յեկվոր աստղն սկսում է հեռանալ Արևից, ժայթքումը կըկին թուլանում է:

Նյութի հոսանքի արտաքին մասից, վոր անջատվել եր Արևից հենց սկզբում, առաջացել են ամենածայրում գտնվող մոլորակները՝ Նեպառունը և Ռուրանը: Այդ յերկու մոլորակներն ել ծավալով բավական մեծ են, բայց շատ ավելի փոքր են, քան Սատուրնը և Յուպիտերը: Հոսանքի միջին, գլխավոր մասից առաջացել են ամենախոչոր մոլորակները՝ Յուպիտերը և Սատուրնը: Իսկ վերջին, ավելի թույլ ժայթքումից (յերբ աստղն արդեն հեռանում եր Արևից) գոյացել են փոքր մոլորակները՝ Մարսը, Յերկիրը, Վեներան և Մերկուրին:

Սակայն կարելի յե հարց տալ՝ ի՞նչ ճեղով կարող եյին Արևից դուրս թափված այդ գաղային նյութի

«կոտորածանքները» ձևափոխվել մոլորակների: Զե՞՞ վոր մենք դիտենք, վոր դազերը կարող են փոխադարձ ձգողական ուժի շնորհիվ պահպանվել միասին և չցըրվել միայն այն դեպքում, յերբ նրանք մեծ մասսա յեն կազմում: Հենց դրանում եր կայանում Լանդլասի մեղքը, յերբ ասում եյին, թե նրա մշուշային ողակները պետք ե վոր ցըրվեյին տարածության մեջ, քանի վոր չեյին ներկայացնում բավարար մեծ մասներ:



Նկ. 34. Մոլորակների առաջացումը ըստ Զինսի:

Կեաազնով նշանակված ե Արևին մոտեցող աստղի ուղին: 1 դրության մեջ աստղի մակընթացային ազդեցության տակ, Արևի վրա առաջնում ել ուսուցիկ մաս, վոր դարձած ե աստղի կողմը և վորից սկսվում ե նյութի ժայթքումը: Աստղի հետադարձ շարժման ընթացքում ուսուցիկ մասն անընդհատ դառնում և դեպի նա: Նյութի ժայթքած մասսան վերջիվերջո ստանում ե բանանի ձև, իսկ հետո, նրա մասերի կտրավելու շնորհիվ, առաջնում են առանձին մոլորակները:

Զինսը շատ հեշտ և պարզ ձևով լուծեց այլ գիշարությունը: Նա ասում ե, վոր Արևից ժայթքած դազային շիթի մի մասն իսկապես պետք ե վոր ցըրվեր, բայց մնացած մասսան սառել ե, սեղմվել և կա-

բող եթ այդ ժամանակ անցնել հեղուկ, կտմ նույնիսկ
կարծր վիճակի:

Ուրեմն ի՞նչ ձևով են աշխարհ յեկել մեր Յերկիրը
և մյուս մոլորակները: Սկզբից նրանք հեղուկ են յե-
ղել, ոլի՞նդ, թե գաղային վիճակում:


Զինուը յենթադրում ե, վոր մոլորակները միատե-
սակ չեն ծնվել, այլ մի քանիսը գաղային վիճակում.
յուսները հեղուկ, յերրորդները գուցե նույնիսկ կար-
ծը վիճակում: Իսկ ինչի՞ց և կախված այդ տարրե-
րությունը: Նախ քան այդ հարցին պատասխանելը,
Զինուը հետազոտում ե, թե ինչպես են առաջացել մո-
լորակների արբանյակները և որա կապակցությամբ
վորոշում ե, թե ինչպիսին ե յեղել մոլորակներից ա-
մեն մեկն իր ծնվելու ժամանակ:

Զինուը կարծում ե, վոր յերբ առաջացել են մոլո-
րակները, Արևը նրանց վրա նույնպիսի մակընթացա-
յին ազգեցություն և ունեցել, ինչպիսին վոր իրա վրա
ունեցել ե յեկլոր աստղը: Իհարկե, գաղային մարմինը
շատ ավելի թեթև և քիչ խտություն ունեցող նյութ ե
ներկայացնում, քան հեղուկ մարմինը: Հետեազես,
Արևը ավելի ուժեղ մակընթացություն պետք ե առա-
ջացներ գաղային մոլորակների մեջ, քան հեղուկային:

Ամենամեծ մոլորակները՝ Յուլիտերը և Սատուր-
նը շատ արբանյակներ ունեն՝ Յուլիտերը 9, Սատուր-
նը 10: Սրանք բոլորն ել, համեմատած այն մոլորակի
հետ, վորի չուրջը նրանք դառնում են, բավական
փոքր են: Այսպես, որինակ, Յուլիտերի մասսան 11
հաղար անդամ ավելի մեծ ե, քան նրա ամենամեծ ար-
բանյակի մասսան: Այդ արբանյակների մեծ մասը,
Զինուի կարծիքով, առաջացել են Յուլիտերի և Սա-
տուրնի՝ Արևի մակընթացային ազգեցության շնոր-
հիկ պոկված մասերից: Բայց յեթե Արևը հեշտու-
թյամբ կարողացել ե անջատել նրանց այդ մոլորակնե-
րից, ապա պետք ե յենթադրել, վոր Յուլիտերը և
Սատուրնը իրենց աշխարհ գալու մոմենտում գաղային
վիճակումն են յեղել:

Զինսը աշխատում և տպացուցել այդ: Յեղնելով
նրանից, թե ինչպես են այդ յերկու մոլորակները ներ-
կայումս, Զինսը հաշվել է, զոր նրանք իրանց գոյու-
թյան սկզբին ունեցել են շատ անհջան խտություն:
Այլ կերպ ասած, նրանք բաղկացած են յեղել շատ թե-
թեվ, այսինքն՝ գազային նյութից:

Բայց թեև այդ յերկու մոլորակներն ել սկզբում
գազային են յեղել, նրանցից անջատված աքրանյակ-
ները պետք է շատ շուտով սառելին և փոխվելին կամ
հեղուկ, կամ կարծր վիճակի: Գազային վիճակում
նրանք չելին կարող մնալ, վորովհետև իրենց փոքր
ժամանակակից նրանց բաղադրիչն նյութը հեշ-
տությամբ կցվալի պատճառով նրանց բաղադրիչն նյութը հեշ-
տությամբ կցվալի եր և նրանք կղաղարելին դոյցու-
թյուն ունենալուց:



Նկ. 35. Գուրա ժայթքած գազի հոսանքից մոլորակների առաջա-
նակու բացատրության սխեման: Ամեն մի մոլորակի մոտ նշա-
նակված է նրա արբանյակների թիվը:

Բայց Յուլիսերի և Սատուբնի բոլոր արբանյակ-
ներն այս մատնանշած ձևով չեն առաջացնել: Նրանցից
մի քանիսը գոյացել են Արևից զուրա ժայթքած հո-
սանքի մնացորդներից: Դրանք շուտով սառել են և
փոխվել են հեղուկ, կամ պինդ վիճակի: Ակղբում նը-
րանք ազատ պատովել են իրենց որբիտներով: Բայց
հետո նրանք ձգվել են մեծ մոլորակների կողմից, ինչ-
պես աստղաբաշխներն են ասում, «զերպվել» են նրան-
ցից և զարձել են նրանց արբանյակները: Վորովհետև
նրանք մոտեցել են իրենց մոլորակներին տարբեր կող-

ժերից, զբանով եւ բացատրվում ե, վոր նրանցից մի քանիսը պատովում են նույն ուղղությամբ, ինչ վոր մոլորակները, մյուսները՝ հակառակ ուղղությամբ:

Յուպիտերի և Սատուրնի նման, Զինսի կարծիքով, Ռեքանր, վոր ունի չորս արբանյակ և Մարսը, վոր յերկու արբանյակ ունի, աշխարհ են յեկել գաղային վիճակում: Ամենափոքը մոլորակները՝ Մերկուրին և Վեներան չեյին կարող ծնվելիս դադային վիճակում լինել: Նրանց փոքը ծավալի պատճառով նրանց դաշային նյութը հեշտությամբ կցվածէ և նրանք չեյին կարող դպյություն ունենալ: Հետևապես, նրանք աշխարհ են յեկել հեղուկ, կամ նույնիսկ պինդ վիճակում:

Ինչ վերաբերում է Յերկրին և Նեպտունին, նրանք, Զինսի կարծիքով, ծնվել են հեղուկ վիճակում: Այդ պատճառապես Արեւը նրանց վրա չի ունեցել այնպիսի ուժեղ մակընթացային աղղեցություն, ինչպես դադային մոլորակների վրա: Այս մոլորակներից ամեն մեկը ունի մեկական և բավական մեծ արբանյակ և դրանք առաջացել են վոչ այնպես, ինչպես մյուս մոլորակների արբանյակները:

Մեղ համար առանձնապես հետաքրքրական ե իւմանալ, թե ինչպես և առաջացել մեր Լուսինը, մեր մոլորակի այդ հավիտենական ուղեկիցը: Դա բացատրել ե վոչ թե Զինսը, այլ զեռ նրանից առաջ մի ուրիշ նշանակոր անդիմացի գիտնական, Զորջ Դարվինը, իսկ Զինսը միայն ընդունում է այն, ինչ վոր այդ ասթիվ ասել ե Դարվինը:

Կամած չկա, վոր Լուսինը մեր Յերկրի մի մասն ե, վոր անջատվել ե նրանից անսահման հեռու ժամանակներում: Բայց նա չի սուկվել Յերկրից միայն Արեւի մակընթացային աղղեցության հետևանքով: Այսուեղ ավելի շատ մասնակցել ե մի այլ ուժ: Այժմ մնանք կտեսնենք, թե ինչպես ե բացատրում այդ Դարվինը:

26. ԽԵԶՆ Ե ՍՑԱԳՅԱ, ԾԵՐԿՐԻ ՊԱՏՎԱՅԻՆԻ ՇՈՒՐ-
ՋԸ, ԽԵԶ ԶԵՎԸՐ Ե ՀԵՆԴՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՅՅ, ՀԵԴՈՒՆԻ ԴՈՒՆՈՒ-
ԽԵԶԳԵՍ Ե ԴԵՅՅՈՅԻ, ԼՈՒՄԱՆԸ, ԾԵՐԿՐԻ ԾԵՎ ԼՈՒՄՆԻ ՀԵՅՅ-
ԳԱ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՅ, ԿՐԵՆԱԿԻ ԱՍՅԴԵՐ

Այսպես ուրեմն, Զինօի կարծիքով մեր Յերկիրը
ծնվել է հեղուկ վիճակում։ Յեթե անդամ իր գոյու-
թյան ամենաառաջին մոմենտում նա բաղկացած է յե-
ղել զազային նյութից, ապա այդ նյութի մի մասը,
այն ել բավական աչքի ընկնող մասը՝ անմիջապես
ցրվել է։ Ըստ վորում, Յերկիրը մի քանի անդամ
փոքրացել է իր ծավալով։ Նրա մնացած մասը սա-
ռել և փոխվել է հեղուկ վիճակի։ Յեկ միայն դա յե
փրկել նրան վերջնական վոչչացումից։

Հայտնի յե, վոր հանդարտ վիճակում և իրենց
կամքին թողած հեղուկի մասնիկները փոխադարձ
ձգողականության շնորհիվ հավաքվում, վեր են ած-
վում գնդի։ Այդպիսի գնդի մե և ստանում այժմ մեր
հեղուկ Յերկիրը։ Այդ դռնդը արտաքինից հետզհե-
տե սառելով սեղմվում և փոքրանում եւ։ Իսկ սեղմ-
վելու շնորհիվ նա ներսից ավելի ու ավելի տաքանում
եւ սկսում է շարժվել իր առանցքի շուրջը։ Վոր-
քան նա ավելի յե սեղմվում, այնքան արագանում է
նրա շարժումը։ Իսկ ի՞նչ պիտի պատահեր նրա հետ
այդ անընդհատ արագացող պտտման շնորհիվ։


Մենք արդեն գիտենք, թե ինչ փոփոխություններ
են կատարվում գնդի հետ, յեթե նա բաղկացած է զա-
զային նյութից։ Հիշենք, վոր գնդամեւ զազային մը-
շուշազանդվածը պտտվելու հետեանքով ընվեռների
մոտ տափականում եւ լայնանում հասարակածի մոտ։
Այդպիսով գունդը ստանում է նարնջի մեւ։ Յեթե
նա ավելի արագ է պտտվում, նա ավելի յե տափա-
կանում և արդեն ստացվում է վոսպնյակի, կամ յեր-
կուռուցիկ ապակու մեւ։ Բայց նույնը չի տեղի ունե-
նա, յեթե պտտվի հեղուկից բաղկացած գունդը։

Մի քանի գիտնականներ ուշադրությամբ ուսում-
նասիրել են, թե ինչ մեեր է ստանում պտտվելիս հե-

Դուկ գումղը: Պարզվել է, վոր այդ ձևի ըստ բալորովին, տարբերվում են այն ձևերից, վորոնք ստացվում են դաղային դնդի պտավելիս: Պտավող հեղուկ գումղը վոչ միայն տափականում ե բնեների մոտ և լայնանում հասարակածի. նա յերկարանում ե մի ուղղությամբ և ովալ ձև և ստանում: Ապա ստացվում ե ձվի ձև, վորը յերկու կողմից ել սրածայր և: Իսկ հետո, ավելի պտավելիս
 ստացվում ե մի կողմի վը-
 րա դրած տանձի ձև, վորի
 մի ծայրը ավելի լայն ե,
 մյուսը նեղ բայց այդ տան-
 ձի ձևը անկյուն ե և շատ
 կարճ ժամանակ և պահպան-
 վում: Հենց վոր պտավելը
 ավելի յե արագանում, տան-
 ձի լայն և նեղ մասերի մեջ
 տեղում առաջանում ե սեղմ-
 ված տեղ, իսկ հետո լրիվ
 ճեղքում: Փոքր մասը բա-
 ժանվում ե մեծից և մեկ
 պտավող մարմնի փոխարեն
 ստացվում ե յերկուսը:

Դարսինի կարծիքով նման
 ճեղքում ե կատարվել մեր
 Յերկը հետ, յերը նա դեռ
 հեղուկ վիճակումն ե յեղեւ:

Յերը հրահեղուկ յերկը ա-
 զունդը սկսում ե շարժվել
 Արևի շուրջը, Արևն սկսում է
 մակընթացային ազդե-



Նկ. 36. Պտավող
 հեղուկ մասայի
 մեջ հաջորդական
 փոփոխություն-
 ները:

Նկ. 37. Պտավող
 դաղի մասայի
 մեջ հաջորդա-
 կան փոփոխու-
 թյունները:

ցություն ունենալ նրա վրայ իր ձգողականությամբ

Նա քայլում եւ յերկրագունդը ղեղի իրեն և զբանից
Յերկիրը ստանում եւ մի փոքր ովալ ձեւ

Նույն այդ ձեռվ՝ ել ազդել եւ մեր Յերկրի վրա
իր առանցքի շուրջը շարունակ արագացող պտտվելը:
Դրա հետեւանքով նա անընդհատ ստացել եւ այն ձեռ-
ըը, վոր ընդունում եւ պտտվող հեղուկ մարմինը, այ-
սինքն, սկզբից ձմի ձեւ, հետո տանձի ձեւ: Իսկ յերբ
պտտվելը արագանում եւ, մեր տանձածե Յերկիրը պա-
տըսվում եւ յերկու մասի՝ մեծ եւ փոքր: Փոքր մասից
եւ առաջացել Յերկրի արբանյակ Լուսինը:



Նկ. 38. Լուսինի առաջացումը ըստ Զ. Դարմինի

Լուսինը 81 անգամ Յերկրից փոքր է: Ուրեմն,
Յերկրից բաժանվել եւ մի կտոր, վոր կազմում եւ նը-
րա նախկին մասսայի մեկ ութսունմեկերորդ մասը,
բայց այդպիսով նա ձեռք եւ բերել արբանյակ: Դար-

Մինը հաշվել ե, վոր այդ նեղքումը և կուսնի անջատումը Յերկրից կարող երին տեղի ունենալ միայն ժամանակ, յերբ Յերկրը պտավում եր իր առանցքի շուրջը ութ անդամ ավելի արագ, քան այժմ։ Դա ցույց ե տալիս, վոր յեղել է ժամանակ, յերբ որը մեր Յերկրի վրա տեղել և վոչ թե 24 ժամ, այլ 3 ժամ։

Անջատվելով Յերկրից, կուսինը սկզբում չեր հեռանում նրանից, այլ գտնվում եր համարյա թե շփման մեջ նրա հետ։ Նրանք յերկուսը միասին կաղմում երին դեռ մի ամբողջություն։ Յերկուսն ել պըտավում երին ընդհանուր կենտրոնի՝ Յերկրի առանցքի շուրջը։

Այսպիսով, ինչպես որը, նույնպես ել ամիսը տեղում երին 3 ժամ, այսինքն հավասար երին իրաք։

Բայց ժամանակի ընթացքում կուսինը սկսեց ավելի ու ավելի հեռանալ Յերկրից։

Միաժամանակ նա սկսեց մակընթացային աղղեցությունն զործել իրեն ծնող Յերկրի վրա։ Առաջացնելով նրա վրա մակընթացություններ, կուսինը, ինչպես մենք այժմ կտեսնենք, սկսեց արգելակել, դանդաղեցնել Յերկրի պտավելն իր առանցքի շուրջը։

Գետք ե նշել, վոր ներկայումս ձգողական ուժի շնորհիվ կուսնի կողմից Յերկրի վրա առաջացրած մակընթացային ավելի ավելի դանդաղ և շարժվում, քան պտավում և Յերկրին իր առանցքի շուրջը։ Այդ դանդաղումը տեղի յե ունենում այն պատճառով, վոր ներկայումս Յերկրի արտաքին կեղևի մեջ մասը կազմող ջրի մասնիկները շփվում են միմյանց հետ։ Իսկ ամեն մի շփում հետզհետե արգելակում, դանդաղեցնում և շարժումը։ Յերկրի ովկիանոսների մակընթացությունները, ինչպես Զինոն և ասում, «Ճնշում դործ դնելով իրենց տակի պինդ դետնի վրա, դանդաղեցնում են նրա պտավելը»։

Մակընթացային շփման արգելակող աղղեցությունը ավելի ուժեղ եր արտահայտվում այն հեռու

Ժամանակները, յերբ մեր Յերկիրը գտնվում եր Հալ-
ված Հրահեղուկ վիճակում և յերբ նրա արտաքին
պատյանը ավելի թանձր և մածուցիկ եր, քան այժ-
մյան ջուրը։ Այդ շփման հետևանքով Յերկրի ամեն
մի դարձն իր առանցքի շուրջը կատարվում եր և կա-
տարվում ե ավելի ու ավելի դանդաղ և որերն աստի-
ճանարար ամենի ու ավելի ելին յերկարում։

Համաձայն Դարվինի հաշ-
վումների, այդ դանդաղու-
մը շատ չնշին եւ նա 100
հազար տարվա ընթացքում
կազմում ե մեկ վայրկյան։
Հետևաբար, ամեն 100 հա-
զար տարվա ընթացքում
որը մեկ վայրկյանով յեր-
կարում եւ Մեղ համար այդ
թիվը չափազանց աննշան
եւ Բայց յերկնային լուսա-
տուների կյանքում, վորը
տևում ե միլիոնավոր և մի-
լիարդավոր տարիներ, նույ-
նիսկ այդպիսի փոքր մեծու-
թյունը կարևոր նշանակու-
թյուն ունի Միլիարդ տա-
րիների ընթացքում՝ վայր-
կյանները դառնում են ըոպեներ, ժամեր և որեր

Նկ. 39. Յերկրի և Լուսի
համեմատական մեծու-
թյունները։



Յեթե անգամ այժմ, յերբ Լուսինը մեզնից հեռու
յե գտնվում, նա արգելակում ե Յերկրի շարժմանը,
ապա կարելի յե պատկերացնել, թե վորքան մեծ ե
յեղել այդ արգելակումը, յերբ Լուսինը Յերկրից
մոտ տարածության վրա յե գտնվել։ Կարելի յե յե-
րեվակայել, թե ինչ հոկայական մակընթացություն-
ներ ե բարձրացրել նա Յերկրի հրահեղուկ կամ մա-
ծուցիկ մակերեսի վրա։ Յերկրի պատվելը հետզհետե

դանդաղել և և այժմ նրա մի դարձը առանցքի շուրջը
կատարվում և արդեն վոչ թե 3 ժամում, այլ պա-
հանջվում և 24 ժամ։ Լուսինը արդ ժամանակամիջո-
ցում հեռացել և մեզնից և այժմ նրան Յերկրից բա-
ժանում և 384 հազար կիլոմետր տարածություն։ Նրա
որրիտը մեծացել և և նրան հարկավոր և մասավորա-
պես 28 որ, վորպեսդի մեկ անդամ դառնա Յերկրի
շուրջը։

Դարվինի հաշվումները ցույց են տալիս, վոր
Լուսինը դեռ յերկար ժամանակ կշարունակի հեռանա։
Յերկրից ։ Նրա որրիտը հետզենտե կմեծանա և նու-
այնիվ ու ավելի դանդաղ կպտավիր Յերկրի շուրջը։
Ամիսը նույնպես կերկարի։


Ավելի շուտ կղանդաղի Յերկրի պտավելն իր ա-
ռանցքի շուրջը։ Որեւը Յերկրագնդի վրա նույնպես
վերկարնն ։ Նրանք նույնիսկ ավելի արագ կերկա-
րեն, քան ամիսը։ Վերջապես, կղա մի ժամանակ,
յերբ որը և ամիսը միանդամայն կհավասարվեն մի-
մանց, ինչպես այն ժամանակ եր, յերբ Լուսինը
նոր եր բաժանվել Յերկրից։ Որը այժմյան որից 57
անդամ ավելի կերկարի, այսինքն մի որը կտեսի 57
այժմյան որ։ Այդպիսով տարվա մեջ կլինեն միայն
վեց և կես որ։

Ամիսը այն ժամանակ նույնպես կտեսի 57 որ։ Յերբ
այդ ժամանակը հասնի, Յերկրը և Լուսինը կղադա-
րեն միմյանց նկատմամբ պտավել առանցքի շուրջը։
Լուսինը այլևս չի պտավիր Յերկրի չորս բոլորը։ Նա
միշտ դարձած կլինի դեպի Յերկրի միկնույն կողմը։

Մենք դիտենք, վոր Լուսինը դարձած և դեպի
մեղ միշտ միկնույն կողմով։ Մենք յերբեք չենք տես-
նի այն, ինչ վոր կա նրա մյուս կողմում։ Ի՞նչից և
դա առաջանում։ Նրանից, վոր միլիոնավոր տարիներ
շարունակ Յերկրին ուժեղ մակընթացային ազդեցու-
թյուն և ունեցել Լուսինի վրա։ Նա հետզենտե արդե-
լակել և Լուսինի պտավելը և վերջապես բոլորովին
կանգնեցրել և նրան։ Այդ ժամանակվանից Լուսինը

դարձած և դեպի Յերկիրը միշտ իր միւնույն կռումով:

Նույնը կպատահի և Յերկիրի հետ, յերբ որը և ամիսը կհավասարվեն: Նա կղազարի շարժվել Լուսի նկատմամբ, բայց նրանք յերկուսն ել՝ և' Յերկիրը, և' Լուսինը կպատվեն ընդհանուր կենտրոնի, Յերկիրի կենտրոնի շուրջը: Նրանք միասին դարձ կկատարեն յերկրագնդի առանցքի շուրջը, կարծես թե նրանք մի միասնություն կազմեն, չնայած հեռավորությանը: Ինչպես Լուսինը դարձած և դեպի Յերկիրը միշտ իր միւնույն կողմով, այսպես եւ Յերկիրը դարձած կլինի դեպի Լուսինը միշտ իր նույն կիսագնդով: Յեկ միայն այն մարդիկ, վոր ապրելիս կլինեն Յերկիր այդ կիսագնդի վրա, միշտ կտեսնեն Լուսինը: Իսկ նրանց համար, վորոնք կապրեն Յերկիրի մյուս կեսէ վրա, Լուսինը անտեսանելի կլինի:



Նկ. 40. Կրկնակի առաղերի տեսքը հեռադիտակով

Սակայն Դարվինի հաշվումները ցույց են տալիս, վոր այդ դրությունը հավիտենական չի լինի: Կանցնէ կրկին յերկար ժամանակ և Լուսինը նորից կսկսի մոտենալ Յերկիրն: Յերկիրի և Լուսնի միջի տարածությունը ավելի ու ավելի կիոքրանա և վերջապես Լուսինը կընկնի իրեն ծնող Յերկիրի վրա:

Ահա թե ինչ յեղբակացությունների յե յեկել Դարվինը Յերկիրի և Լուսնի պիճակի մասին յերկարատեղ և դժվարին հաշվումներից հետո: Աստղաբաշխներից վոմանք նրա հետ համաձայն չեյին: Բայց յեր-

կընքի ուսումնասիրությունները ցույց տվեցին, վորի իրոք, այստեղ տեղի յեն ունենում յերեսութներ, վորոնք հիշեցնում են Դարվինի ասածը Յերկըի և Լուսնի մտախնչ:

Աստղաբաշխները վաղուց եյին ուշադրություն դարձրել այն բանի վրա, վոր աստղերի հօկայական մեծամասնությունը դասավորված ե զույգ-զույգ։ Մրանք այսպես կոչված, կրկնակի աստղերն են։ Այդ զույգ կազմող աստղերը, սովորաբար, շատ քիչ են տարրերվում միմյանցից իրենց մեծությամբ։ Գտնը-վում են միմյանցից մոտիկ տարածության վրա և պատվում են ընդհանուր կենտրոնի շուրջը։ Ինչպես են առաջացել այդ կրկնակի աստղերը։

Այժմ աստղաբաշխները մտածում են այսպես։ Յեթե մեծ աստղը դանդաղ ե սկստվում իր առանցքի շուրջը, նա միշտ ել կրկնա միայնակ։ Իսկ յեթե նա արադ ե պտտվում, ապա նա սկզբում յերկարանում ե, հետո ընդունում ե ձմի ձև, ապա տանձի ե գերջապես պատվում ե յերկու մասի։ Այդ մասերը կազմում են կրկնակի աստղեր։ Ակզրում նրանք գտնվում են միմյանցից շատ մոտ։ Հետո բաժանվում ե հեռանում են մեկը մյուսից, ինչպես դա, Դարվինի կարծիքով, պատահել ե Յերկը և Լուսնի հետ։

Իսկապես, գիտողությունները ցույց են տալիս, վոր յերբեմն կրկնակի աստղերը բոլորովին մոտ են մեկը մյուսին, յերբեմն ել նրանց միջի տարածությունն ավելի մեծ ե։ Ըստ յերեսութին, առաջին աստղերը միայն վերջին ժամանակներն են առաջացել, իսկ յերկրորդները ավելի յերկար ժամանակ դոյլություն ունեն։ Այսպիսով կրկնակի աստղերի գոյցությունը ապացուցում ե, վոր Դարվինի մտքերը շատ բանում արդարացի յեն։

Սակայն սրանով չեն սահմանափակվում այդ ականավոր գիտնականի ծառայությունները։ Մենք արդեն մի քանի անգամ հիշել ենք այն մակընթացային ազգեցության մասին, վոր ունենում են միմյանց

վրա զանազան յերկնային լուսառումներ: Մակընթացության մասին յեղած այդ ուսմունքը մշակել ե վոչ այլ վոք, այլ նույն Դարվինը: Ներկայումս այդ ուսմունքը ընդունված ե դիտնականների մեծամասնության կողմից: Յեվ արեգակնային համակարգության առաջացման մասին բոլոր նոր հիպոթեզները ընդունված են մակընթացային ազդեցությունը. վորպես այն դիմավոր ուժ, վորը ստիպել է Արեին ստեղծել իրեն շուրջը պտտվող մոլորակների մի ամբողջ բնտանիք:

17. ՅԵՐԿԱՐԸ ԻՐ ԴԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԿ ԵՐಡԱՆՈՒՄ. ԻՆՉ ԱՎԱԴԱ. ԵԽ ՍՊԱՍՈՒՄ ՆՐԱՆ

Պատկերացնենք մեզ մեր Յերկիրը միլիոնավոր տարիներ սրանից առաջ: Նրա մակերեսն այն ժամանակ ներկայացնում եր հարված հրե ծով: Իսկ դրսից նա շրջապատված եր թանձր մթնոլորտով, վոր հազեցած եր ջրային գոլորշիներով: Յերկրի վրա այն ժամանակ դեռ ջուրը չկար, ուժեղ տաքությունը թույլ չեր տալիս ջրային գոլորշիներին սառչել և անձրեների ճեռվ թափվել Յերկրի վրա:

Բայց անցան ելի միլիոնավոր տարիներ: Հրե ծովի մակերեսի վրա սկսեցին յերեալ խարամներ (ալակ), կարծր մարմնի թանձրուկներ (ցցւեկ): Այդ խարամները լողում եյին հեղուկ մազմայի մեջ և տաքությունից նորից հալվում: Բայց նրանց տեղ առաջանում եյին նոր խարամներ: Նրանց քանակն ավելի ու ավելի մեծանում եր և վերջապես նրանք բռնուրը միացան և ամբողջ յերկրավնդի յերեսին մի միապազաղ կեղե կազմեցին: Յերբեմն շիկացած մազման ճեղքում եր իրեն պատող զրահը, դուրս եր դալիս: Այստեղ նա սառում եր և ավելի յեր հաստացնում կեղեւ: Յերբ սառում ե Յերկրի կեղեւը և նախկին տաքությունը վերանում ե, մթնոլորտում դանված ջրային գոլորշիները սառչում են և հորդ անձրեների ճեռվ թափվում են Յերկրի վրա: Այժմ ջուրը համասար

շերտավ ծածկում և ամբողջ յերկրագունդը, առաջաց-
նելով սկզբնական ովկիանոսութեան:

Այստեղ, այս ովկիանոսումն է ծագել կյանքը,
այստեղ են ժամանակի ընթացքում յերևացել առա-
ջին կենդանին եյտակները:



Նկ. 41. Յերկվորյակ-մշուշազանդվածները

Իսկ Յերկիրն այդ ժամանակ շարունակում է
դանդաղ կերպով սառչել և սեղմվել: Բայց հեղուկը
ավելի արագ և սեղմվում, քան կարծր մարմինները:
Այդ պատճառով հրահեղուկ մազման ավելի ուժեղ եր
սեղմվում, քան նրան պատած և արդեն սառած Յերկ-
րի ամուգ կեղերը: Դրանից առաջացող դատարկու-
թյունները ծածկելու համար Յերկրի կեղեն սկսում
է կոտրատվել մասերի: Այդ մասերն իրենց կողերով
ընկնում են միմյանց վրա, դուրս են պրծնում և
այդպիսով առաջացնում են բարձրություններ—առա-
ջին լեռները: Իսկ բարձրությունների արանքում ըս-
տացվում եյին խորը խոռոչներ, վորանդ հավաքվում
և այժմ ջուրը: Զրից դուրս յեկած ցամաքի մասերը
առաջացրել են առաջին մայր ցամաքները, վոր բա-
ժանված եյին միմյանցից ովկիանոսի մասերով:

Մայր ցամաքի վրա նույնպես կային բարձրու-
թյուններ և փոսեր: Փոսերը լցվում են ջրով և դառ-

նում են լճեր։ Ավելի բարձր տեղերից թեքություններով զեսլի ցած են վաղում զետերն ու դետակները։ Նրանք լվանում են այն հանքատեսակները, վորոնց վրայով հոսում են և ավազը, կավը ու այլ մանրացած մասնիկներ տանում են զեսլի ծովերը։ Յերկրի կեղեւը կազմող այդ տարբեր հանքատեսակների մասնիկները նստելով ծովի հատակին, ժամանակի ընթացքում առաջացնում են հսկայական խավեր, այսպիս կոչված ջրաբերովի, կամ նստվածքային շերտեր։

Անցավ ելի յերկար ժամանակաշրջան։ Սկզբնական մայր ցամաքները կամ ամբողջովին, կամ մասամբ իջան և ծածկվեցին ջրով, իսկ ծովի հատակը տեղ-տեղ բարձրացավ և առաջացրեց նոր ցամաքներ։ Դա կրկնվել է շատ անգամ և շատ անգամ ել Յերկրի տեսքը փոխվել է, այնտեղ, ուր առաջ ծով եր, յերեման ե գալիս ցամաք, իսկ մի այլ տեղում ցամաքը թագնվում է ջրի տակ։ Այդ պատճառով ել մենք հաճախ սարերում գտնում ենք ծովային խխունջներ։ Կամ ջրային կենդանիների այլ մնացորդներ, վորոնք վկայում են, վոր այդ սարերը յերբեմն կազմել են ծովի հատակը։

Այն ժամանակ յերկրագնդի վրա կլիման շատ ավելի տաք եր։ Այդ պատճառով Յերկրը ծածկող րուսականությունը ավելի նման եր այն րուսականությանը, վոր հիմա կա տրոպիկական յերկրներում։ Բայց հետզհետե, յերբ կլիման ավելի սառում եր այդ բույսերն ել աստիճանաբար փոխվում են ուրիշ տեսակների, վորոնք ավելի հիշեցնում են մեր բարեխառն զոտու բուսականությունը։ Փոխվում եր նաև կենդանական աշխարհը։ Կենդանիների սկզբնական տեսակները, վորոնք մի ժամանակ ապրել են Յերկրի վրա, վաղուց մեռել, անհետացել են։ Բայց մենք դիտենք, թե ինչ կենդանիներ են յեղել դրանք, վորովհետեւ զիտնականները գտնում են նրանց մնացորդները, որինակ, նրանց կմախքները Յերկրի հնագույն շեր-

տերի մեջ։ Այդ անհետացած կենդանիներին փոխարեւնում են այլ տեսակներ, ավելի գարզացած, ավելի բարձր կազմություն ունեցողները։ Ամենից ուշ յերեւան են յեկել բարձր կաթնասուն կենդանիները և, վերջապես, մարզը։ Այսպես աստիճանաբար Յերկիրը ստացել է այն տեսքը, վորն ունի նա այժմ։

Բայց հայիտյա՞ն արդյոք կտևի Յերկրի այս դըրությունը։ Մի՞շտ դոյություն կունենա նրա վրա կյանքը, և մի՞շտ արդյոք կապրի ինքը՝ Յերկիրը։

Այս հարցին մենք պետք են պատասխանենք, վոր վոչինչ հավերժական չի։ Յեվ թեև յերկնային լուսառուների կյանքը տեսում և միլիոնավոր, նույնիսկ միլիարդավոր տարիներ, համենայն դեպս, նա ել իր վախճանն ունի։ Կղա ժամանակ, յերբ կմարի Արեւ։ յերբ նա նույնպես կծածկվի կարծր պատյանով և կղառնա խավար և սառը մի մարմին, ինչպիսին և այժմ մեր Յերկիրը։ Այն ժամանակ նա կղաղարի ուղարկել մեր Յերկրին լույս և ջերմություն։ Այն ժամանակ կյանքը մեր Յերկրի վրա ել պիտի դադարի, մեռնի։

Ահա թե ինչպես են նկարագրում հայտնի շվեդացի դիտնական Արենիուսը մեր մոլորակի մահը։

«Կամ ժամանակ, յերբ Արթը կսառի և կկորցնի իր ուժը և դրա հետ միասին Յերկիրը կընկղմվի խավարի ու ցրտի մեջ։ Մովերը աստիճանաբար կսառն և վերջի վերջո մինչև հատակը սառույց կղառնան։ Տեղումները հետզհետե կպակասն և վերջապես կտեղա միայն մի քիչ ձյուն։ Ամբողջ Յերկրի այն մասը, ուր տարածվում է ցամաքը, կղառնա ավաղային մի անապատ։ Մութ շերտերով կերևան նրա վրա ճեղքերը, վորոնք Յերկրի խորքերից դուրս յեկող զազերի չնորհիվ, դունավորված կլինեն։ Վերջապես կանհետանա կյանքի վերջին մնացորդը և միայն ավազի մըրիկները Յերկրի խորքերից դուրս յեկող վերջին դուրը չնորհիվ հետ միասին վորոշ փոփոխություն կըմտցնեն նրա ամայի միալարության մեջ։ Ցած իջած

մետեորիտական փոշին, վորն այժմ հանդիսաւ մնում է ծովի հատակին, կամաց-կամաց կծածկի ամբողջ Յերկիրը ծածկոցով, վոր աղյուսա-կարմիր գույն կունենա, նրա մեջ յեղած յերկաթի ոքսիդացման շնորհիվ:

Այսպիսի վիճակ եւ սպասում ապագայում մեր Յերկրին և Արևին։ Մեր Յերկիրը կղառնա այնպիսի մեռած մոլորակ, ինչպիսին եւ այժմ կուսինը, վորի վրա, ինչպես հայտնի յեւ, չկա վոչ ող, վոչ ջուր, վոչ բույս և վոչ կենդանի։ Բայց ի՞նչ կլինի դրանից եւ հետո։



Նկ. 42. Պարուրային մշուշաղանդված։

Հնարավոր եւ, վոր Յերկրի հետ ել կլինի այն, ինչ վոր Դարվինի կարծիքով լինելու յեւ կումնի հետ։

Նրա պատվելը ավելի ու ավելի կղանդադի։ Նա հետզհետեւ կմռտենա Արևին և վերջապես կընկնի նրա վրա։ Բայց հնարավոր եւ նաև, վոր նա դեռ շատ յեր-

կար ժամանակ, վորպես առող, մեռած մի մարմին, կպտտվի մարած Արևի շուրջը: Բայց հավետյա՞ն կը տեի արդյոք Արևի ու Յերկրի այս դրությունը և ի՞նչը կարող ե սրան վերջ տալ:

Առաջներում զիտնականները կարծում եյին, վոր յերբ Արևը կորցնի իր լույսի մեծ մասը, կամ նույնիսէ բոլորովին մարի, նրա հետ կարող ե մի մեծ կատաստրոֆա պատահել, վորը կվոչնչացնի նրան բոլոր մոլորակների հետ միասին, բայց և միաժամանակ կվերակենդանացնի, նոր կյանք կներշնչի նրան: Նման կատաստրոֆաներ իրոք պատահում են վորոշ առաջերի հետ: Տեսնենք ինչպե՞ս են կատարվում այդ մեծ յերկնային կատաստրոֆաները և կարո՞ղ ե արդյոք այդպիսի կատաստրոֆա տեղի ունենալ մեր Արևի հետ:

18. ԽԵԶՊՍ ԵՆ ՎԱՐԱՌՈՒՄ ՀԱՅՐ, ԱՍՏՂՆԵՐԸ, ՀԱՅՐ ԱՍՏՂԵՐԻ ՀԵՑԱՋԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՑՈՒՄ ՅԻՆԾ ՌՈՅԴԿԵՐԻ ԱՍՏՂԵՐ, ՎԵՐԺԻՆ ԺԱՄՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅՐ, ԱՍՏՂՆԵՐԸ, ԻՆՉՊՍ ՆԵՐՆ ԱՌԱՋԱՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐՈՒՄ ՀԱՅՐ, ԱՍՏՂՆԵՐԻ ՌՈՅԱՎԱՅՐԱԿԵՐԻ ՀԵՐԱՅԻՆՆՍ ՀԱՄԱՍԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐ, ԱՍՏՂՆԵՐ, ԻՆՉ ԵԶՋՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱՆ ԱՍՏՂԱԽԵՐԵՐԸ ՀԱՅՐ, ԱՍՏՂՆԵՐ, ԱՍՏՂԵՐԻ ԲՈՅԱՎԱՅՐԱԿԵՐԸ ՌՈՅՈՒԹԻՒՆ ՅԵԿ, ՊԱՑԱՍԱԽԵՐԸ ՄԱՅԻՆ:

ՀԱՅՐ, ԱՍՏՂ,

Յերբ խավար ու պարզ գիշերով մենք նայում ենք յերկնքին, նա մեզ թվում ե անշարժ ու անփոփոխ: Մենք տեսնում ենք բոլոր այն աստղերը, վարոնց միշտ տեսել ենք՝ ամեն մեկն իր տեղում: Վոչ մի փոփոխություն վոչ նրանց դասավորության, վոչ ել թվի մեջ մենք չենք նկատում: Ճիշտ ե, յերբեմն յերկնքի ու կամարը հանկարծ կարծես ճեղքում-անցնում ե պայծառ, փայլում մի գիծ: Սա, այսպես կոչված «ընկնող աստղ» ե: Բայց մենք արդեն զիտենք, վոր ընկնող աստղը՝ մետեոր, կամ «յերկնային քար» ե, վորը թոել, ընկել ե մեր մըթնոլորտի մեջ և դիպչելով նրան, բոցավառվել ե: Նա վոչ մի ընդհանուր բան չունի իսկական աստղերի հետ, վորոնք հազարավոր անշարժ փայլվիլող կետե-

ըսկ ծածկում են գիշերային յերկինքը։ Այդ աստղադարդ յերկինքը միշտ մնում է անփոփոխ։ Աստղերի քանակը կարծես յերբեք վոչ ավելանում, վոչ ել պակասում է։ Նա, ըստ յերեսութին, միշտ նույնն է մընում։ ինչպես յերեկ, այնպես ել այսոր, ինչպես անցյալ տարի, այնպես ել այս տարի։

Սակայն իրականում դա այնքան ել ճիշտ չե։ Պատահում ե, վոր բազմաթիվ մեզ լավ ծանոթ աստղերի շարքում հանկարծ բռնկվում է նոր, պայծառ, մինչ այդ մեզ անծանոթ մի աստղ։ Այդպիսի անսպասելի յերեացող աստղերը գիտնականները անվանում են «նոր» աստղեր։ Սակայն այս անունը իսկական իմաստով այնքան ել ճիշտ չի։ Աստղաբաշխները պնդում են, վոր այդ աստղերը առաջ ել յեղել են յերկնքի նույն տեղերում, բայց այնքան թույլ եյին, վոր նրանց կարելի յեր նշմարել միայն հեռադիտակով։ Մի քանի առանձնապես թույլերը նույնիսկ հեռադիտակով չեյին յերեւմ։ Միայն լուսանկարչական թիթեղիկների վրա, վորտեղ նկարված եր յերկը այդ մասը, կարելի յե նրանց դանել, վորսկս շատ թույլ կետեր։ Դա ապացուցում է, վոր նրանք գոյություն են՝ունեցել և առաջ։ և տեսանելի յեն դարձել հեռադիտակով և նույնիսկ հասարակ աչքով միայն այն ժամանակ, յերը բոցավառվել են պայծառ լույսով։

«Նոր» աստղերը դիմավորապես բռնկվում են հարդադողի ճանապարհի մոտ։ Նրանցից մի քանիսը իրենց յերեալու ժամանակ այնքան պայծառ են փայտում, վոր լընդհանուր ուշադրություն են գրավում։ Ժամանակին ընթացքում նրանց փայլը հետզհետե թուլպնում ե և վերջ ի վերջո նրանք տեսանելի յեն լինում միայն հեռադիտակով։

Հին չինացի գիտնականները դեռ մեր գարագինից 2½ հազար տարի առաջ մի շարք այդպիսի «նոր» աստղերի բռնկումներ են նշմարել։ Ի միջի այլոց, չինական տարեգրության մեջ հիշատակված ե

մի «նոր» աստղի մասին, վոր 134 տարի մեր դարաշրջանից առաջ յերևացել ե Կարինի համատեղության մեջ։ Հետաքրքրական ե, վոր այդ նույն աստղը դիտել ե Յեղիպտոսում աղեքսանդրիացի հայտնի դիտնական աստղաբաշխ Հիպաթիուս։ Այդ աստղի դիտումը դրդել ե նրան կազմել հասարակ աչքով տեսանելի ամենից ավելի պայծառ աստղերից ցուցակը։

Այս ցուցակի մեջ են մտել հազարից քիչ ավելի աստղ և ապագայում այդ ցուցակը աստղաբաշխների համար մեծ դեր ե խաղացել, վորովհետեւ հեշտացրեց տարբերելը «նոր» փայլուն աստղը արդեն հայտնի ու ծանոթ աստղերից, վորոնք կային այդ ցուցակի մեջ։

Հետաքրքրական ե նաև չինացի պատմագետի հաղորդածն այն «նոր» աստղի մասին, վոր յերեացել ե մեր դարաշրջանի 173 թվին։ «Աստղը—ասում ե նա— չքացավ իր յերեան գալուց 8 ամիս հետո, ընդունելով մեկը մյուսի հետեւից հինգ դույն՝ սպիտակ, կապույտ, դեղին, կարմիր և ուե»։ Վերջինը՝ այսինքն սև գույնը, իշարկե, ճիշտ չե։ Բայց պատմությունը հետաքրքրական ե նրանով, վոր ցույց ե տալիս, թե ինչպիսի ուշադրությամբ են հետեւել չինացի դիտնականները «նոր» աստղի գույների փոփոխությանը։

Յեկրոպայում «նոր» աստղի առաջին լուրջ, գիտական հետազոտությունը կատարել ե 1572 թվին դանիացի աստղաբաշխ Տիխո-Բրադեն։ Պահպանվել ե նրա սեփական հետաքրքրական պատմությունն այն մասին, թե ինչպիսի մեծ ապավորություն ե թողել նրա վրա այդ «նոր» աստղը, վոր յերեացել ե յերկընքում։

«Յերբ յես բաց տեղում իմ հայացքն ուղղեցի ինձ լավ ծանոթ յերկնակամարին, աննկարադրելի դարմանքով նկատեցի զենիթի մոտ կասսիոպեյի մեջ մի անշարժ փայլուն աստղ, մինչ այդ չտեսնված մեծության։ Հուզմունքից յես չեյի կարողանում հավատալիմ զգայարաններին։ Ցանկանալով համոզիմել, վոր դա

պատրանք չե և, կամենալով ուղիղների վկայությունն ունենալ, յես կանչեցի լարորատորիայից իմ ողնականներին և հարցրի բոլոր մեր մոտով անցնողներին, տեսնո՞ւմ են նրանք ել ինձ նման հանկարծակի բռնկված աստղը:

Այդ «նոր» աստղը, վոր այժմ հայտնի յե գիտության մեջ, «Տիխո-Բրազեյի աստղ» անունով, հայտնվել և կասսիոպեյի համաստեղության մեջ 1572 թվի նոյեմբերի 11-ին: Նա՝ աչքի յեր ընկնում իր անսովոր փայլով: Նա ամենապայծառ աստղերից ավելի պայծառ եր և տեսանելի յեր նույնիսկ ցերեկն՝ Արևի լուսով՝ հասարակ աչքով: Ի միջի այլոց, պեաք և հիշել, վոր այն ժամանակ յերկինքը կարելի յեր դիտել միայն չգինված աչքով, վորովհետև հեռագիտակ այն ժամանակ դեռ գոյություն չուներ¹): Մի ամսից հետո, դեկտեմբերին «նոր» աստղի փայլը պակասեց, թեև 1573 թվի մարտին դեռ նա թվում եր առաջին մեծության աստղ: Նա տեսանելի յեր մի ամրող տարուց ավելի և միայն հետեւյալ տարիւ (1574 թ.) մարտին նա բոլորովին անհայտացավ մարդկանց աչքից:

Սկզբում նա սպիտակ աստղ եր, հետո դարձավ դեղին և ապա կարմիր: Այդպիսով նա շատ կարճ ժամանակամիջոցում ապրեց աստղի դարդացման այն դանագան ստադիաները, վորոնցով սովորաբար աստղը անցնում և շատ դանդաղ՝ միլիոնավոր տարբիների ընթացքում:

Համեմատաբար մոտիկ անցյալում, 1891 թ. դեկտեմբերին «նոր» աստղ յերեւաց Կառապանի համաստեղության մեջ: Նա աչքի չեր ընկնում առանձին փայլով և նույնիսկ լավ չեր յերեւում հասարակ աչքով:

¹ Խչպես արդեն առված և VIII դիմում, առաջին հետադիմումը պատրաստել և Դալիելը 1609 թ., այսինքն, Տիխո-Բրանզեյի կողմից կառափողեյի համաստեղության մեջ ընորդատղի հետազոտումից 37 տարի հետո:

Այնուամենայնիվ այդ աստղը հատկապես հետաքրքրության և մեզ համար։ 1892 թվի կեսին նա ավելի ևս թուլացավ և համարյա անհետացավ հեռագիտակի համար։ Բայց դրանից հետո նա նորից բռնկվեց և այդ ժամանակ նրա շուրջը յերեաց մշուշազանդված։ վորը դառնում եր թույլ, աղոտ շող։ Մինչև 1895 թիվը այդ մեղում յերեսում եր փոքր մոլորականման մշուշազանդված։

Առանձնապես պայծառ «նոր» աստղ բռնկվեց Պերսեյի համատեղության մեջ՝ 1901 թվի փետրվարի 22-ին։

Ամերիկայի հայտնի Հարվարդի աստղադիտարանում²⁾ դրանից միայն մի որ առաջ նկարված լուսանկարչական թիթեղիկների վրա, ուր յերեսում եյին նույնիսկ շատ անշան աստղերը, այդ տեղում վոշինչ չկար։

Այդ «նոր» աստղն իր փայլով գերազանցում եր առաջին մեծության աստղերին։ Բայց հետո, ինչպես մյուս «նոր» աստղերի, այնպես ել սրա փայլը արադ կերպով սկսեց նվազել և շուտով նրան կարելի յեր նկատել միայն հեռադիտակով։

Այս աստղի յերեալուց շատ քիչ անց, նույն 1901 թվի մարտին նայելով հեռադիտակով, նկատեցին նրա շուրջը յերկու մշուշային ողակ։ Այդ ողակները հետզհետեւ լայնանում եյին և հետեւյալ տարվա սկզբուն հասան համարյա Լուսնի սկավառակի մեծությանը։ Ավելի ու ավելի տարածվելով զանազան կողմեր, այդ ողակները վերջ ի վերջո բոլորովին անհետացան։ Իր յերեան գալուց մի տարի հետո, ուսոր Պերսեյանք շրջապատված եր փաքրիկ մշուշազանդվածով, վորն աստղաբաշխները նշմարում եյին դեռ քանի տարի դրանից հետո։

Նույն այդպիսի մշուշազանդվածներ հայտարեր-

²⁾ Հարվարդի աստղադիտարանը գտնվում է Հարվարդի համալսարանին կից, վոր Ա. Մ Նոում ամենահներիցն ե, Մասսաչուսետ նահանգի Քեմբրիչ քաղաքում։

վել են 1918 թվի «նոր» աստղի շուրջը (Արծվի համաստեղության մեջ) և 1920 թվի «նոր» աստղի (Կարապի համաստեղության մեջ). այդ յերկու աստղերն ել պատճեն եյին փոքրիկ կլոր մշուշային շրջաններով:

Այսպիսով «նոր» աստղերն իրենց մարելուց հետո շատ նման են դառնում փոքրիկ գազային մշուշաղանդվածների, սովորաբար կանոնավոր, կլոր ձևի, իլուսոնք այդ պատճառով կոչվում են մոլորականնման:

Ինչպես մենք արդեն տեսանք, մշուշաղանդվածները մինչև այժմ ել աստղաբաշխների համար հանելուկ են հանդիսանում: Այսուամենայնիվ կարելի յէ յենթագրել, վոր կա ինչ վոր կասկ այդ մշուշաղանդվածների և «նոր» աստղերի մեջ:

Յերկնքի վրա գտնված են մոտ հարյուր թույլ աստղեր, վորոնք շատ են հիշեցնում «նոր» աստղերին իրենց զարգացման վերջին՝ ստաղիայում: Այս աստղերից շատերը գտնվում են զազային մշուշաղանդվածների կենտրոնում: Միանդամայն հավանական է, վոր այստեղ մենք դործ ունենք նախկին «նոր» աստղերի հետ, վորոնք մի ժամանակ բռնկվել են:

Յեզ այսպես, տիեզերքում տեղի յեն ունենում մեծ կատաստրոֆաներ, վորոնք ստիպում են հեռավոր, թույլ և յերբեմն բոլորովին մարած մի աստղի կարճ ժամանակով նորից բոցավառվել պայծառ լույսով, իսկ հետո նորից թույլանում ե նրա վայըն այնքան, վոր նա նորից մի թույլ չնշին աստղ ե դառնում, վոր տեսանելի յէ լինում միայն հեռադիտակով:

Իսկ ի՞նչն ե առիթ ծառայում այդ տիեզերական մեծ կատաստրոֆաների համար: Ինչի՞ց են տափանում այդ հոկայական համաշխարհային հրդեհները, վոր մենք դիտում ենք հեռվից, մեր փոքրիկ Յերկրի վրայից, վորպես «նոր» բռնկված աստղերի:

Առաջ գիտնականները բացատրում եյին այդ հետեւյալ ձևով: Վորքան ել մեծ լինեն մի աստղը մյուսից բաժանող տարածությունները, համենայն դեպք

յերեմն կարող ե պատահել, վոր յերկու ասաղ, ի-
բնոց՝ ճանապարհորդության ժամանակ անսահման
տիեզերական տարածությունների մեջ հանդիպեն և
նույնիսկ բաղիսվեն: Հնարավոր ե, վոր միմյանց
հանդիպած յերկու մարմիններն ել, կամ դուցն միայն
մեկը նրանցից հանդիպման մոմենտում լինի հանգած
և արտաքինից ծածկված կարծր կեղևով: Բայց նը-
րանց բաղիսման ժամանակ այնպիսի հսկայական ջեր-
մություն և զարգանում, վոր մարած մարմինները ա-
րագ կերպով նորից բոցավառվում են: Նրանց բաղա-
զիչ նյութը խիստ լայնանում և և չափազանց թե-
թնվ, նորացած մշուշային մատերիայի տեսք և ստա-
նում: Այդ յերկու յերկնային մարմինների բաղիսու-
մից առաջացած բռնկումն ե, իբր, վոր մենք դիտում
ենք վորպես անսպասելի կերպով բոցավառվող «նոր»
աստղեր:

Սակայն ներկայումս աստղաբաշխներն արդեն չեն
բավարարվում այդպիսի բացարությամբ: Նրանք
դունում են, վոր աստղերն այնպիսի մեծ հեռավորու-
թյան վրա յեն գտնվում միմյանցից, վոր նրանց մեր-
ձեցումը կարող ե տեղի ունենալ ամենահազվագյուտ,
բացառիկ դեպքերում: Այնինչ «նոր» աստղերն այն-
քան ել հազվագյուտ չեն: Այժմ աստղաբաշխները յե-
կել են այն յեզրակացության, վոր մարած աստղը
նորից կարող ե բոցավառվել և դառնալ «նոր» աստղ,
առանց մի այլ աստղի հետ հանդիպելու: Նախկին
թույլ կամ բոլորովին մարած աստղի նորից բոցա-
վառվելու պատճառը կարող ե գտնվել իրեն իսկ՝ աստ-
ղի մեջ, այն ե՝ նրա եյության առանձնահատկու-
թյունների մեջ:

Բոլորովին վերջերս, 1934 թվի դեկտեմբերին
Հերկուլեսի համաստեղության մեջ յերեսաց մի «նոր»
աստղ: Նրան դիտելը շատ բան տվեց ընդհանրապես
«նոր» աստղերի ընույթի վերաբերյալ: Մասնաթանանք
ավելի մանրամասն, թե ինչպես են աստղաբաշխները
դիտել այդ աստղը և ինչ յեզրակացությունների յեն

յեկել նրանք «նոր» աստղերի բռնկումներ առաջացնող պատճառների նկատմամբ:

1934 թ. դեկտեմբերի 13-ի գիշերը անգլիացի սիրող-աստղաբաշխ Պրենտիսը ընկնող աստղերը դեմքու ժամանակ, նկատեց Հերկուլես և Լիրա համատեղությունների սահմանի վրա, պայծառ Վեդա աստղից վոչ հեռու, մի այլ պայծառ աստղ: Վոչ նախընթաց որը, վոչ ել յերեկիցն առաջ այդ աստղը չի յերեացի յնքինքում: Պրենտիսը և ուրիշ աստղաբաշխներ, վորոնք հետաքրքրված եյին այդ նոր աստղով, սկսեցին հետազոտել յերեկին այն մասի լուսանկարչական թիթեղիկները, վորտեղ գտնվում եյին Հերկուլես և Լիրա համատեղությունները: Պարզվեց, վոր այն նույն կետում, ուր այժմ պայծառ վառվում նր «նոր» աստղը, առաջ գտնվել ե մի աստղ, բայց այնքան թույլ, վոր հազիվ եր դրոշմվել լուսանկարչական թիթեղիկի վրա, և այդ պատճառով ել, իհարկե, չեր կարող յերեալ հասարակ աչքով:

Աստղաբաշխները բաժանում են աստղերը մի քանի խմբերի, ըստ նրանց պայծառության աստիճանի: Ամենապայծառները անվանում են առաջին մեծության աստղեր, մի քիչ ավելի ողակաս պայծառները՝ յերկրորդ մեծության աստղեր. ասդարձ ավելիս են յերրորդ, չորրորդ մեծության աստղեր և այլն: Հասարակ աչքով կարելի յետեսնել միայն վեցերորդ մեծության աստղերը ներառյալ, ավելի թույլերը տեսանելի յեն միայն հետադիտակով:

«Նոր Հերկուլեսը»— այսպես կոչեցին Պրենտիսի հայտնաբերած աստղը, սկզբում պատկանում եր 14-րդ մեծության աստղերի թվին, այսինքն բոլորումին թույլ եր: Բայց այժմ նա միանգամից դարձավ յերրորդ մեծության աստղ և իր պայծառությամբ մոտենում եր բոլորին հայտնի Մեծ Արջի համատեղության աստղերին: Այդ պատճառով նրան շատ լավ կարելի յեր տեսնել հասարակ աչքով: Հետեւյալ որերը նրա պայծառությունը սկսեց աճել և դեկտեմբերի

22-ի գիշերը նա համարյա հավասարվեց առաջին մեծության աստղերին (ավելի ճիշտ 1,3): Սակայն դա չատ յերկար չշարունակվեց: Շուտով նրա փայլն ըսկըսեց պակասել և նա կրկին դարձավ Յ-րդ մեծության աստղ: Դեկտեմբերի վերջին, Հունվարին և փետրվարին «Նոր Հերկուլեսի» պայծառությունը աննշան աստանումներ ունեցավ 2-րդից մինչև 4-րդ մեծության միջև: Մի առ ժամանակ հետո նրա պայծառությունը նորից սկսեց պակասել և մայիսի սկզբին նա կրկին դարձավ մի թույլ, աննշան աստղ, ինչպես եր մինչև դեկտեմբեր: Բայց ահա մայիսի կեսերին մոտ նա կրկին սկսեց բոցավառվել, վոր չափազանց զարմացրեց աստղաբաշխներին: Մի ամիս անց, Հունիսի կեսին նա նորից այնքան պայծառացավ, վոր նրան կարելի յեր դիտել հասարակ բինոկով:

Ինչպես արտասահմանյան, նույնպես և մեր աստղաբաշխները մեծ հետաքրքրությամբ հետևում են այդ աստղին: Նրա բռնկումից մի քանի որ հետո պարզվեց, վոր նա բաց եր թողնում դազային թաղանթ, վորը լայնանում եր չտեսնված արագությամբ՝ ավելի քան հազար կիլոմետր մի վայրկյանում: Իր պայծառությամբ դա մի աչքի ընկնող «Նոր» աստղ եր: Վերջին յերեք հարյուր տարվա ընթացքում միայն յերեք «Նոր» աստղ են գերազանցել նրան իրենց պայծառությամբ: Բայց զեռ դրա մեջ չեր կայանում որա հետաքրքրությունը գիտնականների համար: Ինչպես մենք արդեն տեսանք, աստղն իր սկզբնական բոցավառվելուց հետո սկսեց թուլանալ փայլի տեսակետից, բայց հետո նորից ուժեղ բոցավառվեց: Այդ բռնկումները կրկնվում եյին մի քանի անգամ, կարծես թե նրա մեջ իրար հետեւից կատարվում եյին մի քանի ժայթքումներ: Նույնիսկ մի գիշերվա ընթացքում աստղը ցույց եր տալիս պայծառության մեջ խիստ տատանումներ: Այդպիսի կրկնվող բռնկումներ և պայծառության խիստ տատանումներ շատ քիչ են պատահում: Սովորաբար «Նոր» աստղերը հանկար-

ծակի բոցավառումից հետո սկսում են ավելի արար մարել և ել նոր բռնկումներ չեն տալիս։ Այդ պատճառով Հերկուլեսի համաստեղության «նոր» աստղը գրավում է աստղաբաշխների առանձին ուշադրությունը և նրանք հույս ունեն, վոր դիտելով այդ բացառիկ հետաքրքրական աստղը, կկարողանան պարզել շատ հանելուկներ աստղերի կառուցվածքի և ըստույթի մասին ընդհանրապես։

Այն ժամանակ, յերբ տպագրվում է այս դիրքը՝ «նոր» աստղը դեռ վառվում է յերկնքում և աստղաբաշխները ուշադիր դիտում են նրան։ Բայց ի՞նչ յեղբակացությունների յեն յեկել նրանք իրենց հետազոտությունների հիման վրա։ Ահա թե ինչպես են արտահայտվում ներկայումս մեր աստղաբաշխները այն պրոցեսի մասին, վոր տեղի յեռ ունենում «նոր» աստղերի բոցավառման ժամանակ և այն պատճառների մասին, վորոնք առաջ են բերում այդ, իր հետաքրքրության տեսակետից՝ բացառիկ յերևույթը։

Սովորաբար «նոր» աստղերը, վորոնք նախքան իրենց բռնկումը կամ բոլորովին անտեսանելի յեն, կամ յերեսում են միայն ամենաուժեղ հեռադիտակներով, դարձանալի արագ, մեկ-յերկու որում ուժեղանում են իրենց պայծառության տեսակետից՝ 10—20 հազար անգամ։ Իրենց ամենաուժեղ պայծառության ժամանակ նրանք լինում են 100000 անգամ ավելի լուսավոր, քան Արեւ և ուրիշ աստղերը։ Նրանց պայծառության այդ անսովոր ուժեղացումը տեղի յեռ ունենում չնորդիլ նրանց ծավալի հանկարծակի մեծացման։ Աստղը կարծես թե «ուռչում» ե, մի քանի անգամ ծավալով մեծանում և այդ պատճառով ել մի քանի անգամ մեծանում ենրա ճառագայթող մակերեսը։ Հետազա պրոցեսում աստղը նորից սկսում է սեղմվել։ Ըստ վորում նա տաքանում է մինչև 60—70 հազար աստիճան, իսկ նրա խտությունը 1000 անգամ մեծանում է ջրի խտությունից։ Աստղի դրության այս արագ փոփոխությունները կապված են նրա զարգացման

ընդհանուր ընթացքի հետ և կախված են նրա կաղմության առանձնահատկություններից։ Այդ առանձնահատկությունների շնորհիվ նրա ուժերի ներքին հավասարակշռությունը խախտվում է և աստղը մերանգամից, կարծես թե թռիչքով, մի Փիզիկական վիճակից անցնում է մյուսին։

Ասողերի, այդ շիկացած գաղային վիթխարի գընդերի մեջ գործում են միաժամանակ յերկու հակառակ ուժեր՝ մի կողմից ճգողականության ուժը և մյուս կողմից լուսային, կամ ճառագայթային ճնշումը։ Առաջին ուժի ազդեցության տակ գաղի մասնիկները ծգառում են դեպի աստղի կենտրոնը։ Բայց լուսային ճնշումը նրանց հետ և մզում կենտրոնից դեպի դուրս։ Սովորաբար այդ յերկու ուժերը հավասարակշռում են միմյանց։ Բայց այդ հավասարակշռությունը կարող է լինել կայուն և անկայուն։ Առաջին դեպքում աստղի ներսում գոյանում է շատ ամուր մի միջուկ, վորքաղացած է չափազանց խիտ և շատ բարձր ջերմաստիճան ունեցող գաղերից։ Կայուն աստղերից մի քանիսը չափազանց խտացած են և շատ փոքր ծավալ ունեն։ Մրանք, այսպես կոչված սպիտակ քառկմերն են, վորոնց խտությունը յերեմն հասնում է 300000, այսինքն նրանց բաղադրիչնյութը ջրից ծանր է 300000 անգամ¹⁾ նրանց ներքին մասերը հսկայական ջերմություն ունեն, վոր հասնում է յերեմն միլիոնավոր աստիճանների։

Ուրիշ աստղեր աչքի յեն ընկնում անկայուն հավասարակշռությամբ։ Նրանք ներկայացնում են անցողիկ ձևեր։ Հենց այդ աստղերն են, վոր առանձնապես հետաքրքրական են մեզ համար այժմ, վորովհետև նրանք անսովոր արագությամբ, կարելի յեւ առել, թռիչքով անցնում են այլ ձևի և դառնում են զնորդ աստղեր։

¹⁾ Մրանց նյութի մեկ խորանարդ սմարտ քաշում է մատավորակեան 1/2 տոնն։

Խնչպե՞ս ե կատարվում այդ փոփոխությունը։
 Ժամանակակից աստղաբաշխությունը այսպես ե պատասխանում այդ հարցին։ Աստղը ժամանակի ընթացքում գծերանում» ե և նրա ներսից յելնող ճառագայթման հոսանքը թուլանում ե։ Հավասարակշռությունն այդ աստղի մեջ խախտվում ե և ձգողականությունն սկսում ե գործել ավելի ուժեղ։ Այդ ուժի ազդեցության տակ աստղի ատոմները, այսինքն նրա բաղադրիչ գազերի ամենամանը մասնիկները արագ ձգտում են դեպի կենտրոնը։ Բայց այդ արագընթաց անկումը դեպի կենտրոն նորից ուժեղացնում է ճառագայթացումը, և ճառագայթային եներդիայի այն հսկայական հոսանքները, վոր այժմ բղխում են աստղերից, մենք ընդունում ենք վորածես «նոր» աստղի բոցավառում։ Լույսի ճնշման անասելի ուժեղացման շնորհիվ աստղի մակերեսից դուրս են շղթավում դագերի հսկայական հոսանքներ, վոր կազմում են նրա ամբողջ մասսայի մոտավորապես $1/100000$ -ը։ Այդ գազերը առաջացնում են աստղի չուրջը մշուշային թաղանթ՝ վորը ժամանակի ընթացքում հետզհետեցվում ե։

Այսպիսով գոյություն ունեն առանձին տեսակի աստղեր, վոր գտնվում են անկայուն հավասարակշռություն վիճակում։ Յեթե այդ հավասարակշռությունը խախտվի, աստղի մեջ տեղի յե ունենում ժայթքում։ Նրանից զատվում են ճառագայթային եներդիայի ահագին քանակություններ և տեղի յե ունենում բռնկում։ Այդ ժամանակ աստղը չափազանց լայնանում, զուլչում» ե, ինչպես արտահայտվում են վորոշ աստղաբաշխներ։ Նրանց ծավալը տասնյակ և հարյուր հազար անգամ մեծանում ե։ Բռնկումները կարող են կրկնվել յերբեմն, բացառիկ դեպքերում, նույնիսկ մի քանի անգամ, վորի որինակ կարող ե ծառայել ներկայումս դիտվող Հերկուլեսի համաստեղության «նոր» աստղը։ Բայց վերջապես բռնկումները գաղարում են։ Աստղը սկսում ե խավարել, նորից

սեղմվում, աստանում և և վերջ և վերջո
գառնում և ռազիտակ թղուկք:

Մեզ, արեղակնային աշխարհի բնակիչներիս հա-
մար ծազում և ծայր աստիճան կարեւոր մի հարց: Կա-
րո՞ղ և արդյոք նման մի կատաստրոֆա յերբեքցե տե-
ղի ունենալ մեր Արևի հետ: Կարո՞ղ և նա ել անսպա-
սելի կերպով ժայթքել, տասնյակ հազար անգամ ավե-
լի ուժեղ բոցավառվել և դառնալ «նոր» աստղ: Կարելի
յէ յերեակայել, թե ինչ կկատարվեր այդ դեպքում:
Չե՞ վոր յեթե Արևը լուսավորվեր 10000 անգամ ավելի
ուժեղ, քան այժմ, յեթե նա փայլեր այնպես, ինչպես
10000 այդպիսի արեներ միասին, մեր Յերկրի վրա
մեծագույն կատաստրոֆա տեղի կունենար: Ծովերի և
գետերի ջրերը վայրկենապես կզուրըշխանային, ամե-
նամուր լեռնային տեսակները կհալվեյին և ամեն մի
կյանք Յերկրի վրա անմիջապես կվոչնչանար:

Սակայն գիտնականները յեկել են այն յեղբակա-
ցության, վոր մեր Արևին չի կարող սպառնալ այդպի-
սի վիճակ: «Նոր» աստղերի թեկնածուներ կարող են
լինել նրանցից միայն այնպիսիները, վորոնք գտնվում
են անկայուն հավասարակշռության վիճակում: Իսկ
մեր Արևը չի սպառկանում նման աստղերի թվին և հե-
տևապես յենթակա չի այդպիսի կատաստրոֆայի:
Այդպիսով Յերկրի բնակիչները կարող են հանդիսա-
տարել դեռ միլոնավոր տարիներ իրենց փոքրիկ մո-
լորակի վրա, չվախենալով Արևի հանկարծակի բռն-
կումից, մինչև վոր նա, վերջապես, դանդաղ և կա-
մաց մարելով, իր ջերմությունն այն աստիճան կկորց-
նի, վոր անհնար կղարձնի վորեւ կյանքի դրյություն
Յերկրի վրա:

19. ՄԵՐ ԱՐԵԴԱԿՆԵՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏ-
ՆԵՑԻ ԲԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ Ե ԿԱԶՄՈՒՄ ՄՅՈՒՄ ԱՍՑԱՎՈՒ
ԱԾԵԱՐԴԱՆԵՐԻ ՄԻՋԱՎԱ, ՄԻՋԱՎԱ ԸՆ.8 ԿԻԶ ԱՍՑՂԵՐ ԿԱՐԳԻ ԵՆ
ԱԽԵՆԵԱ, ԻՐԵՆԵ ՄՅՈՒԹՈՐԱԿՆԵՐԻ, ԻՆ.2 Ե ԱՍՅՈՒՄ ԱՅ.7 ՄՅՈ-
ՄԻ ԱՆ.9, ԻՐԱՅԻ ԳԻՑԱԿԱՎԱ ՃԻՆԸԸ, ՅԵԹԸ ՆՊՈՅՑԻՆԿ ԳԻ-
ՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵԱ ՈՒՐԻՇ ՄՅՈՒԹՈՐԱԿԱՎԱՆ ԱԾԵԱՐԴԱՆԵՐ,
ՆՐԱՆԴ ՄԵՐ ՀՅՈՒԱԴՅԱԿՆԵՐՈՎ, ՏԵՍԱՆԵԼ ՅԱՆ, ԳԻՑՈՒ-
ԹՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՄՅՈՒԹՈՐԱԿՆԵՐԻՑ Վ.92 ԽՈԼՈՐԻ Վ.93 ԿԵԱՆԿ
ԿԱՐԳ, Ե ԼԻՆԸ, ՎՈՐԴՈՎ ԺԱՄԱԿԱԿ ԳԻՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆ-
ՄԵՐ ՅԵՐԿԱՐԸ, ԻՆ.2 ՄԻՋԱՅԱՅՆԵՐՈՎ ԵՆ ԳԻՑԱԿԱՎԱՆՆԵՐԸ Վ.9-
ՐԵՑՈՒՄ ՅԵՐԿՐՈ ՀԱՍԱԿ, ՄՅՈՐԴՈՒ Ա-ԱՅԻՆ ՓՈՐՄԵՐԸ
ՅԵՐԿՐՈ ՅԵՎ, ՏԻԵԶԵՐԿՐՈ ԱՊԱՀԱՅՈՒՄԸ ԲԱՑԱՑՐԵՎՆԵՐԸ ՀԱ-
ՄԱՐ, ԻՆ.9ԿՍ Ե ՄՈՑԵՆ ՈՒՄ ԱՅ.7 ՀԱՐՑԻՆ ԳԻՑՈՒԹՅՈՒՆՆԵ

Սկզբում գոյություն ուներ այն կարծիքը, վոր
յերկնքում փոված աստղերից շատերը մեր Արևի նը-
ման կարող են ունենալ իրենց մոլորակային աշխարհը:
Բայց վերջին ժամանակներս դիտնականների կարծիքն
այդ հարցի մասին բոլորովին փոխվել ե:

Արեղակնային համակարգության առաջացման
մասին յեղած բոլոր նորագույն հիպոթեզները, վոր-
քան ել տարբերվեն նրանք միմյանցից, մի բանում
համամիտ են՝ վոր մոլորակների առաջացման համար
անհրաժեշտ ե արտաքին, կողմնակի ուժ: Այդպիսի
ուժ ե հանդիսանում այն մակընթացային ազդեցու-
թյունը, վոր արտահայտվում ե յերկու յերկնային
մարմինների մեջ չնորհիվ կոխաղարձ ձգողականու-
թյան: Մի մարմնի վրա մյուսի կողմից առաջացրած
մակընթացային ալիքն ստիպում ե առաջինին դուրս
ժայթել իր ներսից նյութի ահաղին հօսանք: Այդ
հօսանքը բաժանվում ե մի քանի մասերի, վորոնք սա-
ռելով, փոխվում են մոլորակների:

Վորպեսզի դա տեղի ունենա, ինչպես մենք դի-
տենք, հարկավոր ե, վոր յերկու յերկնային մարմին-
ներ մոտենան միմյանց: Բայց դիտնականների հաշ-
վումները ցույց են տալիս, վոր այդպիսի մերձեցում
աստղերի մեջ կարող ե պատահել շատ հազարյուս
դիպերում միայն: Այդ պատճառով ել վորեւ աստ-

Դից մոլորակների կարող են գոյանալ միայն բացառիկ դեպքերում:

Աստղաբաշխների դիտողությունները ցույց են տալիս նաև, վոր աստղերի հակայական քանակությունը, գոնե նրանց կեսը—կրկնակի յեն: Իսկ դա նշանակում է, վոր աստղերի մեծ մասը զարդանում ե վոչ այն ձանապարհով, ինչպես զարդացել ե մեր արեգակնային համակարգությունը: Յեկ սա ավելի ևս հաստատում ե այն, վոր մեր Արեւ շրջապատող մոլորակների ընտանիքը յերկնքում հաճախ պատահող յերևութիւնի կրկնություն չե, այլ ընդհակառակը, շատ հաղվադյունը բացառություն:

Աւա թե ինչ ե ասում այդ մասին անդիմացի դիտական Զինուը, վորի անունը մենք արդեն մի քանի անդամ հիշատակել ենք:

«Արեգակնային համակարգության ծնունդը տեղի յե ունեցել յերկու աստղերի մերձեցման հետևանքով: Յեթե այդ յերկրորդ աստղը պատահմամբ չմոտենար մեր՝ Արեւին, ապա չեր լինի և մեր արեգակնային համակարգությունը: Կարելի յեր յենթադրել, վոր մեր Արեւի գոյության միլիոնավոր տարիների ընթացքում նրան ժամանակ առ ժամանակ անպայման այնքան մոտեցած կլինեն զանազան աստղեր, վոր պոկեն նրանից մոլորակները: Հաշվումները ցույց են տալիս հակառակը: Նույնիսկ կյանքի տևողության այն ընթացքում, վոր հաշվում են միլիոնավոր տարիներ, հարյուր հազար աստղերից մոտավորապես միայն մեկը կարող ե շրջապատված լինել այդ ձեռվ առաջացած մոլորակներով: Ուստի, մենք պետք ե այցելելինք հարյուր հազար աստղ, մինչև վոր գտնելինք մեկ մոլորակային համակարգություն:

Մոլորակների առաջացման համար անհրաժեշտ ե միանգամայն բացառիկ մի դեպք, և մեր Արեւ իրեն ուղեկցող մոլորակների ամբողջ ընտանիքով ըստ իր քնութիւնի ներկայացնում ե ավելի շատ աստղաբաշխական մի կուրյող: Մեր Արեւ շրջապատող հազարավոր

միլիոն աստղերի մեջ համեստ հաշվումների համաձայն, գոյություն ունեն վոչ ավելի քան տասն հազար մոլորակային համակարգություններ։ Հաշվումները ցույց են տալիս, վոր հազարավոր միլիոն տարվա ընթացքում ծնվում են նրանցից հազիվ մեկը։

Բացի դրանից, Զինսն ասում է, վոր նույնիսկ այնտեղ, վորտեղ կան մի վորևե աստղի չուրջ պըտըտվող մոլորակներ, նրանք անմատչելի յենմեր տեսողության համար։ Մենք չենք կարողանում նրանց նշմարել նույնիսկ ամենաուժեղ ժամանակակից հեռադիտակներով։ «Բացի մեր արեգակնային համակարգությունից մենք չդիտենք մի ուրիշը, թեկուղ մի փոքր նրա նմանը։ Սրա պատճառը նրանում չե, վոր արդպիսի համակարգություն չկա, այլ նրանում, վոր յեթե նա լիներ ել, մենք չեյինք կարող տեսնել։ Մենք ստիպված ենք սպասել, վոր մեր հեռադիտակները դեռ շատ ու շատ ուժեղանան։ Միայն այն ժամանակ մենք կարող ենք հուսալ յերկնքում տեսնել մերի նման մի այլ համակարգություն։»

Պատկերացնենք, վոր մի վորևե աստղաբաշխ դիտում ե մեր արեգակնային համակարգությունը մեզնից ամենամոտ գտնվող աստղից¹)։

Արեւ այնտեղից նրան կթվար վորպես շատ պայծառ, առաջին մեծության մի աստղ։ Բայց վոչ մի մոլորակ նա այնտեղից չեր կարող նշմարել։ Անգամ Յուլիտերը, մեր մոլորակներից ամենից մեծը, շափազանց չնչին, թույլ աստղ կլիներ այդ ահազին տարածության համար և նրան հնարավոր չեր լինի տեսնել։ Բացի դրանից, այդ հեռավորությունից Յուլիտիսերը Արեւից շատ մոտ կերևար. այդ պատճառով նա կրկնակի անտեսանելի կլիներ, վորովհետեւ Արեւ, վորպես առաջին մեծության աստղ, կնսեմացներ նրալույսը։

¹ Մեզ ամենամոտ աստղը գտնվում է Զիամարք (Центавր) համատեղության մեջ։

Յեթև յերկնային անսահման տարածության մեջ
արդքան քիչ են պատահում աստղեր, վորոնց շուրջը
դպանում են մոլորակներ, ապա ավելի հազվադեպ ե
կյանքը նրանց վրա: Առանձին բարենպաստ պայման-
ներ են հարկավոր, վոր մի վորեւե մոլորակի վրա կա-
րողանա զարդանալ կյանքը: Անհրաժեշտ ե, վոր նրա
վրա լինի ող և ջուր. պետք ե վոր ջերմաստիճանը
նրա վրա չափազանց բարձր չլինի և անհրաժեշտ են
մի շարք այլ Փիղիկական և քիմիական պայմաններ:

Մեր արեգակնային համակարգության մոլորակ-
ներից, Յերկրից բացի, կյանք կարող ե գոյություն
ունենալ միայն Մարսի և Վեներայի վրա: Այսպի-
սով, յեթե մեր արեգակնային համակարգությունը
հաղվագյուտ բացառություն ե կազմում այլ աստղա-
յին աշխարհների մեջ, վոչ պակաս հազվագյուտ բա-
ցառություն ե մեր Յերկիրը իր կենդանի և բանական-
րնակիչներով միասին, մյուս մոլորակների մեջ:

Յերկրաբանները, այսինքն այն գիտնականները,
որոնք ուսումնասիրում են յերկրագնդի բաղադրու-
թյունն ու կազմությունը և այն փոփոխությունները,
վոր կատարվում են նրա վրա անսահման յերկար ժա-
մանակների ընթացքում, միանգամայն համաձայն են
աստղաբաշխների հետ նրանում, վոր մեր Յերկիրը
գոյություն ունի անսահման յերկար ժամանա-
կից: Տեսնենք, թե ինչ միջոցներով են նրանք, թե կուզ
մոտավորապես, վորոշում Յերկրի հասակը:

Մենք արդեն դիտենք, վոր յերբ Յերկիրն սկսել ե
սառչել, դրսի կողմից նրա մակերեսի վրա առաջացել
և ամուգ կեղեւ, վորը աստիճանաբար ավելի ու ավելի
սառելով, վերջապես միանգամայն պնդացել ե: Բացէ
դրանից, դիտենք նաև, թե ինչպես ե առաջացել սկըզբ-
նական ովկիանոսը և ինչպես Յերկրի կեղեւի սեղմվե-
լու, ծալքավորվելու հետևանքով յերեան են յեկել
առաջին մայր ցամաքները և նրանց վրա՝ սարերը:
Մենք տեսանք նաև, թե ինչպես ցամաքների վրայի
ջրերը բարձրություններից սկսելով իջնել դեպի ցած-

բավայրերը, խորացնում են իրենց հուները և իրենց հոսանքով լվանում են ափերը: Զանազան գլեռնատեսակների լվացված մասնիկները, որինակ ավազը, կավը գետի հոսանքի հետ զնում են հեռու, հեռու, մինչեվ վոր հասնում են ովկիանոսին և նստում նրա հատակում: Այդպես են առաջացել ջրաբեր կամ նստվածքային տեսակները, վոր տարբերվում են սկզբնական, այսպես կոչված, երարխային տեսակներից, վորոնք ստացվել են սկզբում, յերկրագնդի արտաքին շերտի սառելու հետևանքով:

Դիտնականներն իրենց հարց են ավել, թե վորքան ժամանակ ե պահանջվել, վորպեսզի գոյանան այդ նստվածքային տեսակները: Չե՞ վոր գետերն այժմու ել, ինչպես և միլիոնավոր տարիներ սրանից առաջ, լվանում են իրենց ափերը և լվացված մասնիկները տանում դեպի ծովերը: Դիտելով, թե վորքան ժամանակ ե պահանջվում ներկայումս վորոշ հաստության շերտ առաջանալու համար, դիտնականները հաշվում են, թե ի՞նչ ժամանակամիջոց ե պահանջվել, վորպեսզի գոյանա Յերկը կեղևի վրայի նստվածքային տեսակների ամբողջ խավը: Հաշվումները ցույց են տվել, վոր դրա համար անհրաժեշտ եր վոչ պակաս, քան 360 միլիոն տարի:

Հաշվումներ կատարվել են նաև ուրիշ ձևով: Հայտնի յե, վոր ծովի ջրի մեջ կա վորոշ քանակությամբ սեղանի աղ: Այդ աղը նույնպես գետերն են քերում ծով: Խմանալով, թե ինչ տոկոս աղ ե գտնը-վում ծովի ջրի մեջ, դիտնականները հաշվել են, թե ընդամենը վորքան աղ ե գտնվում բոլոր ծովերի մեջ: Հապա նրանք հաշվել են, թե մի տարում գետերը ինչ-քան աղ են փոխազբում ծովերը: Բաժանելով բոլոր ծովերի մեջ գտնվող աղի քանակը նրա այն քանակի վրա, վոր բերում են գետերը մեկ տարում, նրանք իմացել են, թե վորքան ժամանակ ե պահանջվել, վորպեսզի այդ ամբողջ աղը կուտակվի ծովերում: Հաշ-

վումը ցույց ե տվել, վոր դրա համար ել պահանջվել և վոչ պակաս քան 360 միլիոն տարի:

Բայց յերկրաբանները կարծում են, վոր այդ թիվը իրականից շատ ավելի փոքր ե: Բանը նըանումն ե, վոր ցամաքի վրայի բարձունքները ժամանակի ընթացքում շատ են մեծացել: Այժմ գետերն ավելի մեծ բարձրություններից են ցած վաղում, քան նախկին յերկրաբանական եպօխաներում: Այդ պատճառով նրանք այժմ ավելի յեռանդով են լվանում իրենց ավերը և ավելի շատ նստվածքներ են տանում գեպի ծովի: Դրան նպաստում ե և ինքը, մարդն իր կուլտուրական զործունեյությամբ: Ձքերը, վորոնք հոսում են այն բարձունքներից, վորտեղ տեղավորված են քաղաքներ, գործարաններ, ֆարմիկաններ կամ հանքեր, ավելի պղղոր են լինում, քան այն ջրերը, վոր հոսում են քաղաքակրթության կողմից փոփոխության չենթարկված վայրերից: Այսպիսով հին յերկրաբանական եպօխաներում լեռնային տեսակների լվացումը և նստվածքների կուտակումը ծովերի հատակում շատ ավելի դանդաղ եր կատարվում, քան ներկայումս: Ուստի Յերկրի կեղևի վրայի նստվածքային տեսակների առաջացման համար պահանջված ժամանակը իսկապես 360 միլիոն տարուց ավելի յերկար ե յեղել:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Յերկրի հասակի վորոշումը ըստ նստվածքային տեսակների կուտակման շատ հեռու յե ստույգ լինելուց: Ձքաբեր կամ նստվածքային կուտակումները ցույց են տալիս միայն, վոր նրանց գոյացման համար պահանջվել ե անսահման յերկար ժամանակ— մի քանի հարյուր միլիոն տարի: Սրանից ավելի ստույգ վորոշել, թե նըրանց գոյացման համար ինչ ժամանակամիջոց ե պահանջվել, հնարավոր չե: Շատ ավելի ճիշտ կարելի յե վորոշել Յերկրի հասակը, այսպես կոչված, ուղղիության հիման վրա: Բացատրենք, թե ինչ ե նշանակում այդ:

Անցած դարի վերջերին գիտնականները հայտնա-

բերեցին մի նոր քիմիական նյութ, վորը կոչեցին ոա-
դիում: Մաղիումը պատկանում է, այսպես կոչված,
ելեմնամների, կամ հասարակ ֆիմիական մարմինների
շարքին: Այդպիսի հասարակ մարմինների շարքին են
պատկանում, ի միջի այլոց, մի քանի գազեր, որի-
նակ՝ թթվածինը, ջրածինը, հելիումը, ածխածինը,
ազոտը, հապա զանազան մետաղներ, որինակ՝ վոսկին,
արծաթը, սնդիկը, յերկաթը, պղինձը, կապարը: Մե-
տաղների շարքին եւ պատկանում նաև ոադիումը:
Բայց ոադիումը շատ հազվադյուս նյութ է: Յերկրի
կեղևի մեջ նա գտնվում է չափազանց չնչին քանակու-
թյամբ, այդ պատճառով ել գիտնականները այդքան
յերկար ժամանակ չեն կարողացել հայտնաբերել նը-
րան:

Ելեմնատները, կամ հասարակ քիմիական մար-
մինները միանում են, տալով ավելի բարդ նյութեր,
վորոնցից կազմված են ինչպես կենդանի որդանիզմնե-
րը, այսպես և անկենդան բնությունը: Բայց մինչև
վերջին ժամանակներս գիտնականները համոզված ե-
յին, վոր այդ հասարակ մարմիններն արդեն չեն տար-
րալուծվում այլ նյութերի և չեն փոխվում այլ ելե-
մենտների: Ճիշտ է, միջնադարյան ալխիմիկներն այլ
կարծիք ունեյին և շատ ժամանակ և աշխատանք թա-
փեցին անվերջ փորձերի վրա, վորպեսզի ստանան ար-
հեստական վոսկի:

Եեվ ահա ոադիումի գյուտը ցույց տվեց, վոր
ալխիմիկները չկարողացան վոսկի ստանալ, բայց ի-
րենց հիմնական տեսակետներում նրանք իրավացի ե-
յին: Պարզվեց, վոր մի ելեմնտը կարող է փոխվել
մյուսի: Այդ հատկությունը, վորի շնորհիվ մի ելե-
մենտը փոխվում է մյուսի, կոչվում է ոադիուկտի-
վուրյուն, վորովհետեւ առաջին անգամ նա հայտնա-
բերվել է ոադիումի վրա: Ինքը ոադիումը ելեմնատ
լինելով, ստացվում է այլ ելեմնտների քայլքայումից,
վորոնք այդ պատճառով կոչվում են ոադիուկտիվ: Այդպիսի ոադիուկտիվ ելեմնտների թվին են պատ-
կանում իմիջի այլոց ուրան և տոքիում մետաղները:

Ինչպես մեկը, նույնպես ել մյուսը դրանցից ընդմիշտ անփոփոխ չեն մնում: Ժամանակի ընթացքում նրանք քայլայվում են և նրանցից ստացվում ե ռադիում: Ռադիումը իր հերթին նույնպես աստիճանաբար փոփոխության և յենթարկվում ե մի ամբողջ շարք ժիշտանկյալ պրոդուկտներ տալուց հետո, վերջապես, փոխվում ե մեզ լավ ծանոթ կապար մետաղի:

Բոլոր ռադիոակտիվ հեմետների մեջ, հետեւապես և ուրանի ու տորիումի մեջ կա հելիում: Ուրանի կամ տորիումի քայլայման ժամանակ հելիումը նրանցից հետզհետե անջատվում է, ըստ վորում այն անջատումը կատարվում է զարմանալի կանոնավոր ձևով: Գիտնականները հաշվել են, թե վորքան հելիում և անջատվում ուրանից վորոշ ժամանակվա ընթացքում, որինակ մի ժամում, մի որում, մի տարում: Պարզվել է, վոր մի դրամ ուրանից մեկ խորանարդ սանտիմետր հելիում անջատվելու համար պահանջվում է հակարական ժամանակամիջոց՝ 9 միլիոն տարի: Խմանալով այդ, հեշտությամբ կարելի յե վորոշել ամեն մի լեռնատեսակի հասակ, վոր պարունակում է իր մեջ ուրան: Յեթե մենք գտնենք ուրանի մի հանք, վորի մեջ ամեն մի դրամ ուրանին ընկնում է 20 խորանարդ սանտիմետր հելիում, դա կնշանակի, վոր նրա կուտակման համար պահանջվել է 180 միլ. տարի (9 միլ. բազմապատկած 20-ով): Յեթե մենք ունենք մի լեռնատեսակ, վորի մեջ մի դրամ ուրանին ընկնում է 50 խոր. սանտիմետր հելիում, դա նշանակում է, վոր այդ տեսակը գոյություն ունի 450 միլ. տարի (9 միլ. բազմապատկած 50-ով):

Այս ձևով բավական ճիշտ վորոշվում է ուրան պարունակող յերիտասարդ և շատ ամուր լեռնատեսակների հասակը: Բայց հին փխրում տեսակների մեջ հելիումի մի մասը ժամանակի ընթացքում հեշտությամբ կարող է ցրվել տարածության մեջ: Այդ պահանջառվ հին տեսակների հասակը վորոշելու համար ողտպում են մի ուրիշ, այսպես կոչված «կապարային»:

յեղանակով, այսինքն վորոշում են նրանց հասակը վոչ թե ըստ հելիումի, այլ նրանց մեջ պարունակվող կապարի քանակության համեմատ։ Ուրանից կապար առաջանալու արագությունը հայտնի յէ։ Յենթադրենք, վոր մենք կամենում ենք վորոշել մի վորեւ ուրանային տեսակի հասակ, վոր պարունակում ե վորոշ քանակությամբ ուրան և կապար։ Այդ դեպքում մենք կարող ենք հաշվել, վորքան պետք ե տեսեր ուրանի քայլայման պրոցեսը, վորպեսզի նրանից ստացվեր կապարի այն քանակը, վոր պարունակվում ե տվյալ տեսակի մեջ։ Գտած թիվը կարտահայտի այդ լեռնատեսակի հասակը։

Այդ միջոցով հաջողվել ե վորոշել, վոր Յերկրի կեղևի բոլոր նստվածքային տեսակների առաջացման համար հարկավոր ե յեղել ամենաքիչը 1500 միլ. տարի (1,5 միլիարդ)։ Ավելի հին ե ովկիանոսը, վորովհետեւ, իհարկե, նա պետք ե դոյլացած լիներ ավելի առաջ, քան նրա հատակում սկսել են կուտակվել նստվածքներ։ Դրան պետք ե ամենացնել նաև ավելի հին եպօխան, վոր պահանջմել ե յերկրագնդի արտոքուստ սառելու և հրաբխային տեսակներից Յերկրի սկզբնական կեղևի առաջացման համար։ Այդ բոլորը ի նկատի առնելով, գիտնականները յեկան այն յեղքառկացության, վոր առհասարակ մեր Յերկրը գոյություն ունի ամենաքիչը 2 միլիարդ տարի։

Դժվար ե միանգամից պատկերացնել, թե վորքան անսահման մեծ ե այդ թիվը։ Ինչ ե ներկայացնում մի վորեւ Հազարամյակ համեմատած 2 միլիարդ տարվա հետ։ Մարդը, գիտնականների կարծիքով, յերեւան ե յեկել Յերկրի վրա մոտ 300000 տարի սրանից առաջ։ Վորքան մեծ ե այդ ժամանակը մարդկային կյանքի համեմատությամբ և վորքան չնչին ե նա համեմատած Յերկրի հասակի հետ։ Սակայն նա ինքնին համենայն դեպքում հսկայական ե։ Նա ցույց ե տալիս, թե քանի տասնյակ հազարամյակներ են պահանջմել, վորպեսզի մարդն իր նախնական վայրենի վիճակից։

հասնի մինչև ներկայիս դիտակցական դոյլությանը:

Ալելի չնչին և թվում Յերկրի հասակի հետ համեմատած մարդկության կյանքի մեջ այն ժամանակաշրջանը, վոր մենք անվանում ենք պատմական:

Ամենահին պատմական տեղեկությունները, նույնիսկ աղոտ ամվանդությունները պահպանվել են միայն մեր դարաշրջանից մի քանի հազար տարի առաջ յեղած ժամանակների մասին: Իսկ ինչ վերաբերում են իսկական ստույդ դիտությանը, առաջ նա առաջացել երնդամենը մի 300 տարի սրանից առաջ:

Սակայն դեռ ամենահին դարերում մարդը ձգտում էր հասկանալ՝ վորքան և մեծ իրեն շրջապատող աշխարհը, ինչպես և առաջացել Յերկիրը, վորտեղ ինքը ապրում և և վորտեղից են առաջացել Արևը, Լուսինը, աստղերը: Բայց այդ դիտակից ձգտումը դեպի գիտությունն այն ժամանակ խառն եր միամիտ, հեքիաթային պատկերացումների հետ: Մի քանի ժողովուրդների մեջ վոյություն ուներ, որինակ, ամվանդություն այն մասին, վոր ամենից առաջ յեղել և մի հսկա ձու: Այդ ձուն ընկել և բաժանվել և մասերի: Դեղնուցից առաջացել և յերկինքը, իսկ սպիտակուցից՝ Յերկիրը: Այդպիսի հեքիաթային պատկերացումներ ունեյին և ուրիշ ժողովուրդներ: Վորքան ել միամիտ և յերեխայական սպարզամտությամբ լի յեն այս բացատրությունները, այնուամենայնիվ նրանք հետաքրքրական են վորպես մարդու առաջին փորձը՝ հասկանալու համար, թե ինչ ձևով ե կատարվել աշխարհում ամեն ինչ և ինչպես և առաջացել մեր Յերկիրը:

Աստվածաշնչում ասված և, վոր աշխարհը ստեղծվել և վեց որում: Բատ վորում թույլ և տված այնպիսի անհեթեթություն, վոր լույսը ստեղծված և յեղել Արևից առաջ:

Բայց աստվածաշնչումը ընդունված եր վորպես սրբազան գիրք և նրա մեջ գիշած ամեն բան պետք եր ընդունել վորպես արժանահավատ ճշմարտություն,

ինչքան ել անհեթեթ և) անհետեւողական բաներ լինեցին դրանք։ Յեվ շատ դիտական ճշմարտությունների մասին չեր կարելի բարձր խոսել, յեթե նրանք թեկուղ մի փոքր հակասում եյին աստվածաշնչի ասածներին։

Յերեք հարյուր տարի սրանից առաջ մարդիկ համոզված եյին, վոր Յերկիրը անշարժ կանգնած և տիեզերքի կենտրոնում և վոր Արեւը, Լուսինը և աստղերը պատսվում են նրա շուրջը 24 ժամում, վորպեսզի լուսավորեն նրան ցերեկը և գիշերը։ Ներկայումս արդեն ամեն մի դպրոցական դիտի, վոր Յերկիրը պըտըսվում է իր առանցքի շուրջը և պտույտ է կատարում Արեւի չորս բոլորը։ Իսկ յերեք հարյուր տարի սրանից առաջ իտալացի մեծ գիտնական Գալիլեյը, վորպեսզի կենդանի չայրվեր խարույկի վրա, ստիպված եր Հրապարակով Հրաժարվել իր ասուտ, Հերետիկոսական ուսմունքից Յերկրի շարժման մասին։

Յերեք դար սրանից առաջ մարդիկ հավատում եյին, վոր Յերկիրը աշխարհ է յեկել այն տեսքով, ինչ տեսք վոր նա ուներ իրենց ժամանակ և ինչպես մենք գիտենք նրան այժմ։ Բայց գիտությունը պարզեց մեզ համար, վոր Յերկիրն ունի իր ամբողջ պատմությունը։ Իր յերկար կյանքի ընթացքում նա շատ տարբեր փոփոխություններ է կրել և միլիոնավոր տարիներ են անցել, մինչև վոր Յերկիրը հասել է իր ներկա դրությանը։

Միայն 18-րդ դարի կեսերում գիտնականները լուրջ դրեցին այն հարցը, թե ինչպես և դոյացել մեր Յերկիրը։ Անցնելով նրա ներկա դրությունից այն փոփոխություններին, վոր կրել են նա իր գոյության միլիոնավոր տարիների ընթացքում և ավելի ու ավելի խորանալով նրա անցյալի մեջ, նրանք վերջ ի վերջո հասան նրա կյանքի այն սկզբնական շրջանին, յերբ Յերկիրը հանդիսանում եր Հրահեղուկ կամ գաղային մի գունդ։ Սրանից պարզ բղխում եր, վոր Յերկիրը մի ժամանակ յեղել է ինքնալուատու մարմին և միայն

Հետապայումն են նրա հրի տարերքը թաղնվել արաւա-
քինից գոյացած կեղեւի տակ:

Սրա հիման վրա դիտնականները ճիշտ յեղակա-
ցություն արեցին, վոր Յերկիրը և մյուս մոլորակնե-
րը ձնվել են Արեկի հրե նյութից: Նրանք բոլորը Արե-
կից պոկիուծ կտարներն են: Բայց ի՞նչ ուժ և պոկեց
նրանց Արեից և ստիպել պատվել նրա չուրջը: Ահա
այն դժվարին հարցը, վորը պիտի լուծեր դիտությու-
նը:

Վերջին հարյուր հիսուն աարվա ընթացքում մը-
շակվել են մի շաք դիտական հիպոթեզներ մեր մոլո-
րակային աշխարհի գոյացման մասին: Այդ հիպոթեզ-
ները հասարակ յննթադրություններ չեն յեղել. նրանք
հիմնված են յեղել դիտության ձեռք բերած ճշգրիտ
տվյալների վրա: Թվում եր, վոր ավյալ հիպոթեզը
լավ բացատրում և ճիշտ պատկերացում և տայիս,
թե ինչպես են աշխարհ յեկել Յերկիրը և արեղակնա-
յին համակարգության մյուս մոլորակները: Սակայն
ժամանակին անցնում եր և դիտությունն անում եր
նոր հայտաբերումներ, վորոնք չեյին դուդակցուում
նախկին հիպոթեզի հետ: Անհրաժեշտ եր լինում նրա
մեջ ուղղումներ կատարել, կամ միանգամայն դուրս
դցել վորպես սխալ հիպոթեզ և նրա տեղը դնել նո-
րը: Բայց ժամանակի ընթացքում այդ նոր հիպոթե-
զի մեջ նույնական նկատմամբ եյին սխալներ և նորից
պահանջ եր ծագում փոխարինել նրան նորով:

Սակայն դիտությունը այդ սխալներից չի նվաստա-
նում: Գիտությունը վոչ թե ամրող ճշմարտության
աիրումն և, այլ այդ ճշմարտության համբանական
վորոնումը: Մեր բոլոր դիտական իմացողություննե-
րը ձեռք են բերվում դիտության աշխատավորների
միացյալ ուժերով.— ինչում մեկը սխալվում է՝ ուղ-
ղում և մյուսը: Վորքան ավելի յև զարգանում դիտու-
թյունը, այնքան քիչ են սկատահում նրա մեջ սխալ-
ներ և այնքան ստույդ են նրա ձեռք բերած դիտելիք-
ները:

Վոչ վոք չի տեսել այն բոլորը, վոր յեղեւ և 2 մի-
լիարդ տարի սրանից առաջ, վոչ վոք չի տեսել, թե
ինչպես և առաջացել մեր Յերկիրը: Բայց այն բոլորի
ուսումնասիրությունները, վոր կատարվում են յեր-
կընքում, և գիտության նոր նվաճումները հնարավո-
րություն են տալիս մեզ ավելի ու ավելի խորանայ
մեր Յերկրի անցյալի մեջ և պատկերացնում են մեր
տոշե նրա ծնունդն ավելի ու ավելի ճշգրիտ ձևով:
Վնաս չունի, վոր գիտությունն այժմ չի կարող ճիշտ
ոլատասխան տալ այն հարցին, թե ինչպես և ծնվել
մեր Յերկիրը: Բայց տարեց տարի նա ավելի հաստատ
ու համարձակ բառերով ե խոսում այն մասին, թե
ինչպես կարող ելին առաջանալ մեր Յերկիրը և մեր ա-
րեգակնային համակարգության մյուս մոլորակները:

ԲՈՂԱՆԻԱՆԻ ԹԱՐԱԾՈՒՅՆ

1.

Կարմիր, զեղին և սպիտակ տառզեր: Արկանը և վեց: Ի՞նչ էն
տառզերը: Ինչո՞ւ յնն նրանք թված փոքրիկ կետեր: Վարդոն էն Շնու
նրանք Ալրկրից: Վարդոն մեն և Արեւ Ալրկրի Համեմատությունը: Առ-
զերի մեջ կոն տառիկ մեները, բայ մեր Արեւ 5

2.

Խշից էն կազմված մեր Արեւ և մյաւս տառզերը: Խշից և կախված
տառզերի զույգը: Կարմիր, զեղին և սպիտակ չիկացում: Առազերն ունեն
իրենց հասունք: Խնջուն ևն լինում տառզերը յերիսատարդ ժամանեկ և
մեջուն էն զատկում հասունացնեն և ծերություն չըջանեներում: Հակա-
ռազեր և բարեկ-տառզեր: Խնջունի տառզերի շարքին և զատկունում
մեր Արեւ և ինչ հասուն ունի նա: 9

3.

Անշարժ տառզեր: Բնինոց տառզեր: Դեղերով տառզեր կուժ ժայռակ-
ներ: 14

4.

Խնջում էն տարրերինում ժայռակների տառզերից: Լուսնի փուլերը և
վեճերայի փուլերը: Ի՞նչ լույսով են փայլում: Լուսնին և մյաւս ժայ-
ռակները: 17

5.

Ալրկրիրը, խնջուն և մյաւս ժայռակները, փայլում և յերկնային
տարբանաթյուն մեջ: 21

6.

Առազերը և ժայռակները: Ալրկրիրը մի ժամանեկ փոքրիկ տառզ էր:
Բոլոր ժայռակներն եւ յեղել են տառզեր 24

Յերկրի պատվելը առանցքի և Արեկ շուրջը: Մոլորակային որբաններ: Մոլորակների Արեկ շուրջը զանալու տեսչությունը: Արեսակներին համակարգություն

23

Հին սիալ պատկերացումները յերկեային լուսառուների շարժման մասին: Դիտառթյունը և յեկեղեցին միջին դարերում: Կողերնեխուը և Նրա ուսմունքը Յերկրի շարժման մասին: Գալիքեյը, վորովի Կողերնեխուը ուսմունքի պրազազանդիան: Գալիքեյի զարց և Նրա հրամարումը: Խորդան Բրուն: Գալիքեյի կատարած հնագիտակի գյուտը և Նրա պարագանեկան պյուսեր:

24

Կողերնեխուը ուսմունքը ետվարձում և հանազնում: Մոլորակների Արեկի շուրջը կատարած զարձի մեջ նկատվությունը: Դիտառականների կատարած առաջին փարձերը՝ բացառություն մեր արեսակներին համակարգություն ծագումը:

47

Ինչպես են ըստ Հազարայի առաջացել Յերկելը և արեսակներին համակարգություն մյուս մոլորակները:

53

Գերշելը և Հայելամբոր հնագիտակները: Ռեգտի և Նրա արրանցքների Հայտնագործումը վ. Գերշելի կողմից: Լուզիտանի ուսմունքին համազ Հայտնագործումներ:

60

Մշուշագնդանեներ և առաջային կույտեր: Վ. Գերշելի մշուշագնդանեների ուսումնասիրությունը: Մշուշագնդանեների առքերը մերը: Ինչպես Նրանց յերեւմ ելին Գերշելի հնագիտակով: Մշուշագնդանեների կոտը առաջերի Հետ:

65

Ինչ հորժիքի յեն ժամանակակից զիտնականները մշուշագնդանեների մասին: Մշուշագնդանեների թույլ լուսարձակումը: Փնտան մշուշագնդանեները: Ինչ ձեն են սահման Նրանց շարսնեկ արտացըն ուսումնած Հե-

ականքով: Աւրինային վերու ամբուժների առկանութային աշխատա: Բայ-

նը յառանձների վրա: Ինչպես էլ առաջնամեծ պարուրային մշաւչազանց

գանձները: Պարուրային մշաւչազանցաները վերպես առաջերի պարուրի-

հաները: Հարցազողի հանապարհը: Մեր առաջային, կամ զարակի համակարգությանը վերպես մի այլ, ամենի լայնամակարդ ամենաշքշի-

ճառը:

14.

Ինչ սիստեմ զան հաղողակ հիգիենիկ մեջ հասակա զբանականե-

րը: Մուշունի և Զեմքը ինի հիգիենիկ արեգակիային համակարգության

առաջընթաց մասին:

93

15.

Անգյիտացի զբանական թիւնի հիգիենիկ: Մեր Արեն առաջային և պա-

րարային մշաւչազանցաների մեջ: Նրա մերձնաւումը ուրիշ առաջերի հետ:

Վերջինիս մակարդացային ոզգացությանը, վերը սախոնի և Արենի բաց

թաղանձն նշութիւն հասանքին: Ինչպես էլ այդ հասանքներից մշաւրակիներ

զարցացը: Ինչպես էլ աշխարհ յեկել առարիք մալորակիները: Ինչպես էլ

առաջարի մալորակիների արբանյակիները:

101

16.

Ի՞նչ է ասխոնի Աւրիքին պատմել իր առանցքի շուրջը: Ինչ ձեւը և

ընկածում պատմաց հետուի զանդու: Ի՞նչպես և առաջային լուսինը:

Աւրիքի և Լուսի հասակա պատմաթյանը: Կրիկնիկ առաջեր:

103

17.

Աւրիքիրն իր գոյության առաջին յրիանում: Ինչ ապակա յէ սպասաւ

երան:

116

18.

Ինչպես էլ վասված Փոքր առաջերը: Ըստը առաջերի հասակառա-

թյանը հաւաք: Տիբու-Ռուզեյի առաջը: Վերջին ժամանակիների Փոքր

առաջերը: Ինչպես եյին առաջերում բացարութ Փոքր առաջերի բո-

ցավառումը: Զերկունին համառակաթյան Փոքր առաջը: Ինչ յեցր-

կացության յեկեն առաջարաշները Փոքր առաջերի բացավաճան բը-

նույթի և պատճառների մասին: Կարո՞ղ և արդյուք Արեն յերբեքն զա-

նու ըստը տապ:

121

149

Մեր արթզավետին համակարգությունը հազվագյուտ բացառություն է հազմուա մյուս առաջին աշխարհականի միջն։ Միայն լուս ո՞ւ առաջեր կարող ենին ունենալ իրենց մոլորակները։ Խել և առաջ այդ ժամանք անդ միացի գիտական քիմու։ Սեբած նույն իսկ գոյություն ունեն արիլ մոլորակային աշխարհական։ Նրանց մեր հանգիստականությունը տեսանելի չեն։ Դոյությունն ունեցող մոլորակներից վու բուրքի վրա կյանք կարող է լինել։ Վերջան ժամանակ գոյություն ունի մեր Սերէրը։ Խել միջազներուն և՛ պահանջները զորուամ Սերէրի հասուկը։ Մորգու տալիքն փորձերը Սերէրի և ամեներքի առաջացումը բացարկելու համար։ Խելցին և մատենաւ այդ հարցին զիսությունը։

134



Թարգմանիչ՝

Գ. Շահնշարունյան

Տեխ. խմբագիր՝

Ան. Գասպարյան

Մրագրի՝

Վ. Ավագյան

Վ.Յ. 2597 Հրատ. 5130

Պատճեր 56. Տիրած 2500

Հանձնվուած և արտադրություն 11.II.1940 թ.

Ստորագրվուած և տպագրութ. 20/X 1940 թ.

Հայպետրատի տպարան, Երևան, Հեռին 65

ԳԱԱ Համարակարգ Գիտ. Ծովագ.



FL0011967

